

2017

Կարիւն, Բուխարիւն



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՌԵԿԿՈՆ - 1927

9(47)

2-75:

99(47)
Զ-75

24 JAN 2006

2011-07

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՀԱՅԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ Գ. Ի. ԼԵՆԻՆԻ, Ն. ԲՈՒԽԱՐԻՆԻ
ՅԵՎ. Ի. ՍՏԱԼԻՆԻ

1003
(13487)

Կազմեց՝ ՏԱՇԿԱՐՈՎ

Խմբագրեց՝ ԲԲՈՑԻՆ

~~1472~~

1238



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎԵՂԱՆ - 1927

12 JUN 2013

26/2



ԴԵՊՈԶԻՏԱՆԵՐԸ

«Մենք կամ ամենայն արագությամբ ա-
ռաջ սուրալ: Պատմությունն այսպես է գրել
հարցը»:

«Սպառնացող կատարումը լեզվի ինչպես
նրա գեմ պայմանի» բնույթից:

Վ. Ի. ԼԵՆԻՆ, ՖԵԼԺՈՎ.,
հաս. XIV մ. 2, էջ 213, ուսուցիչ.

26-92

(Հյուսիսային մարզի խորհուրդների համագումարը, գործերը Պիտե-
րից գուրա հանելը, մոսկվացիների և մինսկեցիների յեղույթը և այլն):

Ապստամբութեան քաղաքական ղեկավարութեան համար կազմել
մի բյուրո հետեւյալ կազմով՝ Լենին, Զինովյեւ, Կամենեւ, Տրոցկի, Սը-
տալին, Սոկոլնիկով և Բուրնով:

II. ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԲԱՆԱԶԵՎՆ. ԸՆ-
ԴՈՒՆՎԱԾ 1917 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ

Ներկա չեն Կենտկոմի, Պետրոգրադի Կոմիտեյի (ՈՒԿ), Ռազմա-
կան կազմակերպութեան, (ՅՕ), արհմիութեանների Պետրոգրադի Պոր-
հրդի (ՍՇՍՐՍ), գործարկումների (ՓՅԿ), Պետրոգրադի Շրջանային
Կոմիտեյի (ՈՒԿ) անդամները և Հյուսիսային յերկաթուղիների ներ-
կայացուցիչները (Пред. Сев. ж.—п):

«Ժողովը լիովին վողջունում և և ամբողջապես պաշտպանում
Կենտկոմի *) բանաձևը, կոչ և անում բոլոր կազմակերպութեաննե-
րին և բոլոր բանվորներին ու զինվորներին համակողմանի և բւժգ-
նապես նախապատրաստել զինված ապստամբութեանը, պաշտպանել
Կենտկոմի կողմից այդ նպատակով ստեղծվելիք Կենտրոնը և հայա-
նում և, վոր լիովին համոզված և, վոր Կենտկոմն ու խորհուրդը ժա-
մանակին կմատնանշեն նպաստավոր մոմենտը և հարձակման նպա-
տակահարմար յեղանակները:

Ապստամբութեան կազմակերպչական ղեկավարութեան համար
Կենտկոմը կազմակերպում և Ռազմա-Հեղափոխական Կենտրոնը հե-
տեւյալ կազմով՝ Սվերդլով, Ստալին, Բուրնով, Ուրիցկի և Զերծինովսկի:
Այս Կենտրոնը մանում և հեղափոխական խորհուրդին Կոմիտեյի կող-
մի մեջ:»

Ի. Վ. ՍՏԱՆԻՆ

ԴԵՂԻՆՆԵՐԻ ԴԱՇԻՆԷ

Ռուսական հեղափոխութեանը մի ինչ վոր կղզիացած բան չի:
Նա սերտորեն կապված և Արևմուտքի հեղափոխական շարժման հետ:
Սվերդլին, նա մի մասն և բոլոր յերկրների պրոլետարների այն մեծ շարժ-
ման, վորը կոչված և խորտակելու համաշխարհային կապիտալիզմի
հիմքերը: Միանգամայն հասկանալի չէ, վոր մեր հեղափոխու-
թեան յուրաքանչյուր քայլը արձագանքող ալիք և բարձրացնում ա-

*) Այս ժողովում կարգացվել և Կենտկոմի հոկտեմբերի 10-ի բանաձևը:

բեմուտքում, նրա յուրաքանչյուր հաղթանակը,—համաշխարհային հե-
ղափոխական շարժման աշխուժացում և աճում, համախմբելով բոլոր
յերկրների բանվորներին՝ կապիտալիզմի դեմ պայքարելու համար:

Այս բանը չեն կարող չիմանալ արևմտա—յեվրոպական իմպե-
րիալիզմի ակուլաները Այս պատճառով նրանք վորոշել են մահա-
ցու պատերազմ հայտարարել ռուսական հեղափոխութեանը:

Դեռևս մեր հեղափոխութեան սկզբին անգլո-ֆրանսիական կա-
պիտալիստները արշավանք սկսեցին նրա դեմ: Նրանց որդաններ
«Times-ն ու Matin-ը» դեռևս այն ժամանակ նշավակում էին հեղա-
փոխական խորհուրդներն ու կոմիտեները, կոչ անելով ցրել դրանց:

Դրանից յերկու ամիս անց Շվեյցարիայում գումարած գաղտնի
կոնֆերենցիայում բոլոր յերկրների իմպերիալիստները մեկ անգամ
ևս դրին «ծավալվող հեղափոխութեան» դեմ պայքարելու միջոցների
հարցը իրենց հարվածներն ամենից առաջ ռուսական հեղափոխու-
թեան դեմ ուղղելով:

Այժմ նրանք աշխարհ գլոմի չեն անցնում: Այդ բանի պատըր-
վակ են բռնում Ռիպայի տակ կրած պարտութեանը: Ըստ վորում, ամ-
բողջ մեզքը զցելով զինվորների վրա, կոչ են անում ել ավելի ուժե-
ղացնել հակահեղափոխութեանը Ռուսաստանում:

Հսեցեք «Биржевые Вестности-ի» հեռագրերը:

Հեռագիր Պարիզից:

«Յերկրորդ բաճակի Գահաճը, կամ, ավելի ճիշտ, փախուսն ա-
ռաճ Գահաճաճաճի և Ռիպայի անկումը այստեղ ցավի, ցառճան
յեվ Գաղկաճի շղագայարումներ են առաջացնում:

«Matin-ը պնդում և, վոր այդ կատաստրոֆի հանցակիք ռուս
պացիֆիստները, ինչպես պարզվեց, Գաղկաճ ապառնուհ են, վոր-
եւաճ յեվ Գաղկաճ կայսի վաճ խոհրդաճառճերը, յեվ դեռ Գրաճցից
ել ավելի վճառակաճ:

Թերթը հայտարարում և, վոր չի հասկանում Բանվոր. և Զին-
վոր. Պատգամ. խորհրդի համառութեանը, վորը (խորհուրդը), հակա-
ռակ այնքան արագիկ առարկայական դասերի, շարունակում և պաշա-
պանել այնքան աճիերք հաստատութեանը, վորպիսիք են բաճա-
կայից կոմիտեները:»

Այսպես և գրում ֆրանսիական կապիտալիստների որդանը:

Այս ել ձեզ հեռագիր Լոնդոնից:

«Daily Chronicle»-ը գրում և. «Ամենից առաջ անհրաժեշտ և վե-
րականգնել զիսցիպլինան բանակում: Իրենց արագ և այնքան ծան-
րակշիռ հաղթանակով գերմանացիք պարտական են նույն այն պատ-
ճառներին, վորոնք թույլ էին տալիս նրանց գրավել Գալիցիան ու-

Իսկովինան, այն է—ռուս գործերի մեջ նկատվող հրամանների չեղ-
քարկվելու, դավաճանության փաստին»

Այսպես են ասում Անդրիայի խմբերիախոսները՝ «...փախուստ
առանց ճակատամարտի...» «Անհետհետ ընկած լինելու կոմիտեները...»
«Դիպլոմատիայի վերականգնում» (մահապատիժը քիչ են համարում!)...
«Դավաճանությունն ուսուցողական է»

Ահա թե ինչպիսի կոմպրոմիսներով են դիմավորում արշա-
նապետ լեզուով ուսուցողներին այդ վտակու պարկերը:

Յեւ տեղ՝ աղանատներին այն միահամուռ խոստովանությունից
հետո, վոր «բանակը, իսկ նահանջելով, ամբողջ ժամանակ ազնվաբար
կռվում է թշնամիների հետ», վոր «ճակատի ճեղքման շրջանում գործերն
առանց ընդլիմանարու սղնիսարար կատարում են իրենց հանձնարար-
ված խնդիրները»!!!

Բայց բանն այստեղ, իհարկե, միայն գինվորների հասցեյին ուղ-
ղած ստոր գրադարությունը ու հալածանքով չի սահմանափակվում:

Իսկ այն է, վոր գինվորներին գրադարելով, անպիտան-
կան կապիտալիստները ուզում են ողտազործել մեր անհաջողությունը
ճակատում՝ Ռուսաստանի հեղափոխական կազմակերպությունները
վերջնականապես վերացնելու, խմբերիախոսի գիկտատուրայի վերջ-
նական հաղթանակի համար:

Խնդրի էությունն այս է:

Յերբ Պուրիշկինն ու Միլյուկովը, կոկորդիլոսան արցունքներ
թափելով Ռեգայի անկման տոթիվ և գրադարելով գինվորներին,
միևնույն ժամանակ պարսավանք են ուղղում Պորտուգալիայի ու կո-
միտեների հասցեյին, —այդ նշանակում է, վոր նրանք ուրախ են, վոր
առիթ է ներկայանում պահանջելու հետագա խոստովանությունը՝ կալվա-
ծատերերի ու կապիտալիստների վերջնական հաղթանակի համար:

Յերբ Արևմուտքի խմբերիախոսները, բարբառելով Ռեգայի անկ-
ման պատճառով «ցավի ջրաբարձությունների» մասին և ամբողջ մեզքը
գցելով գինվորների վրա, միևնույն ժամանակ նշավակում են «անհե-
թեթ ընկած լինելու կոմիտեները», —այդ նշանակում է, վոր նրանք ու-
րախ են, վոր առիթ է ներկայանում ջախջախելու հեղափոխական
կազմակերպությունների վերջին ֆուգորները Ռուսաստանում:

Այս է և միայն այս հյուսիսային Ֆրոնտում մոտենող ուսուցող
գինվորների դեմ բարձրացրած ստի և գրադարություն միացյալ արշա-
վանքի քաղաքական խմբագրությունը:

Հայրենի և չեմբուկական խմբերիախոսների դաշինք՝ Ռեգայի
տակ մեր կրած ռազմական անհաջողությունները, գինվորներին զը-
րադարելու միջոցով, արշաւաքամով ուսուցողական հեղափոխության դեմ
ողտազործելու նպատակով — ահա այժմյան կացությունը:

Թող հիշեն այս բանը բանվորներն ու գինվորները:

Թող իմանան, վոր միայն Արևմուտքի բանվորների հետ գաշ-
նակցելով և միայն կապիտալիզմի հիմքերը Արևմուտքում խախտելով
է, վոր կարող ենք հուսալ, թե հեղափոխությունը կհաղթանակի Ռու-
սաստանում:

Այս բանը նրանք թող իմանան և թող գործադրեն իրենց բոլոր
ջանքերը, վորպեսզի խմբերիախոսների դեղին դաշինքին կարելի լի-
նի հակադրել բոլոր յերկրների հեղափոխական բանվորների ու գին-
վորների կարմիր դաշինքը:

(«Рабочий», № 1, 25 ոգոստ. (7 սեպտ.) 1917 թ., առաջնորդող,
անաստորագիր):

Ի. Վ. ՍՍՍԼԻՆ

ՄԵՆԲ ՊԱՅՆՋՈՒՄ ԵՆԲ

Անցքերը վաղում են: Մոսկվայի խորհրդակցությունից հետո —
Միգայի հանձնում և խոստովանությունների պահանջ: Ֆրոնտի գինվորների
դեմ բարձրացրած անհաջող հալածանքից հետո — պրոֆուկատորական
լուրեր «բալլիստների դավադրություն» մասին և խոստովանությունների
նոր պահանջ: Պրոֆուկատորական լուրերի մերկացումից հետո — Կարնի-
լովի բացահայտ լուրեր, վորը (Կարնիլովը) պահանջում է արձակել
ժամանակավոր կառավարությունը և գինվորական գիկտատուրա հա-
յադարար: Ըստ վորում Միլյուկովի կուսակցությունը, ժողովրդական
ազատություն կուսակցությունը, ինչպես հուլիսյան որերին, հեռանում
է միջնադարության կազմից, գրանով իսկ բացահայտ կերպով պաշտ-
պանելով Կարնիլովի հակահեղափոխական դավադրությունը:

Իբրեւ այս բոլորի արդյունք — Կարնիլովյան դնդերը արշավում են
Պետրոգրադի վրա՝ գինվորական գիկտատուրա հաստատելու նպատա-
կով, ժամանակավոր կառավարությունը պաշտոնանկ է անում Կարնի-
լովին, Կերենսկին հայտարարություն է անում կրիզիսի մասին, Կիշ-
կինը հեռանում է դավադրությանը մասնակից կազմերի կուսակ-
ցությունից, կազմվում է այսպես կոչված հեղափոխական Դիրեկտորիա:

Ուրեմն՝

Փաստ է, վոր «բալլիստյան դավադրությունը» հարկավոր էր հա-
կահեղափոխությանը նրա համար, վորպեսզի ճանապարհ բաց անի
Կարնիլովի առաջ, վորը Պետրոգրադի վրա չի արշավում իբր թե
«բալլիստներին ճնշելու» համար:

Փաստ է, վոր ամբողջ բուրժուական մամուլը, «Русская Воля»-ից

ու «Биржевка»-ից սկսած մինչև «Новое Время»-ն ու «Речь»-ը աջակցում էին Կարնիլովին, այդ որերին ուժգնապես լուրեր տարածելով «բալլիստների դավադրության» մասին:

Փաստ է, վոր Կարնիլովի ալժմյան յեկույթը միայն շարունակութունն է հակահեղափոխական հրամանատարութեան բարձր խաւերի հաշանի մեքենայութիւններին, վորոնք հուլիսին հանձնեցին Տարնոպոլը, իսկ ոգոստոսին Ռիգան նրա համար, վորպեսզի հակահեղափոխութեան «վերջնական» հաղթանակի նպատակով ոգոստոսին Ֆրոնտում յեղած անաշոյութիւնները:

Քաստ է, վոր, ինչպես պարզվեց, կաղեւնների կուսակցութեան ալժմ, ինչպես և հուլիսին, գտնվում է՝ Ֆրոնտում դավաճաններ և թիկունքում ամենաշարմիա հակահեղափոխականներ հանդիսացողների բանակում:

Մերկուսակցութեան իրավացի յեր, յերը պահանջում էր վճարական պաշար մղել հակահեղափոխութեան դեմ և ձերբակալել «մասնակից» անձանց. (Կարնիլին և ուրիշներին) դեռևս հուլիսի սկզբներին:

Հակահեղափոխութեան յերեկ չի սկսվել և վոչ և Կարնիլովի դավադրութեան հետեանքով: Նա սկսվել է առնվազն հունիսին, յերը կառավարութեան, հարձակման անցնելով Ֆրոնտում, սկսեց խառնութեանների քաղաքականութեան բանեցնել. յերը հակահեղափոխական զենեքալները, հանձնելով Տարնոպոլը և ամբողջ մեղքը զինվորների վրա գցելով, Ֆրոնտում մահապատիժ կիրառելու որենք հրատարակելովին, յերը կաղեւնները, սարսափի յենտարկելով միլիտարութեանը դեռևս հուլիսին և հենվելով դաշնակից կապիտալի վրա, հեղեմնիա ձեռք բերին ժամանակավոր կառավարութեան մեջ: Յերը, վերջապես, ԿԳԿ պարագլուխները, մենշևիկներն ու եսերները, կաղեւնների հետ իրենց կապերը խզելու և հուլիսի ցուցարարների հետ միանալու փոխարեն, իրենց զենքը բանվորների ու զինվորների դեմ դարձրին:

Սա փաստ է, վորը ծիծաղելի կլիներ ժխտել:

Կոալիցիոն կառավարութեան և Կարնիլովի կուսակցութեան միջև ալժմ տեղի ունեցող պաշարի մեջ հանդես են գալիս վոչ թե հեղափոխութեանն ու հակահեղափոխութեանը, այլ հակահեղափոխական քաղաքականութեան յերկու տարբեր մեթոդները, ըստ վորում Կարնիլովի կուսակցութեանը, հեղափոխութեան ամենաշարմիա թշնամին, կանգ չի առնում այն բանի առաջ, վորպեսզի, հանձնելով Ռիգան, արշավանք սկսե Պետրոգրադի դեմ՝ հին ռեժիմի վերականգնման նախապայմաններ նախապատրաստելու համար:

Բանվորներն ու զինվորները ձեռք կառնեն ամեն միջոց, վորպեսզի վճռական հակահարված հասցնեն Կարնիլովի հակահեղափոխական բանդաներին, յեթե նրանք հեղափոխական Պետրոգրադ մտնեն:

Բանվորներն ու զինվորները չեն թույլ տա սղծել Ռուսաստանի մաշքաքաղաքը հեղափոխութեան թշնամիների կեղտոտ ձեռքերով:

Նրանք իրենց կրծքով կպաշտպանեն հեղափոխութեան մարտական զորը:

Բայց նրանք կպաշտպանեն այդ զորը վոչ թե նրա համար, վորպեսզի մի դիկտատուրան, վոր խորթ եր նրանց իր զոգով, փոխարենն մեկ ուրիշ դիկտատուրայով, վոր պակաս խորթ չն իրենց, այլ նրա համար, վորպեսզի ճանապարհ բացեն ռուսական հեղափոխութեան լիակատար հաղթանակի համար:

Ալժմ, յերը ամբողջ յերկիրը խեղդվում է քաղքայման ու պատերազմի ճիրաններում, իսկ հակահեղափոխական ագոաֆները նրա հավաստի կործանումն են պատրաստում, հեղափոխութեանը պետք է իր մեջ գտնի ուժ և միջոցներ, վորոնք անհրաժեշտ են իրեն՝ կործանումից ու կաղմալուծումից փրկվելու համար:

Վոչ թե մի «կառավարող» խմբակը մշուսով փոխարինել և վոչ ևլ դիկտատուրա խաղալ է ալժմ մեղ հարկավոր, այլ բուրժուական հակահեղափոխութեան լիակատար վերացում և վճռական միջոցներ՝ ի շահս Ռուսաստանի ժողովուրդների մեծամասնութեան:

Այս նկատառումներով կուսակցուղիներ պահանջում են.

1) Անմիջապես հեռացնել հակահեղափոխական զենեքալներին թիկունքում և Ֆրոնտում, փոխարինելով նրանց զինվորների և սպաների ընտրյալներով, և առհասարակ վարից-վեր լիովին զեմոկրատականեցնել բանակը:

2) Վերականգնել հեղափոխական զինվորական կազմակերպութեանները, վորոնք միակն են, վոր կարող են գեմոկրատական դիսցիպլինա հաստատել բանակում:

3) Վերացնել բոլոր և ամեն տեսակի խտարցությունները. և այսպէս չին հերթին՝ մահապատիժը:

4) Բոլոր կարվածատիրական հողերն անմիջապես հանձնել գյուղացիական կոմիտեների կարգադրութեան, ամենաշքաւոր գյուղացիներին ինվենտարով ապահովելով:

5) Որենսդրական ճանապարհով սահմանել 8-ժամյա բանվորական որ և կազմակերպել զեմոկրատիկ վերահսկողութեան՝ ֆաբրիկաների, գործարանների և բանկերի նկատմամբ՝ բանվորների ներկայացուցիչների գերակշռութեամբ:

6) Լիովին զեմոկրատականացնել ֆինանսական տնտեսութեանը, առաջին հերթին — անխնա հարկի յենթարկել կապիտալներն ու գույքերը և գրավել խալտատակ շափերի հասնող ռազմական շահույթները:

7) Կազմակերպել այնպիսի ճիշտ փոխանակութեան քաղաք և

պլուզի միջև, վորպեսզի քաղաքն ստանա իրեն հարկավոր մթերքները, խակ գցուղն՝ իրեն անհրաժեշտ ապրանքը:

8) Անմիջապես հայտարարել Ռուսաստանի ժողովուրդների ինքնուրուշման իրավունքը:

9) Վերականգնել աղատությունները, զեկրետել դեմոկրատիկ հանրապետություն և անմիջապես հիմնադրել ժողով գումարել:

10) Վերացնել պազանի պալմանագրերը զաշնակիցների հետ և առաջարկել ընդհանուր դեմոկրատական հաշտության պալմաններ:

Կուսակցությունը հայտարարում է, վոր առանց այս պահանջների իրագործման անհնարին է հեղափոխության փրկությունը, վորը կես տարի չէ խեղդվում և պատերազմի և ընդհանուր քաջբալման հիւրաններում:

Կուսակցությունը հայտարարում է, վոր միակ ճանապարհը, վորն անհրաժեշտ է այդ պահանջների իրագործման համար, հետևյալն է. խղել կապերը կապիտալիստների հետ, լիովին վերացնել բուրժուական հակահեղափոխությունը և իշխանությունը չեղկրում առնել հեղափոխական բանվորների, զինվորների ու գյուղացիների ձեռքը:

Այս է միակ ճիշդը, վորը կարող է փրկել կրախից չեղկիրն ու հեղափոխությունը:

(«Рабочий», № 4, 28 ոգոստոսի. (10 սեպտեմբ.) 1917 թ., անստորագիր):

Ի. Վ. ՍՏՅՆԼԻՆ

ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՍ

(Կարեկիովգիւնայի մասին)

Բուրցեր նորերս գրել էր «Общее Дело»-ում, վոր «վոչ մի Կարնիլովյան դավադրություն չի չեղել», — «չեղել է միայն «պալմանագիր» Կարնիլովի և Կերենսկու կառավարության միջև՝ զինվորական զիկտատուրա սահմանելու նպատակով՝ բայլելիկներին ու Խորհուրդներն արմատախիլ անելու մասին: Ի հաստատումն իր այդ հայեցակետի, Բուրցեր ապում է «Общее Дело»-յի № 6-ում Կարնիլովի «բացատրությունը», բաղկացած մի շարք դեկլամենտներից, վորոնք տալիս են դավադրության պատմությունը: Բուրցեի այս ամբողջ ձեռնարկության ամենամեծավոր նպատակն է ստեղծել Կարնիլովի համար նպատաւ վոր մթնոլորտ և անկարելի դարձնել նրան գաղտի տալը: Մենք հեռու չենք Կարնիլովի բերած նյութերը սպառիչ ճանաչելու մտքից: Կար-

նիլովը, բացի այն, վոր պաշտպանում է իրեն դավաճանության մեջ մեղադրելուց, չի հիշատակում, նաև, վորոչ անձերի ու կազմակերպությունների անուններ, վորոնց մասը խառն է դավադրության մեջ և, ամենից առաջ, մի քանի դեսպանությունների կաշան ուղարկած ներկաշուցիչների մասին, վորոնք, վիաների ցուցմունքի համաձայն, խաղացել են աշնայի դեր, վորը հեռու չէ չեղկրորդական լինելուց: Հարկավոր է նշել նաև այն, վոր Կարնիլովի «բացատրությունը» անցել է Բուրցեի շալիոնական խմբադրության բովից, և Բուրցեր «բացատրություն» դուրս է գցել մի քանի, թերևս շատ եչական, տեղեր: Չընաչած դրան, «բացատրություն» այնուամենայնիվ ներկաշուցում է մեծ արժեք, վորպես դեկլամենտ: Յեվ մինչև վորայդ դեկլամենտին՝ չհակադրվեն վիաների հավասարակշիւ ցուցմունքներ, մենք այն նկատի կառնենք հատկապես իբրև դեկլամենտ: Այս պատճառով մենք անհրաժեշտ ենք համարում խոսել զրա մասին ընթերցողի հետ:

ՌՊԷԵ ԵՆ ՇՐԱՖԷ:

Ովքեր են նրանք, Կարնիլովի խորհրդատուներն ու ներշնչողները, վորոնց նա ամենից առաջ էր վստահանում իր դավադրական խոհերը:

«Յերկրի կացության հարցի և չեղկիրն ու բանակը վերջնական քաջբալումից փրկելու համար անհրաժեշտ ձեռնարկումների հարցի քննարկմանը, — ասում է Կարնիլովը, — յես ուղում եյի մասնակցության կանչել Մ. Ռոձյանկոյին, իշխան Գ. Լվովին և Պ. Միլեուովին, վորոնց հեռագրեր ուղարկեցի, խնդրելով ոգոստոսի 29-ից վոչ ուշ կաշան ժամանել»:

Սրանք են նրա խորհրդատուները՝ նույն ինքն Կարնիլովի խոստովանությամբ: Բայց սրանք բոլորը չեն: Խորհրդատուներից ու ներշնչողներից զատ կային նաև զլխավոր աշխատակիցներ, վորոնց վրա հույս էր դրել Կարնիլովը, վորոնց վրա նա վստահ էր և վորոնց հետ պատրաստվում էր կենսագործել իր դավադրությունը:

Լսեցեք.

«Ուրվագծվեց» ժողովրդական պաշտպանության խորհրդի կազմակերպման նախագիծը, վորպիսի խորհրդին պետք է մասնակցեին՝ գերագույն զորահրամանատարը, վորպես նախագահ, Կերենսկին, վորպես մինիստր — տեղակալ, Սավինկովը, զեներալ Ալեքսեևը, ծովապետ Կոլչակը և Ֆիրենկելոն: Պաշտպանության այս խորհուրդը պե՛տ է կենսագործել կոլլեկտիվ գիլյատուրան, վորով հետև միանձնյա զիկտատուրա հաստատելն անցանկալի չէր ճանաչվել: Այլ մինիստրական պոստերի համար նկատի էլին

առնվել Պ. Պ. Տախտամիշեր, Տրետյակովը, Պոկրովսկին, Իգնատևը, Ալագյինը, Պլեխանովը, Լվովը և Զավոյկոն»:

Այս է արժանահարգո դավադիրների սեղմ ընկերակցությունը, վորը ներշնչում էր Կարնիլովին և ներշնչվում նրանից, դադարագործությունն էր անում ժողովրդի թիկունքում և ծափահարում նրան Մուկվաչի խորհրդակցության ժամանակ: Միլյուկովը, վորպես ժողովրդական ազատության կուսակցության գլուխ, Ռոձյանկոն, վորպես հանրային գործիչների խորհրդի գլուխ, Տրեսյակովը, վորպես արդյունաբերողների գլուխ, Կերենսկին, վորպես պաշտպանողականների գլուխ՝ հսկաների կողմից, Պլեխանովը, վորպես պաշտպանողականների ուսուցիչ՝ մենչիկինների կողմից, Սլադկինը, վորպես Լոնդոնի մի անհայտ ֆիրմայի գործակալ, — ահա նրանք, Կարնիլովի շինարարի հույսն ու տավանը, հակահեղափոխության հույսն ու ներվերը:

Հուսանք, վոր պատմությունը նրանց չի մոռանա, իսկ ժամանակակիցներն ըստ արժանավունքի կգնահատեն:

* * *

Նրանց նպատակները

Նրանց նպատակները «պարզ են ու հասկանալի»՝ բարձրացնել բանակի ռազմունակությունը և «առողջացնել թիկունքը»՝ «Ռուսաստանը փրկելու» համար:

Բանակի ռազմունակությունը բարձրացնելու համար, — ասում է Կարնիլովը, —

«Յեա նչեցի, վոր անհրաժեշտ է անմիջապես վերակազմել մահապատժի որենքը՝ ռազմական գործողությունների թափառանքով: Իսկ թիկունքի առողջացման համար, — շարունակում է Կարնիլովը, —

«Յեա նչեցի, վոր անհրաժեշտ է տարածել մահապատժի ու ռազմա-հեղափոխական դատարանների որենքը նաև ներքին շրջանների վրա, յեղնելով այն բանից, վոր բանակի ռազմունակություն վերականգնման համար ձեռք առնվող վոչ մի միջոց չի տա ցանկալի արդյունքը, քանի բանակը կշարունակի, վորպես ռազմական լրացում, ստանալ բարոյալքված ռազմական, պատրաստությունն չստացած, պրոպագանդի լենթարկված զինվորների բանդաներ»:

Բայց այս բոլորը չէ: Կարնիլովի կարծիքով «Պատերազմի առաջադրած նպատակներին հասնելու համար»... անհրաժեշտ է ունենալ չեքեր բանակ՝ «խրամառներում, թիկունքում՝ բանվորական և

ապա չեքաթուղային»: Այլ խոտորված ասած՝ զինվորական գիտելիքնան իբր բոլոր հետևանքներով, «անհրաժեշտ է» տարածել պաշտպանության համար աշխատող գործարանների և չեքաթուղայինների վրա, տյախնքն «անհրաժեշտ է» դրանց ռազմականացնել:

Յեվ այսպես ուրեմն՝ մահապատժ—ձակատում, մահապատժ—թիկունքում, — գործարանների ու չեքաթուղայինների միջոցառում, չեքերի վերածումը ռազմական բանակատեղիի և, վորպես այդ ամենի պատկ, զինվորական զինատուրա Կարնիլովի նախագահությամբ, — ահա թե, ինչպես պարզվում է, վորպիսի նպատակներ էր հետապնդում դավադիրների ընկերակցությունը:

Այդ նպատակները շարադրված էին մի հատուկ «գեկուցման» մեջ, վորը հռչակ ստացավ զեռես մինչև Մասկվայի խորհրդակցությունը: Դրանց մենք հանդիպում ենք Կարնիլովի հեռագրերում և «Խոթագրում» «Կարնիլովի պահանջները» անվան տակ: Հայտնի էլին արդյոք այդ «պահանջները» Կերենսկու կառավարությունը:

— Անկասկած հայտնի էլին: Կերենսկու կառավարությունն արդյոք համաձայն էր Կարնիլովի կարծիքին:

— Հավանաբար, այո:

«Ստորագրելով բանակի ու թիկունքի առողջացման համար անհրաժեշտ ձեռնարկումների վերաբերյալ ընդհանուր բնույթի գեկուցումը, վոր արդեն ստորագրել էին Պ. Պ. Սավինկովն ու Ֆրյունենկոն, — ասում է Կարնիլովը, — լես գեկուցի այն ժամանակավոր կառավարության մասնավոր խորհուրդակցությունը, վորի կազմը հետևյալներն էին. Պ. Պ. Կերենսկի, Նեկրասով և Տերեչենկո: Զեկուցումը քննելուց հետո ինձ հայտարարվեց, վոր կառավարությունը համաձայն է իմ առաջարկած բոլոր ձեռնարկումներին, իսկ ինչ վերաբերվում է դրանց կենսագործմանը, դա կախված է կառավարական ձեռնարկումների թափից»:

Նույն այդ բանն է ասում և Սավինկովը, ոգոստոսի 24-ին հայտարարելով Կարնիլովին, վոր «ձեր պահանջները ժամանակավոր առավարությունը կրավարարի մոտ որերս»:

Կարնիլովի նպատակները արդյոք հայտնի էին ժողովրդական ազատության կուսակցությանը:

— Անկասկած հայտնի էլին:

Այդ կուսակցությունը համաձայն էր արդյոք Կարնիլովի կարծիքին:

— Հավանաբար, այո: Վորովհետև ժողովրդական կուսակցության կենտրոնական որդանն «Perl»-ը բացե իրաց հայտարարեց, վոր «միանգամայն համամիտ է գեներալ Կարնիլովի խղճարներին»:

Մեր կուսակցությունն իրավացի էր, յեր, յեր պնդում էր, վոր

ժողովրդական ազատության կուսակցությունը բուրժուական գիկտատորայի կուսակցություն է:

Մեր կուսակցությունն իրավացի չէր, չէր պնդում եր, միայն Կերենսկու կառավարությունը մի շիրմա չէ, քողարկելու համար այդ գիկտատորան:

Այժմ, չէր կարնիլովյանները առաջին հարվածից հետո նորից ուշքի չեն չեկել, իշխանության գլուխ կանգնած գաղաղները նորից են խոսում «բանակի ազդուականության բարձրացման» և «թիկունքի առողջացման» մասին: Բանվորներն ու գիկտորները պետք է հեշեն, վոր «բանակի ազդուականության բարձրացումն» ու «թիկունքի առողջացումը» նշանակում են մահապատժի վերականգնում թիկունքում և ֆրոնտում:

* *

Նրանց ուղին:

Նրանց ուղին նույնպես «սարյ և ու հասարակ», ինչպես և նրանց նպատակները: Դա հետևյալն է—արմատախիլ անկլալլելիզմը, ցրել խորհուրդները, Պետրոգրադը վերածել հատուկ զինվորական նահանգապետության, զինաթափել Կրոնշտադը: Մի խոսքով—ջախջախել հեղափոխությունը: Դրա համար հարկավորվեց 3-րդ հեծյալ կորպուսը: Դրա համար հարկավորվեց վայրենի զիվիզիան:

Ահա թե ինչ է ասում Սավինկովը, Կարնիլովի հետ միասին Պետերբուրգի զինվորական նահանգապետության սահմանները դժելու հարցը քննարկելուց հետո, զիմելով Կարնիլովին:

— «Այսպիսով, Լավր Գեորգիևիչ, ձեր պահանջները կրա-վարարվեն ժամանակավոր կառավարության կողմից մոտ որեւր, բայց միաժամանակ կառավարությունը վախենում է, վոր Պետրոգրադում կարող են ծագել լուրջ բարգուժություններ: Ձեզ, ի հարկե, հայտնի չէ, վոր մոտավորապես ոգոստոսի 28-ին կամ 29-ին Պետրոգրադում սպառվում է բալլչեիկների լուրջ լեյուզի: Ժամանակավոր կառավարության հավանությանն առաջարկած ձեր հրահանգների հրապարակումը, իհարկե, բալլչեիկների լեյուզիի համար ազդակ կհանդիսանա: Թեև մեր տրամադրության տակ բավականաչափ դուք կա, բայց նրա վրա մենք լիովին հույս դնել չենք կարող: Մանավանդ, վոր դեռ հայտնի չէ, թե ինչպես կվերաբերվի դեպի նոր որենքը Բանվոր. և Զինվոր. Պատգամավոր. Սորհուրդը: Վերջինն էլ կարող է կառավարության դեմ լինել, և այն ժամանակ մենք մեր զորքերի վրա հույս դնել չենք կարող: Ուստի խնդրում եմ ձեզ հրաման արձակեք, վորպեսզի

3-րդ հեծյալ կորպուսը ոգոստոսի վերջերին բերվի Պետրոգրադ և զրվի ժամանակավոր կառավարության տրամադրության տակ: Յեթե պատահի, վոր բալլչեիկներից բացի լեյուզիի զիմեն նաև Բանվոր. ու Զինվոր. Պատգամ. Սորհուրդի անդամները, մենք հարկավորված պետք է լինենք զործել նաև նրանց դեմ»:

Ընդամեն Սավինկովն ասում է, վոր զործությունները պետք է լինեն խիստ վճռական և անխնայ:

Դրան գնհերալ Կարնիլովը պատասխանում է, վոր «ինքն այլ ձևի զործություն չի լել հասկանում. չէր բալլչեիկների ու Բ. և Զ. Պ. Ս. լեյուզիի ահպի ունենա, այդ պիսին կճնշվի ամբողջ յետանդով»:

Այդ ձեռնարկումների անմիջական կատարման նպատակով 3-րդ հեծյալ կորպուսի և բնիկների զիվիզիայի պետ գնհերալ Կրնիլովին Կարնիլովը տալիս է «չերկու խնդիր»:

«1). Ինձնից (Կարնիլովից) կամ տեղում գ անմիջական կերպով բալլչեիկների լեյուզիի սկսման մասին տեղեկություններ ստանալու գնալում անմիջապես շարվելք ձեր կորպուսով Պետրոգրադի վրա, գրավեցեք քաղաքը, զինաթափեցեք Պետրոգրադի կալադորի՝ բալլչեիկների շարժմանը հարած զորամասերը, զինաթափ տրեք Պետրոգրադի բնակչությունը և ցրեք Սորհուրդ-դները:

«2) Այս խնդրի կատարումն» ավարտելուց հետո գնհերալ Կրնիլովը պետք է գատեր մի բրլոպալ հրետանիով և ուղարկեր Ուրանիենքում և, այնտեղ ժամանելով, պահանջեր Կրոնշտադի կալադորից, վոր զինաթափի բերդը և մայր ցամաք փոխադրվի:

Մինիստր-նախագահն ոգոստոսի 8-ին իր համաձայնություն-նը տվեց Կրոնշտադի բերդի զինաթափման և նրա կալադորը գուրս տանելու մասին. և ծովային զլխավոր շտաբի գեկուցումն այդ մասին, մինիստր-նախագահի մակագրության հետ միասին, ներկայացվեց գերագույն գորահրամանատարի շտաբիպետին՝ ծովա-կալ Մաքսիմովի հարակից նամակի հետ»:

Այս է գաղաղիներին սերտ ընկերակցության ուղին՝ ընդգնմ հեղափոխության և նրա նվաճումների:

Կերենսկու կառավարությունը վոչ միայն գիտեր այդ ամբողջ դժբախին ծրագիրը, այլև ինքն էլ մասնակցում էր նրա մշակմանը և գնհերալ Կարնիլովի հետ միասին պատրաստվում էր կենսագործել այն:

Սավինկովը, այն ժամանակ դեռևս ռազմական մինիստրության կառավարիչ, բացահայտ կերպով հայտարարել է այդ մասին, բոտ վո-

1003
(13487)

26-92



բուս այդ հայտարարութիւնը, վոր բոլորին և հայտնի, գեաւս վոչ վորքի կողմից չի հերքվել:

Ահա այդ հայտարարութիւնը.

«Յեւ իմ պարտքն եմ համարում պատմական ճշգրտութիւնը վերահանգնելու համար հայտարարել, վոր յես, մինիստր-նախագահի հանձնարարութեամբ, խնդրել եմ ձեզնից (Կարնիլովից) հեծյալ կորպուսը, զինվորական գրութեան կենսագործումը Պետրոգրադում ապահովելու և ժամանակավոր կառավարութեան գեմ ուղղ լած խռովութեան ամեն մի փորձ, վորտեղից ել վոր դա գալու լինի, ճնշելու համար»...

Կարծեմ պարզ է:

Կարնիլովի պլանը հայտնի՞ չեր արդոք կադետների կուսակցութեանը:

Անտարակույս հայտնի չեր:

Վորոքհեռե այդ կուսակցութեան կենտրոնական որդան «Речь» լրագիրը կարնիլովյան ապստամբութեան նախորդին ուժգնապես տարածում եր պրովոկատորական լուրեր «բայլշեիկյան ապստամբութեան» մասին, գրաճով իսկ բացելով ճանապարհը Կարնիլովի առաջ գեպի Պետրոգրադ և Կրոնշտադ:

Վորոքհեռե կադետների կուսակցութեան ճերկապացուցիչ պ. Մակլակովը «անձամբ» և մասնակցել, ինչպես այդ յերևում և Կարնիլովի «նոթագրից», Պետերբուրգ մտնելու պլանների մասին Սավինկովի և Կարնիլովի միջև մղվող բոլոր բանակցութիւններին: Վորքան մեղ հայտնի չե, Մակլակովն այն ժամանակ վոչ մի ոֆիցիալ պաշտոն չունէր ժամանակավոր կառավարութեանն առնթիւ կամ նրա մեջ, — ել իբրեւ ինչ կարող եր նա մասնակցել այդ բանակցութիւններին, յեթե վոչ իբրեւ իր կուսակցութեան ներկայացուցիչ:

Սրանք են փաստերը:

Մեր կուսակցութիւնն իրավացի չեր, յերբ պնդում եր, վոր Կենտրոնական կառավարութիւնը բուրժուական հակահեղափոխութեան կառավարութիւնն և, վոր հենված և կարնիլովշիւնայի վրա, և տարբերվում և վերջնից միայն վորոշ չափի «անվճռականութեամբ»:

Մեր կուսակցութիւնն իրավացի չեր, յերբ պնդում եր, վոր հակահեղափոխութեան գաղափարական և քաղաքական թելերի հանգույցը կադետների կուսակցութեան կենտրոնական կոմիտեյում եր:

Յեթե Պիտերի և Մագելլովի գաղափարների հակահեղափոխական պլանը չհաջողվեց, դրանում պետք և մեղադրել վոչ թե Կենտրոնական և Կարնիլովին կամ Միլյուկովին ու Սավինկովին, այլ հենց այն Խորհուրդներին, վորոնց պատրաստվում էին «ցրել» վերոհիշյալ անձնավորութիւնները և վորոնց զիմադրելու ուժ չունեցան:

Այժմ, յերբ կարնիլովիներն ուղքի յեն չկել, համաձայնողականների ոգնութեամբ գեպի իշխանութիւն սողակելով, Խորհուրդների գեմ պայքարելու հարցը նորից և հերթի գրվում: Բանվորները ու զինվորները պետք և հիշեն, վոր յեթե իրենք չպաշտպանեն Խորհուրդներին՝ նրանց պայքարում կարնիլովյանների կառավարութեան գեմ, ապա զինվորական զիկտատուրայի յերկաթե կրունկի տակ ընկնելու վտանգ և սպառնում նրանց:

Իմպերիալիստական բուրժուազիայի գիկսասուրա

Ինչ և «կոլեկտիվ զիկտատուրան», վորպիսին հաստատելու շուրջը համաձայնութեան ելին յեկել հեղափոխութեան գեմ գաղափարողներ Կարնիլովը ու Միլյուկովը, Ալադլինն ու Ֆիլոնենկոն, Կերենսկին ու իշխ. Լվովը, Ռոձյանկոն ու Սավինկովը: Ինչ քաղաքական ձև ելին ուղում տալ նրանք այդ զիկտատուրային:

Ինչ քաղաքական հաստատութիւններ ելին նրանք անհրաժեշտ համարում, վորոպեսզի կարողանան հաստատել և գործի գցել «կոլեկտիվ զիկտատուրան»:

Խոսքը տանք գովումներներին:

«Գեներալ Կարնիլովը հարցրեց Ֆիլոնենկոյից, արդոք նա չի գտնում, վոր ստեղծված ծանր դրութիւնից միակ յելք կարող և լինել զինվորական զիկտատուրա հայտարարելը:

Ֆիլոնենկոն պատասխանեց, վոր խորհելով զիկտատուրայի մասին ռեալ կերպով, ներկա պայմաններում, նա կարող և պատկերացնել այդ զիկտատուրան միայն հանձինս գեն. Կարնիլովի:

Միանձնյա զիկտատուրայի գեմ Ֆիլոնենկոն բերեց այսպիսի առարկութիւն՝ ինքը գեն. Կարնիլովը քաղաքական իրադրութեանը զոհացուցիչ չափով իրադել չե, այդ իսկ պատճառով նրա զիկտատուրայի որով կթագավորեր այնպիսի դրութիւն, վորին սովորաբար կամարիլյա անունն են տալիս: Դեմոկրատական և հանրապետական շրջանակները պետք և վոր գեմ լինեյին այդ բանին, հետեապես նաև միանձնյա զիկտատուրային:

ԳԵՆ. ԿԱՐՆԻՎՈՎ: Իսկ ինչ անել, յերբ կառավարութիւնը ձեռք չի առնում վոչ մի միջոց:

ՖԻԼՈՆԵՆԿՈ: Յեկքը կարող ենք գտնել զիկտատուրիա կադմելով: Կառավարութեան կազմից պետք և ջոկել փոքր ռազմական կաբինետ, վորի մեջ պետք և մտնեն բացառիկ կամքի ուժ ունեցող մարդիկ, ըստ վորում այդ կաբինետի կազմի մեջ, վորը

կարող է անվանվել «ժողովրդական պաշտպանության խորհուրդ» կամ վորեն այլ կերպ, — բանն անունը չէ, — պարտավորապես պետք է մասնակցեն՝ Կերենսկին, գեն. Կարնիլովը և Սավինկովը: Այս փոքր կարնիստը պետք է իր առաջնագույն խնդիրը դարձնի չեղկրի պաշտանությունը: Դիրեկտորիայի նախագիծն այս ձևով է, վոր պետք է ընդունվի կառավարության կողմից:

Կարնիլով. Դուք իրավացի չեք: Մենք ամեն ինչ և դիրեկտորիա և վորքան կարելի է շուտ...

(„Новое Время“).

Յե՛վ աչնունեան.

«Ուրվագծվեց «ժողովրդական պաշտպանության խորհուրդ» կազմակերպման նախագիծը, վորպիսի խորհուրդին պետք է մասնակցեն՝ Կերենսկին, վորպես մինիստր-անդակալ, պ. Սավինկովը, գեներալ Ալեքսեևը, ծովապետ Կոլչակը և պ. Ֆիրոնենկոն: Պաշտպանության այս խորհուրդը պետք է կենսագործեր կոլլեկտիվ գրկատառության, վորտիճեան միանձնյա գրկատառության հաստատելն անցանկալի չէր ճանաչվի»:

(„Общее Дело“).

Ուրեմն **գիրեկսորիան** — ահա այն քաղաքական ձևը, վոր պետք է ընդունեն Կարնիլով — Կերենսկու «կոլլեկտիվ գրկատառության»:

Այժմ պարզ է ամեն մեկի համար, վոր Կարնիլովյան անհաջող «խռովությունից» հետո գիրեկտորիա ստեղծելով, Կերենսկին այլ միջոցներով կենսագործում էր նույն այդ **կարնիլովյան գրկատառություն**:

Այժմ պարզ է ամեն մեկի համար, վոր, գիշերաչին հայտնի նիստում հոգաւ Կերենսկու գիրեկտորիայի արտահայտվելով, զառամյալ կենսագործելով համաձայնության քվե տվեց գեներալ Կարնիլովի հակահեղափոխական ծրագրին:

Այժմ պարզ է ամեն մեկի համար, վոր փրփուրը բերաններին պաշտպանելով Կերենսկու գիրեկտորիան, «Дело Народа»-յի իմաստունները, իրենք էլ այդ բանը չնկատելով, զավաճանում էին հեղափոխությանը՝ ի հաճույս բացահայտ և գաղտնի Կարնիլովյանների:

Մեր կուսակցությունն իրավացի չէր, չէր պնդում եր, վոր գիրեկտորիան հակահեղափոխության գրկատառության քողարկված ձևն է:

Բայց միայն գիրեկտորիա ունենալով «չառ հեռուն չես գնա»: Հակահեղափոխության վարպետները չէին կարող չհասկանալ, վոր «կառավարել» դեմոկրատիզմի պտուղը հաշակած չեղկիրը միմիայն գիրեկտորիայի միջոցով, առանց վորեն «գեմոկրատական» քողարկման — անկարելի է:

Դիրեկտորիայի տարազ հագած «կոլլեկտիվ գրկատառության» — այս արդեն ուրիշ բան է: Բայց ինչու մերկացնել այդ գիրեկտորիան: Կամ չի լինի քողարկել այն թեկուզ մի «նախապարլամենտով»: Թող ապրի և լեզվին զուտ տա «գեմոկրատիկ նախապարլամենտը», — միայն թե պետական պարատը գտնվի գիրեկտորիայի ձեռքին! Հայտնի չէ, վոր Կարնիլովի աղվակաա պ. Զավոլոն, Լոնդոնի անհայտ ֆիրմայի գործակալ պ. Ալագչինը և Միլլուկովի բարբկամ «ինքը» Կարնիլովը — առաջինն էին, վոր առաջ քաշեցին «նախապարլամենտի» նախագիծը, շիտեղով այն վորպես գիրեկտորիայի հենարան ու շիրմա, վորը պետք է «պատասխանատու» (կատակ չիմանաք!) լիներ այդ «նախապարլամենտի առաջ»:

Մերքր տանք դիտմենտին.

«Պնդելով գիրեկտորիայի ստեղծման վրա, գեն. Կարնիլովը և նրա շրջապատողները չէին պատկերացնում այն վորպես մի մարմին, վոր պատասխանատու չի լինելու չեղկրի առաջ»:

Մ. Մ. Ֆիրոնենկոն Ալագչինի առաջ քաշած նախագծի ամենահամոզված կողմնակիցներից մեկն էր, իսկ այդ նախագիծը վերաբերում էր մի ներկայացուցչական մարմնի, վորի առաջ կառավարությունն անպայման պետք է պատասխանատու լիներ մինչև հիմնադիր ժողովի գումարումը:

Ալագչինի կարծիքով այդ ներկայացուցչական մարմնի մեջ պետք է մտնեին 4-րդ պետական դուման (առանց աջ թևի և դումայի կողմից դուրս գցվաց նրա քոլոր անդործունյա անդամների), դումայի առաջին յերեք գումարումների ձախ տարրերը, Բանվոր. և Զինվոր. Պատգամ. Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի պատգամավորությունն (առանց կուսակցությունների ներկայացուցչության սահմանափակման) և 10—20 ամենատեղի ընկնող հեղափոխական գործիչներ, ինչպես, որինակ՝ Բրեշկո Բրեշկովսկայան, Կրոպոտկինը, Ֆիգաները և այլն, վորոնց ինքը ներկայացուցչական մարմինը պետք է հրավիրեր իր կազմի մեջ: Այսպիսով «նախապարլամենտի» զաղափարը առաջին անգամ ծագել է Ա. Ֆ. Արագչինի ուղեղում:

(„Новое Время“).

Այսպիսով «նախապարլամենտը» — ահա այն «ներկայացուցչական մարմինը», վորը պետք է կազմեր Կարնիլով — Կերենսկու «կոլլեկտիվ գրկատառության» «գեմոկրատիկ» հենարանը:

«Նախապարլամենտը», վորպես մի մարմին, վորի առաջ «պատասխանատու չէ» կառավարությունը մինչև հիմնադիր ժողովի «գումարումը», «նախապարլամենտ», վորը փոխարինելու չէ հիմնադիր ժողովին մինչև վերջինիս գումարումը, «նախապարլամենտ», վորը

փոխարինում է հիմնադիր ժողովին, յեթե վերջինիս գումարումը հետաձգվում է. «նախապարլամենտ», վորը տալիս է «իրավարանական» հիմունք (հրճվեցեք, իրավաբաններ!) հետաձգելու հիմնադիր ժողովի գումարումը. «նախապարլամենտ», վորպես հիմնադիր ժողովը վիժեց-
ճելու միջոց. — այս է հեղափոխության դեմ դավադրողների հակահեղափոխական «գեմոկրատիզմի» ամբողջ իմաստը:

Այժմ պարզ է չուրաքանչյուրի համար, վոր «ոսանկյիս» առաջվ յերկու որից հետո գումարվող կարնիլովյան «նախապարլամենտին», կերենսկին միայն ուրիշ միջոցներով իրագործում է հեղափոխության դեմ դավադրողների նույն այդ հակահեղափոխական պլանը:

Այժմ պարզ է չուրաքանչյուրի համար, վոր նախապարլամենտ կազմակերպելով և դրա համար մի շարք կեղծարքներ կատարելով, Ավքսենտներն ու Դաներն աշխատում էին բացահայտ և թաղանթառնել կարնիլովյանների համար և հեղափոխության ու նրա նվաճումների դեմ:

Այժմ պարզ է չուրաքանչյուրի համար, վոր հիմնադիր ժողովի մասին կոկորդ պատուելով և միևնույն ժամանակ ամբաստանելով «նախապարլամենտը», «Дело Народа»-ի իմաստուններն աշխատում էին հիմնադիր ժողովի վիժեցման համար:

Լիճել կարճիլովի առակերհեր — ահա այն բոլորը, ինչին բնական կամեցին «գեմոկրատական խորհրդակցության» «պատասխանատու» վայրախոսները — Մերեթեղներն ու Չերնոմիրեր, Ավքսենտներն ու Դաները:

* *

Առաջին լեզակացություն:

Վերը քննարկած գոկումենտներից չերևում է, վոր «կարնիլովի գործը» վոչ թե ժամանակավոր կառավարության դեմ բարձրացած «խռովություն» էր և վոչ էլ փառասեր գեներալի հասարակ «ազանտյուրա», այլ իսկական դավադրություն հեղափոխության դեմ, կազմակերպված և խորատես մտածված մի դավադրություն:

Դավադրության կազմակերպիչներն ու ներշնչողները սրանք էին. գեներալիտետի հակահեղափոխական մասը, կազմաների կուսակցության ներկայացուցիչները, Մոսկվայի «հանրային գործիչներին» ներկայացուցիչները, ժամանակավոր կառավարության «գաղանակի» («Посвященные») անդամները և սրանք արդեն վերջի տեղը չեյին բռնում! — վորոշ գեապանությունների վորոշ ներկայացուցիչներ (նրանց մասին կարնիլովի «նոթագիլը» լուծում է): Բոլոր նրանք, ովքեր Մոսկվայի խորհրդակցության նիստում «խանդավառություն» էին դիմավորում կարնիլովին, վորպես «Ռուսաստանի ճանաչված պարագլխի»:

«կարնիլովի դավադրությունը» իմպերիալիստական բուրժուազիայի դավադրություն է ընդդեմ Ռուսաստանի հեղափոխական դատակարգների, ընդդեմ պրոլետարիատի և գյուղացիության:

Դավադրության նպատակն է. ջախջախել հեղափոխությունը և հաստատել իմպերիալիստական բուրժուազիայի զիկտատուրան: Դավադիրների միջև կալին տարաձայնություններ, բայց մանր, քանակական տարաձայնություններ: Այդ տարաձայնություններն արտահայտություն են էին գտնում «կառավարական ձեռնարկների թափի» մեջ. կերենսկին ուղում էր գործել զգույշ և շրջահայաց, իսկ կարնիլովը գործում էր «առանց առ ձախ նաչելու»: Բայց հիմնականում նրանք բոլորն էլ միաբանում էին, վոր հարկավոր է՝ հաստատել իմպերիալիստական բուրժուազիայի զիկտատուրա՝ դերեկտորիայի «կոլլեկտիվ զիկտատուրայի» ձևով, վոր պետք է միամիտների խարելու համար բողարկված լինի «գեմոկրատիկ» նախապարլամենտով:

Վերն և իմպերիալիստական բուրժուազիայի զիկտատուրայի բրնորոշ զիծը:

Նախ և առաջ աչն, վոր այդ զիկտատուրան ռազմաշունչ և շահագործող փոքրամասնության գերիշխանությունն է՝ աշխատավոր և խաղաղության ծարավի մեծամասնության նկատմամբ: Կարգացեք կարնիլովի «նոթագիլը», աչքի անցրեք կառավարության անդամների հետ վարած «բանակցությունները». այնտեղ խոսվում է հեղափոխության ճնշման համար անհրաժեշտ միջոցների մասին, բուրժուական կարգերն ամրապնդելու և իմպերիալիստական պատերազմը շարունակելու մասին, բայց այնտեղ չկա և վոչ մի խոսք հոգ պահանջող գյուղացիների մասին, հաց պահանջող բանվորների մասին, խաղաղության ծարավի քաղաքացիների մեծամասնության մասին: Ավելին, «նոթագիլը» կառուցված է այն լենթագրության վրա, վոր մասսաներին անհրաժեշտ է պահել յերկաթե ձիւրաններում, իսկ իշխանության ղեկը պետք է գտնվի մի խումբ զիկտատուրների ձեռքին:

Յերկրորդ, իմպերիալիստական բուրժուազիայի զիկտատուրայի բրնորոշ զիծն աչն և, վոր իմպերիալիստական բուրժուազիայի զիկտատուրան գաղանի, բողարկված զիկտատուրա չէ, վոր նկատի ունի խարել մասսաներին: Կարդացեք «նոթագիլը» և դուք կհասկանաք, թե պ. պ. դավադիրներն ինչպիսի ջանադրությամբ էին աշխատում թաղանթառնել իրենց սե պլաններն ու գաղանի մեքենայությունները վոչ միայն մասսաներից, այլև իրենց պաշտոնակիցներից ու կուսակցական «բարեկամներից»: «Դեմոկրատիկ» նախապարլամենտի պլանը կազմված էր մասսաներին խարելու համար, վորովհետեւ ինչ գեմոկրատիզմի մասին կարող է խոսք լինել՝ թիկունքում և ֆրոնտում մա-

հապառիժ գոյութիւնն ունենալու զեպքում: Մասսաներին խաբելու համար եր պահպանված «Ռուսաստանի հանրապետութիւնը», վորովհետեւ ինչ ղեմովրատիւ մասին կարող ե խոսք լինել հինգ գիկտատորներին խմբակի անտահմանափակ իշխանութիւնն գոյութիւնն ունենալու զեպքում:

Վերջապէս, իմպերիալիստական բուրժուազիայի գիկտատուրայի բնորաւ զիծն աչն ե, վոր ալզ գիկտատուրան մի գիկտատուրա չե, վոր հենվում ե մասսաների նկատմամբ բռնութիւնն պործադրելու վրա: Այդպիսի գիկտատուրան չունի ե չի կարող ունենալ վոչ մի ուրիշ «վստահելի» հենարան, բացի սխտեմատիկ բռնութիւնը՝ մասսաների նկատմամբ: Մահապատիժ թիկունքում ե ֆրոնտում, գործարաններ ե լեքիաթուզիների միլիտարացում, զնդակահարութիւններ—ահա ալզ գիկտատուրայի զինապահեստը: «Նեմովրատիկ» խաբելութիւնն, վորն ամբաղնդվում ե բռնութիւնը: Բռնութիւնն, վոր քողարկվում ե «ղեմովրատիկ» խաբելութիւնը—ահա իմպերիալիստական բուրժուազիայի ալֆան ե ոմեգան:

Դավադիրներն ուղում եյին Ռուսաստանում հաստատել հենց այսպիսի գիկտատուրա:

*
*
*

Տերկուրդ յեգրակացութիւն

Մենք հետեւ յենք այն մտքից, վոր դավադրութիւնն պատճառ համարենք առանձին հերոսների չար կամեցողութիւնը: Մենք հետեւ յենք նաեւ այն մտքից, վոր դավադրութիւնը բաղադրենք նրա նախաձեռնողների իշխանատեւութիւնը: Հակահեգափոխական դավադրութիւնն արմատներն ալելի խորն են: Այդ պատճառները պետք ե փնտրել իմպերիալիստական պատերազմի պայմանների մեջ: Այդ պատճառները պետք ե փնտրել ալզ պատերազմի պահանջների մեջ: Հարձակման քաղաքականութիւնը ֆրոնտում, վոր ժամանակավոր կառավարութիւնը յուրացրեց հունիսին,—ահա թե վորտեղ պետք ե փնտրել հակահեգափոխականների գափադրութիւնը նախապատրաստող հիմքը: Ամենուրեք, բոլոր պատերազմեղ պետութիւններում, հարձակման քաղաքականութիւնը իմպերիալիստական պատերազմի մթնոլորտում առաջացրել ե՝ աղաւտութիւնների վերացման, պատերազմական գրութիւնն մացնելու, «լեքիաթիկ զիսցիպլինա» հաստատելու անհրաժեշտութիւնն, վորովհետեւ մաքսիմալ ազատութիւնների գալութիւնն զեպքում անկարելի չե մասսաներին անպատիժ կերպով քշել զեպի մի սպանդ, վոր աշխարհիս գիշատիչներն են հորինել: Ռուսաստանն ալս տեսակետից քացատութիւնն չեք կարող կազմել:

Հայրենի ե զաշնակից իմպերիալիստական վոհմակի ճնշման տակ հունիսին հաշտարարվում ե հարձակում ֆրոնտում: Զինվորները հրաժարվում են լուկյաչն հարձակման անցնել: Սկսվում ե գնդերի լուծումը: Պարզվում ե, վար ալզ միջոցը պիտանի միջոց չե: Այս պատճառով բանակը «կովի անընդունակ» ե ճանաչվում: Բանակի մարտունակութիւնը բարձրացնելու հպատակով կարնիլովը (ե վոչ միաչե կարնիլովը) պահանջում ե մահապատի ուրենք ֆրոնտի համար, նախապէս արգելելով զինվորների միախնդներն ու ժողովները: Զինվորներն ու բանվորները թիկունքում բողոքում են զրա դեմ, խրախուսելով զինվորներին խռովութիւնները թիկունքում: Ի պատասխան ալզ բանի՝ ճակատաչին գնեկարայներ բուրժուազիայի աջակցութեամբ պահանջում են տարածել մահապատի ուրենքը թիկունքում, ուղղակի անացնել գործարաններն ու լեքիաթուզիները: Դիկտատուրայի պլաննն ու դավադրութիւնն ալզ ձեռնարկութիւնի լուկ տրամարանական զարգացումն են: Այս ե կարնիլովի «նոթագրում» պատկերավոր ձեով շարադրված «լեքիաթիկ զիսցիպլինայի վերականգնման» ե հակահեգափոխութիւնն ծավալման համառոտ պատմութիւնը: Դավադրութիւնը նպատակ ուներ կազմակերպել ե ձեւովորել գոյութիւնն ունեցող հակահեգափոխութիւնը, տարածելով այն ամբողջ Ռուսաստանի վրա:

Քարական դումայի հունիսիւրեքյան զուրբերը լավ եյին իմանում, թե ինչ են անում, չեք հունիսի սկզբին պահանջում եյին անցնել անհապաղ «հարձակման», սերտ շփում ստեղծելով զաշնակիցների հետ: Նրանք, հակահեգափոխութիւնն ալզ փորձված գործարար մարդիկ, գիտեյին, վոր հարձակման քաղաքականութիւնը անխուսափելիորեն հակահեգափոխութիւնն ե առաջացնելու:

Մեր կուսակցութիւնն իրավացի չեք, չեքք այն ժամանակ խորհուրդների համագումարում արված իր հաշտարարութեամբ նախազգուշացնում եք, վոր հարձակումը ֆրոնտում մահացու վտանգ ե բապատում հեղափոխութեանը:

Պաշտպանողականութիւնն պարագլուխները, վոր մերժեցին մեր կուսակցութիւնն հաշտարարութիւնը, մի անգամ ես սպացուցեցին իրենց քաղաքական անհասունութիւնը ե գաղափորական կախումը իմպերիալիստական բուրժուազիայից:

Իսկ սրանից ինչ ե հետեւում:

Կա միայն մի չեղրակացութիւն: Մեր քննութիւնն առարկա գափադրութիւնը շարունակութիւնն ե իմպերիալիստական պատերազմի պահանջներից ե հարձակման քաղաքականութիւնից ծալած հակահեգափոխութիւնն: Քանի կա ալզ պատերազմը ու ալզ քաղաքականութիւնը—կլինի նաեւ հակահեգափոխական դավադրութիւնների վտանգը: Հեղափոխութիւնն ալզպիսի վտանգից տպահովելու համար հար-

կալուր և գաղարեցնել իմպերիալիստական պատերազմը, հարկավոր և չնչել հարձակման քաղաքականություն հնարավորությունը, հարկավոր և նվաճել գեմոկրատիկ հաշտություն:

*
*

Յերրորդ յեզրակացություն

Կարնիլովն ու նրա համախոհները ձերբակալված են: Կառավարություն հետաքննիչ հանձնաժողովը վարում է գործը «շտապ կարգով»: Ժամանակավոր կառավարությունը հանդես է գալիս իրրեկերազույն գաղափոր: Կարնիլովին և նրա «համախոհներին» տրված է «խոռոփարարներին» դեր: «Речь»-ի և «Новое Время»-ի հասարակությունը—Կարնիլովի պաշտպանների դեր: «Դատավարությունը հետաքրքրական է լինելու»—ասում են նորությունների սիրահարները: «Դատավարությունը կտա շատ կարեւոր մեղադրանքներ»,—խորթմաստ նկատում է «Дело Народа»-ն: Խռովությունն ուժ գեմ է: Ի հարկե, հեղափոխության գեմ: Իսկ ուր և նա, ուր և այդ հեղափոխությունը: Ի հարկե ժամանակավոր կառավարության մեջ, վորովհետեւ խռովությունը նրա գեմ է բարձրացված: Իսկ ումինքն է բաղկացած այդ հեղափոխության ղեկավար կազմը: «Անփոփոխելի» Կերենսկուց, կաղետների կուսակցությունների կազմացիաներից և մի անգլիացի սերից, վոր կանգնած է այդ ջենտլմենների թիկունքում:

Առաջին ձայն. «Բայց այդտեղ պակասում է Կարնիլովը»:

Յերկրորդ ձայն. «Կարնիլովը ի՞նչ գործ ունի այստեղ: Նրան հրամայված է մեղադրյալների աթոռին նստել»...:

Բայց, իջեցնենք վարագույրը: Կարնիլովը իրոք գաղափարություն էր կազմակերպել հեղափոխության գեմ: Բայց նա մենակ չէր: Նա ուներ իր հետևողները հանձինս Միլյուկովի և Ռոձյանկոյի, հանձինս Լվովի և Մակլակովի, հանձինս Ֆիլոնենկոյի և Նարոկովի: Նա ուներ իր աշխատակիցները հանձինս Կերենսկու և Սավինկովի, հանձինս Ալեքսեևի և Կալեդինի: Միթե հեքիաթ է այն, վոր այդ և դրանց նրման ջենտլմենները այժմ հանգիստ ու ազատ դրոսնում են և վաչ միայն գրոսնում են ազատ, այլև «կառավարում են» լերկիրը հենց «իրեն» Կարնիլովի սահմանադրության համաձայն: Վերջապես, Կարնիլովին աջակցում էր ուրա և անգլիական իմպերիալիստական բուրժուազիան, և հիմա հանուն դրանց շահերի լին լերկիրը կառավարում Կարնիլովի այդ բոլոր աշխատակիցները: Միթե պարզ չի, վոր միայն Կարնիլովին դատելը վոլորմելի և ծիծաղելի կոմեդիա չէ: Մյուս կողմից ել այս կա—ի՞նչպես դատի տաս իմպերիալիստական բուրժուազիան, հեղափոխության գեմ կազմված գաղափարության այդ ղեկավար

հանցապատրին: Արդարադատություն միստրություն մեջ գործող իմաստուն արհեստավորներ, — լուծեցեք այս խնդիրը:

Եյականն, ըստ յերեւելի, կոմեդիական գաղափար: Եյականն այն է, վոր կարնիլովյան յիւլյութից հետո, աղմուկ հանած ձերբակալություններից ու «խիստ» հետադուրությունից հետո իշխանությունը դարձյալ ամբողջապես և առանց մնացորդի կարնիլովյանների ձեռքին է «գտնվում»: Այն բանն, ինչի ձգտում էր հասնել Կարնիլովը գեմքի ուժով, աստիճանաբար, բայց անշեղորհ կենսագործում են իշխանությունը գլուխ անցած կարնիլովյանները, թեև այլ միջոցներով: Նույնիսկ կարնիլովյան «նախապարլամենտն» են իրականացրել:

Եյականն այն է, վոր հեղափոխության գեմ կազմակերպված գաղափարությունը հաջողությամբ «լիկվիդացիայի» յինթարկելուց հետո, մենք նորից ենք «ընկել» գաղափարների շտաբի իշխանության տակ: Նույն Կերենսկու և Տերեշենկոյի, կաղետների և «հանրային գործիչների» նույն ներկայացուցիչների, նույն անգլիացի սերերի և սերանման գեներալների իշխանության տակ: Պակասում է Կարնիլովը, բայց Կարնիլովից ինչո՞վ է վատ սեր Ալեքսեևը, առանց վորի չի լինում վոչ մի կարեւոր պետական գործ, և վորը պատրաստվում է, ինչպես պարզվում է, Յերկրակ Համաձայնության կոնֆերենցիայում ներկայացնել չգիտեմ Ռուսաստանը, թե Անգլիան:

Եյականն այն է, վոր այլևս գաղափարների այդ «կառավարությունը» չի կարելի տանել:

Եյականն այն է, վոր չի կարելի համառապ գաղափարների այդ «կառավարությունը», առանց հեղափոխությունը նոր գաղափարությունների մահացու վտանգի յինթարկելու ուսկի:

Այն, հարկավոր է գատի տալ և գատել հեղափոխության գեմ գաղափարողներին: Բայց վոչ թե կոմեդիական ու կեղծ գատ, այլ իսկական և ժողովրդական: Այդ գատի ելությունն այն է, վոր իշխանությունից զրկենք իմպերիալիստական բուրժուազիան, վորի շահերի համար է բրտնաթոր աշխատանք թափում գաղափարների այժմյան «կառավարությունը»: Այդ գատի ելությունն այն է՝ վոր իշխանությունը վարից վիր արմատապես գտենք կարնիլովյան տարրերից:

Վերը մենք ասեցինք, վոր առանց իմպերիալիստական պատերազմը վերջացնելու և գեմոկրատական հաշտություն ձեռք բերելու անկարելի չե ապահովել հեղափոխությունը հակահեղափոխական գաղափարներից: Բայց քանի իշխանության գլուխն է կանգնած այժմյան «կառավարությունը», գեմոկրատական հաշտության մասին յերազել անգամ չի կարելի: Այդպիսի հաշտություն ձեռք բերելու համար հարկավոր է «բառնալ» այդ իշխանությունը և «դնել» նոր իշխանություն:

Նրա համար հարկավոր է իշխանությունը հանձնել նոր հեղափո-

խաղան զատակարգերի—պրոլետարիատի և հեղափոխական գլու-
ղացիության ձեռքը: Դրա համար հարկավոր է իշխանությունը կենտրո-
նացնել մասսայական հեղափոխական կազմակերպությունների մեջ,
բանվորների, գինվորների և գյուղացիների պատգամավորների խոր-
հուրդները մեջ:

Այդ զատակարգերն ու այդ կազմակերպություններն էլին, և մի-
այն դրանք, վոր ազատեցին հեղափոխությունը դավադրությունից:
Նրանք են դարձյալ, վոր սպանովելու յեն հեղափոխության հաղթա-
նակը:

Հենց այն է լինելու իմպերիալիստական բուրժուազիայի և նրա
գործակալ—դավադրների հատը:

«Рабочий путь» № № 27, 28 և 30. 4 (17), 5 (18) և 7 (20) հոկ-
տեմբերի 1917 թ.: Կ. Ստալին ստորագրություն:

Ն. Ի. ՅՈՒՆԵՍԿԻՆ

ՀԱՌԱՂ

Ռուսական հեղափոխությունը կարծես թե կայանել է իր գար-
դացիան մեջ: Փոթորկալի շրջանից հետո յեկել է համեմատական
հանգստության շրջան: Սակայն այդ շարագուշակ լուծության մեջ ար-
դեն լսվում է նոր ձախառումների և նոր ընդհարումների աղմուկը:
Յեթե կանգ առնեցինք չեքեվուլյանների մակերեսի վրա, կարող կլինե-
լինք պնդել, վոր բոլոր կոնֆլիկտները հարթված են և բոլոր սուր
անկյունները ջնջված:

Յեվ իրոք. իշխանության գլուխ և կանգնած «գաղափարները»
կոալիցիոն մինիստրությունը, վորտեղ շաքարի օինգիկա-
տատները զարմ Տերեշչենկոյի կողքին նստած է նախկին քաղաքա-
կան տաժանակիր Ի. Գ. Ծերենթելին: Պ. Կերենսկին շրջագալում և
Ֆրոնտում և թիկունքում, և ամենուրեք նրան համբուրում են, որհնում
ու ձեռքերի վրա դուրս տանում: Մի խոսքով, ամեն ինչ այնպես է
կատարվում, ինչպես խրատական պիեսում. վորտեղ արատը պատմ-
վում է, իսկ առաքելությունը հաղթանակում:

Սակայն իրականում ժողովրդական մասսաների խորքում կա-
տարվում է անընդհատ խմորման պրոցես, վորը վաղ թե ուշ իր գո-
լությունն զգացնել կտա:

Նոր ժամանակավոր կառավարությունը, չնայած մենշևիկների և
ժողովրդականների նրա կազմի մեջ մտնելուն, փաստորեն շարունակում
է հնի քաղաքականությունը: Փաստորեն Ծերենթելին, Սկորելեն ու
Չերնովը խճճվում են այն ցտնցի մեջ, վոր լարել է նրանց համար

ռուսական իմպերիալիզմը: Յեվ արտաքին քաղաքականության առ-
դարիչում (պատերազմի և խաղաղության հարց), և ներքին քաղա-
քականության ասպարիզում (պաշար տնտեսական քայքայման և փե-
րանա սովի դեմ) «կոալիցիոն մինիստրությունը» գնում է նույն
տրորված կածանով, վորով Միլլակով-Կոնովալովի կառավարությունն
էր գնում:

Արտաքին քաղաքականության ասպարիզում մինիստրության
իմպերիալիստական մեծամասնությունն ակնհայտ կերպով քաշ է տա-
լիս իր չեռեկց իբր թե սոցիալիստական՝ փոքրամասնությունը: Մինչ-
դեռ Ծերենթելին ու Չերնովը համոզում են Ռուսաստանի հասարակու-
թյանը, վոր ամեն ինչ բարենպաստ վիճակում է, արտաքին գործերի
մինիստր Տերեշչենկոն ամբողջապես շարունակում է Միլլակովի քա-
ղաքականությունը, հայտարարելով «դաշնակիցներին», վոր «բոլոր
հին պարտավորությունները մնում են իրենց ուժի մեջ»: Պաղտնի
պաշմանադրերը վոչ միայն չեն հրապարակված, այլ և շարունակում
են մնալ այն հիմնական զսպանակը, վորն առաջ է շարժում հաժա-
խահալին սպանության գործը: Հենց նուրբա խաչական կառավա-
րությունը հանդիսավոր կերպով հայտարարեց Ալբանիայի անկախու-
թյունը Իտալիայի հովանավորության տակ, այսինքն Ալբանիայի
կցումը Իտալիային: Ազգերի «ինքնորոշման» առաջին ակտն արդեն
կատարված է. Իտալիան այդ անվան տակ արդեն կողոպտել է Բալ-
կանները: Կարող եք չեքեակալել, թե ինչ Վիսթաֆի կուեննան ավելի
խոշոր գեղատիչներն, ինչպես որինակ Անգլիան: Չնայած դրան, ռուս
բանվորներին և գյուղացիներին հարձակման են ուղարկում այն նպա-
տակով, վորպեսզի նպաստեն այդ կողոպուտին, վորովհետև չէ՞ վոր
հարկավոր է անխախտ պահել այն սրբազան պարտավորությունները,
վոր հանձն է առել Նիկալաչը՝ անգլիական, ֆրանսիական, յապոնա-
կան և այլ բանկիրների հանդեպ:

Այդ պարտավորություններն (պարտավորություններ բանկիր-
ների հանդեպ) այնքան սրբազան են համարվում, վոր ռուս կառա-
վարության Լոնդոնի ներկայացուցիչ պ. Նարոկովը նույնիսկ հարմար
համարեց հայտարարել, թե անհրաժեշտ է, վոր ռուս ժողովուրդը ձեռք
քաշի իր մի շարք ազատություններից՝ հանուն պատերազմի շարու-
նակման:

Այսպիսով մենք առաջիկա նման խաղաղության կառավարության
փոխարեն ունենք ակտիվ իմպերիալիստական քաղաքականության
կառավարություն, վորի մեջ փողհարի դերը խաղում է պ. Կերենսկին,
վորը վոգելեորում է և մղում դեպի հարձակում:

Ավելի լավ վիճակում չե նաև կոալիցիոն կառավարության ներ-
քին քաղաքականության խնդիրը: Մի շարք վճռական ձեռնարկում-

ների փոխարեն, վորոնց նպատակը կլինեիւն ճանարել կապիտալիստներին և կազմակերպել քաջքայլած ժողովրդական տնտեսութիւնը, կառավարութիւնը դիմում է հաղար ու մեկ հանձնաժողովների ստեղծման, իսկ ֆինանսների ասպարիզում—հին միջոցին՝ լաւնացնում է թղթադրամների նորանոր սարեր դուրս թողելու իրավունքը, իսկ այդ թղթադրամներն ավելի չեն արժեքազրկում առական առերին և սրում թանկութիւնը:

Մինչդեռ տնտեսական քայքայումն ընդունում է ավելի սպառնալից չափեր: Պակասում են՝ վառելանյութը, մետաղները, հացը: Տրանսպորտը վերջնականապես քայքայված է: Մի ձեռնարկութիւն մշտն Եկտեղից է փակվում: Կապիտալիստները գիտակցաբար ուժեղացնում են քայքայումը, մեղքը զցելով բանվորների և նրանց իբր թե չափազանց պահանջների վրա: Պետական գանձարանը ամենավորայի վիճակում է. ահաւի պետական պարտքերի բեռ և բոլորովին արժեքից ընկնող թղթադրամների թաղավորութիւն — ահա թե ինչ են ներկայացնում պետական ֆինանսները:

Գնալով ավելի չե պարզվում, վոր պատերազմի կողմնակից կառավարութիւնը չի կարող փրկել լերկերը՝ սպառնացող կործանումից: Վորովհետեւ պատերազմը հետզհետեւ ավելի ու ավելի պինդ է սեղմում ուս ժողովրդի վզին զցած ողը և բերում է սով ու լիակատար աղքատացում:

Այսպիսով նախապատրվատվում է իշխանութիւն անցումը բանվորների ու գինվորների ներկայացուցիչների ձեռքը: Դա—միակ ուժն է, վորը կարող է հանել լերկերն այն իսկապես վոր սոսկալի դրութիւնից, վորի մեջ նա գտնվում է:

Ինչքան հավանական է դառնում իշխանութիւն անցնելը պրոլետարների և գյուղի չքավորների ձեռքը. այնքան կատաղի չե դառնում բուրժուազիայի պաշտարը ձախ սոցիալիստական հոսանքի (բալլիստների) դեմ, վորը պարզ և վորոշակի պահանջում է կատարել այդ անցումը: Ամբողջ կապիտալիստական բուրժուազիան անցնում է այն դերքի, վոր առաջ բռնած էին սե հարչուրակային կալվածատերերը, իսկ ֆինանսական կապիտալի և իմպերիալիզմի շահերի քաղաքական արտահայտիչ կազմակերպիչները իրենց տակտիկայով և պաշտարի չեղանակներով սկսել են զարմանալիորեն նմանվել ուս ժողովրդի միութեան լուսահողի գործիչներին: Այսպիսի փոփոխութիւնն ավելի քան հասկանալի չէ: Առաջ խոսքը միայն քաղաքական կարգերի փոփոխմանն էր վերաբերվում: Այժմ խոսքն այն մասին է, վոր բանվորները, գյուղի չքավորութեան հետ միասին իշխանութիւնն իրենց ձեռքն առնելով, իրենց կոնտրոլի տակ զենն արդյունաբերութիւնը և կրճատեն կամ վերացնեն կապիտալիստների շահույթները: Զարմանալի չէ, վոր կա-

պիտալիստական սեփականատերերի դատակարգը մորիկից քայլի չէ յենթարկում իր բոլոր ուժերը: «Անարխիզմ» դեմ պայքարելու լողունգի անվան տակ բուրժուազիան պաշտար է կազմակերպում հեղափոխութեան դեմ: Հեղափոխութեան ընթացքը մեր իմպերիալիստ ազատամիտներին չպրտել է զեպի տմենաաջ թեք: Ահա թե ինչու չե ընդ կազմվել բուրժուազիայի բոլոր ֆրակցիաների միջև, վորն (բուրժուազիան) այժմ սեղմ շարքերով գնում է բանվոր գատակարգի դեմ:

Իշխանութեան համար մղվող պայքարը բուրժուազիայի և բանվոր գատակարգի միջև, վորոնցից առաջինը ուզում է այժմ ճնշել հեղափոխութիւնը և մղել պատերազմը մինչև «երա հաղթական վախճանը», իսկ յերկրորդը ուզում է վերջ դնել պատերազմին և կարգի գցել Ռուսաստանի թուլացած տնտեսութիւնը, — բարգաւաճում է նրանով, վոր մանր բուրժուազիան և մասամբ գյուղացիութիւնը քաշ են դալիս ֆինանսական կապիտալի լետից: Ինչ չափով վոր նրանց ներկայացուցիչները — մենշեկիներն ու ժողովրդականները — համաձայնութեան մեջ են մտնում Ռուսաստանի, իսկ կողմնակի ճանապարհով նաև դաշնակից յերկրների, իմպերիալիստների հետ, այդ չափով էլ դժվարանում է պրոլետարիատի պաշտարը: Սակայն հենց կյանքի փորձը հետզհետեւ ավելի ու ավելի չե քացում քաղաքի և գյուղի կիսապրոլետարական տարրերի աչքերը, և նրանք սկսում են հասկանալ, վոր ժողովրդների միջև խաղաղութիւն հաստատվելուց ու բուրժուազիայի դեմ պայքար մղելուց դուրս չկա փրկութիւն:

Այս պատճառով շարունակ աճում է դժվարութիւնը լերկի ներկա վիճակից. աճում է նաև ամբողջ իշխանութիւնը բանվորների ու գինվորների պատգամավորների խորհրդների ձեռքն անցնելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը:

Այդ անցումը պե՞տ է կատարվի: Բայց նոր իշխանութեանը ժառանգութիւն կմնա վերջնականապես քայքայված և ուժառուգ չեղած տնտեսութիւն, վորը շարունակում են քայքայել պատերազմի կողմնակիցները: Հաշտութեան կնքումով այս ամենին ժամանակավորապես կավելանա և այն քայքայումը, վորն, բոս չերեւելին, կառաջացնի միլիոնավոր բանակների փոխադրումը ֆրոնտից. բոլորին պետք է թիկունք տանել, իսկ վագոներ չկան. բոլորին պետք է կերակրել, իսկ կաթարաններում վոչինչ չկա. բոլորին պետք է տեղ գտնել և ալն, և ալն: Իսկ սրան կավելանա նաև փախտականների և աղամագերիների հոսանքը... մի խոսքով հսկայական են այն խնդիրները, վոր բաժին են ընկնելու Պորտուգալների իշխանութիւնը նրանց ձեռքն անցնելուց հետո:

Այս խնդիրները իրագործելուն հարկավոր է այժմանից պատրաստվել: Միայն պրոլետարիատի բոլոր ուժերի կազմակերպութիւնը

և կարող իրագործել այդ խնդիրը: Պետք է ծածկել ամբողջ չեղելի չհաղթարձօր գանազան կազմակերպությունների ցանցով. ամենաբեր պետք է կազմակերպվեն բանվորների, գինավորների, բառակցների և գլուզագլուխների պատգամավորների խորհուրդներ, քաղաքային դաժաներում պետք է կազմակերպվեն մեծամասնություն ունեցող ուժեր, բանվորական խմբակներ, բոլոր բանվորները պետք է կազմակերպվեն և կազմեն արհեստակցական միություններ. անհրաժեշտ են տեխնիկներին և բանկային ծառայողներին միություններ: Կարճ ասած, ամենաժեշտ է այն ամբողջ ապարատը, վորը կարող կլինի իր ձեռքն առնել լերկրի ամբողջ խոշոր արդյունաբերություն կոնտրոլի և կառավարության հսկայական, բարդ ու պատասխանատու աշխատանքը:

Վերացնել պատերազմը և արդյունավետ աշխատանքի դարձնել դաշդաններից ու գութաններից կտրված բնակչության միլիոնավոր անդամներին, — վոլնչացնել պետական պարտքը՝ այն վճարելուց հրաժարվելու միջոցով, — վերջապես խոշոր արդյունաբերության ու այդ արդյունաբերությունը ֆինանսավորվող բանկերի համար կազմակերպել բանվորական կոնտրոլ և կառավարչություն — այսպես և միայն այսպես կարող է լուծվել հարցը:

Բուրժուազիան ձգտում է հիմա խեղդել հեղափոխությունը: Պրոլետարիատը պետք է շարունակի այդ հեղափոխությունը: Բուրժուազիան հիմա ձգտում է անիշխանաբար կազմալուծել և կործանել լերկրի տնտեսությունը: Բանվոր դասակարգը պետք է կազմակերպի այդ տնտեսությունը: Բուրժուազիան ուզում է ելի մի քանի միլիոն կենդանի ու գեոափթիթ մարդկանց վերածել հոտած մսի շաղկերի: Պրոլետարներն ուզում են վերջ տալ այդ սպանդին: Բուրժուազիան հրապարակ է գալիս վորպես մահ և քայքայում բերող մի ուժ: Պրոլետարիատը, վորպես կենարար լեռանդի կրող, առաջ է գնում:

(«Ապարտակ», №2 — 1927 թ. ստորագրված է Ն. Բ.)

ԻՆՉՈՒ ՄԵՆԲ ՀԱԼԹԵՅԻՆԲ

«ՄԵՆԲ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՅԻՆԵՐԸ .. ԲԱՅԼԵՅԻՎԻԳՄԻ
հաղթանակի յերեք պայմանները.

1). ձեռնող մեծամասնություն՝ պրոլետարիատի մեջ.

2.) Համարյա կեսը՝ բանակում.

3). Ուժերի ճնշող գերակշռությունը վեճական մոմենտին վեճական կետերում, այն է մայրաքաղաքներում լեզ կենտրոնին մոտիկ գտնվող բանակների ժրոհներում.

Բայց այդ պայմանները կարող էինք չալ միայն ամենակարճալեզ լեզ անկայուն հաղթանակ, լերեք բայլեյվիկները չկարողանալին իրենց կողմը գրավել վոյ-պլուեհարական աշխատավորական մասսաների մեծամասնությունը, ճվանել գրանց իրենց կողմն ետեհներին ու այլ մանրբուրժուական կուսակցություններից: Գըլ-խավորը հենց այս է:

«Հիմնադիր ժողովի ընտրությունները և զրոլետարիատի դիկտատուրան» հոդվածից:

Վ. Ի. Լենին, Յերկ. ժող, հատ. ՄԿ, էջ 447,

Ռուս. հրատարակություն

ԻՆՉՈՒ ՀԱՂԹԵՅ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(Հատված «2-րդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմ. մեջ» հոդվածից):

Մեզ հեշտ եր սկսել, նախ, այն պատճառով, վոր ցարական միապետության XX դարի համար արտասովոր քաղաքական հետամնացությունն առաջ եր բերել մասսաների հեղափոխական գրոհի անսովոր ուժը: Յերբորդ, Ռուսաստանի հետամնացությունն ինքնորինակ կերպով հյուսել եր բուրժուազիայի դեմ պրոլետարական հեղափոխությունը կալվածատերերի դեմ կատարվող գյուղացիական հեղափոխության հետ: Մենք այդպես սկսեցինք 1917 թվի հոկտեմբերին, և մենք չենք հաղթանակի այն ժամանակ այնպես հեշտությունը, յեթե մենք չսկսեցինք դրանից: Մարքսը դեռ 1856 թվին մատնանշել ե, խոսելով Պրուսիայի մասին, պրոլետարական հեղափոխությունը գյուղացիական պատերազմի հետ ինքնորինակ կերպով միացնելու հնարավորությունը: Բայց չեք վիճենք 1905 թվականի սկզբից պաշտպանել են պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատիկ գիկտատուրայի գաղափարը: Յերբորդ, 1905 թվի հեղափոխությունը չափից դուրս շատ բան և արել բանվորների ու գյուղացիների մասսաների քաղաքական դաստիարակության համար, թե նրանց ավանգարդին սոցիալիզմի «վերջին խոսքին» Արևմուտքում՝ ծանոթացնելու իմաստով և թե մասսաների հեղափոխական գործողության իմաստով: Առանց այդպիսի «գլխավոր փորձի», ինչպես 1905 թվին եր, 1917 թվականի հեղափոխությունը, ինչպես բուրժուական փետրվարյանը, այնպես ե պրոլետարական հոկտեմբերյանը, անհնարին կլինեին: Չորրորդ, Ռուսաստանի աշխարհագրական պայմանները թույլատրել են նրան ավելի յերկար պահպանվել, քան մյուս յերկրները, առաջավոր կապիտալիստական յերկրների արտաքին գերակշռության դեմ: Հինգերորդ, պրոլետարիատի ինքնորինակ հարաբերությունը գյուղացիության նկատմամբ թեթևացրել ե բուրժուական հեղափոխությունից սոցիալիստա-

մանին անցնելը, հեշտացրել ե քաղաքի պրոլետարների սոցիալիզմը գյուղի աշխատավորների կիսապրոլետար, ամենաաղքատ շերտերի վրա: Վեցերորդ, գործադուլային կռվի յերկարատև դարձը և յեվրոպական մասսայական բանվորական շարժման վորձը՝ խոր ու արագ սաստկացող հեղափոխական սիտուացիայի միջոցին՝ հեշտացրել են պրոլետարական հեղափոխական կազմակերպության աջակիսի ինքնորինակ ձևի առաջացումը, ինչպիսին խորհուրդներն են:

Այս թվարկում, իհարկե, լրիվ չե: Բայց դրանով առաջիկա կարելի չե սահմանափակվել:

ՀԵՇՏ Ե ՍԿՍԵԼ-ԱՎԵԼԻ ԴԺՎԱՐ Ե ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՆԵԼ

Ռուսաստանը հեշտությունը կարող եր սկսել սոցիալիստական հեղափոխություն 1917 թվի կոնկրետ, պատմականորեն չափազանց որիզինալ դրություն մեջ, մինչ ռաուսակել այն և տանել մինչև վերջ Ռուսաստանն ավելի դժվարություն կարող ե, քան յեվրոպական յերկրները: Յեա դեռ 1918 թվի սկզբին մատնանշել եմ այս պարագայի վրա, և այնուհետև յերկու տարվա փորձը լիովին հաստատում ե այդ մտքի ճշտությունը: Այնպիսի սպեցիֆիկ պայմաններ, վորպիսին են—1) հնարավորություն միացնել խորհրդային հեղաշրջումը նրա շնորհիվ դադարելիք իմպերիալիստական պատերազմի վերջավորության հետ, պատերազմ, վոր անկարելի տանջանքներ պատճառեց բանվորներին ու գյուղացիներին. 2) հնարավորություն ոգտագործելու վորոշ ժամանակ յերկու հզոր իմպերիալիստական գիշատիչների խմբակցությունների միջև յեղած որհասական կռիվը, խմբակցությունների, վոր չեն կարող միանալ խորհրդային թշնամու դեմ. 3) հնարավորություն դիմանալու համեմատաբար յերկար ժամանակ քաղաքացիական պատերազմին, և այս մասամբ յերկրի չափազանց մեծության և հազորակցության վատ միջոցների հետևանքով. 4) նման բուրժուական-դեմոկրատական հեղափոխական խորունկ շարժման գոյությունը գյուղացիության մեջ, այնպես, վոր պրոլետարիատի կուսակցությունը վերցնում ե այդ հեղափոխական պահանջները գյուղացիական կուսակցությունից (սոցիալ-հեղափոխական կուսակցությունից, վոր իր մեծամասնությամբ խիստ հակառակորդ եր բայցևիդմին) կարողանում ե անմիջապես իրականացնել այդ պահանջները՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճման հետևանքով—այսպիսի սպեցիֆիկ պայմաններ Արևմտյան Յեվրոպայում այժմ չկան, և կրկնությունը այդպիսի կամ նման պայմաններին՝ այնքան ել հեշտ չե: Ահա թե ինչու իմիջի ալուց—հաշվի չառնելով դեռ ուրիշ պատճառներ—սկսել

սոցիալիստական հեղափոխություն Արևմտյան Յեկրոպայի համար-
ավելի դժվար է, քան մեզ համար:

Վ. Ի. Լենին «Չախություն մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» Պետ-
հրատ, Յերևան, 1926 թ. (հջ 46-47):

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՅԵՐԵԲ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Իսկ ինչպես կարող եր տեղի ունենալ այդպիսի հրաշք՝ ձայների-
քառորդն ունեցող բայլշևիկների հաղթանակը մանր-բուրժուական
դեմոկրատների դեմ, վորոնք ընթանում ելին բուրժուազիայի հետ
միացած (կոալիցիա) և նրա հետ միասին տիրում ելին ձայների $\frac{3}{4}$ -ին—
վորովհետև բայլշևիկնր բոլոր հակառակորդներին չերկու տարվա ըն-
թացքում ցույց տրված Անանտի, համաշխարհային ամենահզոր Ան-
տանտի ուղեությունից հետո,—հաղթանակի փաստը այժմ ժխտելն ուղ-
ղակի ծրծաղելի է:

Բանն ել հենց այդ է, վոր պարտություն կրածներն՝ նույն-
թվում || Ինտերնացիոնալի բոլոր կողմնակիցներն՝ կատաղի քաղաքա-
կան առեկտությունը չի թուլատրում նրանց մինչև անգամ դեռ բայլ-
շևիկների հաղթանակի պատճառների շատ հետաքրքրական պատմա-
կան ու քաղաքական խնդիրը: Բանն ել հենց այդ է, վոր այստեղ
«հրաշք» կա միայն գոհիկ մանր-բուրժուական դեմոկրատիայի տե-
սակետից, վորպիսի դեմոկրատիայի տղիտություն ու նախապաշարում-
ների վողջ խորությունը մերկացվում է այդ հարցով և նրան տրված
պատասխանով:

Դասակարգային կռվի և սոցիալիզմի տեսակետից, այդ տեսակե-
տից, վոր լքել է || Ինտերնացիոնալը, հարցը լուծվում է անվիճելի-
որեն:

Բայլշևիկները հաղթել են, ամենից առաջ, այն պատճառով, վոր
իրենց կողմն են ունեցել պրոլետարիատի վիթխարի մեծամասնությու-
նը, իսկ սրա մեջ ամենից գիտակից, յեռանդուն, հեղափոխական մա-
սը, այդ առաջավոր դասակարգի իսկական ավանգարդը:

Վերցնենք չերկու մայրաքաղաքը, Պետրոգրադն ու Մոսկվան:
Հիմնադիր ժողովին նրանք տվել են ընդամենը 1,765,1 հազար: Դրա-
նից ստացել են՝

ես-երները	.	.	.	.	218,0 հազար.
բայլշևիկները	.	.	.	.	837,0 »
կազետները	.	.	.	.	516,4 »

Վորքան ել իրենց սոցիալիստներ ու սոցիալ-դեմոկրատներ ան-
վանող մանր-բուրժուական դեմոկրատները (Չերնոֆները, Մարտովե-
րը, Կուլցկիները, Լոնգենները, Մակգոնայլդները և ընկ.) իրենց ճա-

կատները փշրեն «հավասարության», «ընդհանուր ձայնավության»,
«դեմոկրատիայի», «զուտ դեմոկրատիայի» կամ «հետևողական դեմո-
կրատիայի» աստվածուհիների առջև, դրանից չի չքանա քաղաքի և
գյուղի աճեալասարուքյան տնտեսական ու քաղաքական փաստը:
Դա—անխուսափելի փաստ է առհասարակ կապիտալիզմի որոք, մաս-
նավորապես կապիտալիզմից կոմունիզմին անցնելու միջոցին:

Քաղաքը չի կարող հավասար լինել գյուղին: Գյուղը չի կարող
հավասար լինել քաղաքին այդ դարաշրջանի պատմական պայմաննե-
րում: Քաղաքն անխուսափելիորեն **սաճում է իր հետեվից** գյուղը:
Գյուղն անխուսափելիորեն **գճում է քաղաքի հետեվից**: Խնդիրը միայն
այն է, թե «քաղաքային դասակարգերից» վոր դասակարգը կարող
կլինի իր հետևից տանել գյուղը, հաղթահարել այդ խնդիրը, և թե ինչ-
պիսի ձևեր կընդունեն քաղաքի այդ **դեկադուրությունը**:

1917 թվի նոյեմբերին բայլշևիկներն իրենց կողմն ունեյին պրո-
լետարիատի հսկա մեծամասնությունը: Պրոլետարիատի շրջանում
նրանց հետ մրցող կուսակցությունը՝ մենշևիկների կուսակցությունը՝
այդ ժամանակամիջոցում գլխովին ջարդված եր (9 միլիոն ձայն ընդ-
դեմ 1,4-ի, չեթե գումարենք 668 հազարը Անդրկովկասի 700—800
հազարի հետ): Յեվ, բացի դրանից, այդ կուսակցությունը ջարդված
էր տասն և հինգամյա կռվում (1903—1917), վորը **կոփել**, լուծալու-
րել, կազմակերպել էր պրոլետարիատի ավանգարդը, **ձուլելով** նրա-
նից իսկապես հեղափոխական ավանգարդ: Յեվ բացի այդ՝ առաջին
հեղափոխությունը, 1905 թվին, նախապատրաստել էր հետագա զար-
գացումը, **գործնականորեն** վորոշել էր չերկու կուսակցության փոխա-
րաբերությունը, ներկայացման գլխավոր փորձի դեր էր խաղացել
1917—1919 թվերի մեծ դեպքերի նկատմամբ:

|| Ինտերնացիոնալի իրենց «սոցիալիստներ» անվանող մանր-
բուրժուական դեմոկրատները սիրում են գլուխներն ազատել ամենա-
լուրջ պատմական խնդրից՝ պրոլետարիատի «միություն» ոգտի մասին
քաղցրիկ ֆրազներով: Այդ քաղցրիկ ֆրազների պատճառով նրանք
մոռանում են 1871—1914 թվերի բանվորական շարժման մեջ ուղղոր-
տյունիզմի կուտակման պատմական փաստը, մոռանում են (կամ չեն
ուզում) **խորհել** 1914 թ. ոգոստոսին ուղղորտյունիզմի սնանկության
պատճառների մասին, 1914—1917 թ. թ. միջազգային սոցիալիզմի
պատակտման պատճառների մասին:

Առանց պրոլետարիատի **հեղափոխական** մասի ամենալուրջ ու
բազմապիսի նախապատրաստության՝ ուղղորտյունիզմն արտաքսե-
լու և ճնշելու համար՝ անմոռություն է պրոլետարիատի գիկտատուրայի
մասին մտածելն իսկ: Ռուսական հեղափոխություն այդ դասը թող
փորագրեն իրենց բթերին «անկախ» գերմանական սոցիալ-դեմոկրա-

տիայի, ֆրանսիական սոցիալիզմի և այլ առաջնորդները, վորոնք ուզում են այժմ՝ ճարպկությամբ ոճիքներն ազատել՝ պրոլետարիատի ղեկավարության խոսքով ընդունելու միջոցով:

Այնուհետև: Բալչևիկներն իրենց կողմն ունեին վոչ միայն պրոլետարիատի մեծամասնությունը, վոչ միայն ուղղորդողները՝ դեմ չերկարատե ու համառ կռվում կռվված պրոլետարիատի հեղափոխական ավանգարդը: Նրանք ունեին, չեթե թալլատրելի չե ազմական տերմին գործածել, հզոր «հարվածային բոունցը»՝ մայրաքաղաքներում:

Վճռական վայրկյանին վճռական կետում ունենալ ուժերի ճնշող գերակշռություն, — ազմական հաջողությունների այդ «որենքը» քաղաքական հաջողության որենքն ե նույնպես, առանձնապես դասակարգերի այն գազազած, չեռուն կռվում, վորը կոչվում ե հեղափոխություն:

Մայրաքաղաքները կամ առհասարակ խոշորագույն առևտրա-արդյունաբերական կենտրոնները (մեզ մոտ Ռուսաստանում այդ հասկացողությունները գուցակցվում եին, բայց նրանք միշտ չեն գուցակցվում) մի նշանավոր չափով վճռում են ժողովրդի քաղաքական բախտը, — հասկանալի չե, այն պայմանով, վոր կենտրոններին աջակցեն տեղական, գյուղական բավականաչափ ուժեր, թեպես և դա լինեի վոչ անհապաղ աջակցություն:

Յերկու մայրաքաղաքում, Ռուսաստանի համար՝ գլխավորագույն առևտրա-արդյունաբերական յերկու կենտրոնում, բալչևիկներն ունեցել են ուժերի ճնշող, վճռական գերակշռություն: Մենք այստեղ ունեցել ենք զրեթե չորս աճգամ ավելին, քան ես-երները: Մենք այստեղ ունեցել ենք ավելի, քան կադեճեներն ու ես-երները միասին վեցրած: Մեր հակառակորդները, բացի դրանից, փշրված եին, վորովհետև կադետների «կոալիցիան» ես-երների ու մենշևիկների հետ (մենշևիկները Պետրոգրատում և Մոսկվայում ունեցան ձայների ընդամենը 3-ական տոկոս) աշխատավոր մասսաների շրջանում վերին աստիճանի վարկաբեկված եր: Այդ վայրկյանին խոսք անգամ չեի կարող լինել, մեր դեմ՝ ես-երների ու մենշևիկների կադետներով հանդերձ՝ իսկական միություն մասին*: Ինչպես հայտնի չե, 1917 թվի նոյեմբերին, մինչև անգամ ես-երների ու մենշևիկների առաջնորդները,

* Հետաքրքրական և նշել այն փաստը, վոր արտահայտված և նաև վերև բերված ավանքներով, թե պրոլետարիատի կուսակցությունն ուներ միություն և սերտություն, մինչդեռ մանր բուրժուազիայի կուսակցությունները — շատ մեծ ցած ու ցրվվություն:

(Ման. Ն. Լենինի):

վորոնք հարյուր անգամ ավելի մոտիկ եին կադետներին հետ բլով կադետներ գաղափարին, քան ես-երական ու մենշևիկայն բանվորներն ու գյուղացիները, մինչև անգամ այդ առաջնորդները մտածում եին (և սակարկում եին մեզ հետ) բալչևիկների հետ կոալիցիայի մեջ մտնելու առաջ կադեճեների:

1917 թվի հոկտեմբեր-նոյեմբերին մայրաքաղաքները մենք նվաճել եինք աճվրեպ, ունենալով ուժերի ճնշող գերակշռություն և ամենասուղիք քաղաքական նախապատրաստություն ինչպես բալչևիկյան «բանակներին» հավաքման, կենտրոնացման, փորձառություն, կռիվման իմաստով, այնպես և «թշնամու» «բանակներին» քաջքայման, ուժաթափման, բաժանման, դեմոքրալիզացիայի իմաստով:

Իսկ ունենալով հնարավորություն անվրեպ արագություն, վրձնական հարվածով նվաճելու յերկու մայրաքաղաքը, պետություն վողջ կապիտալիստական մեքենայի յերկու կենտրոնը (ինչպես տնտեսական, նույնպես և քաղաքական տնտեսական), մենք, չնայած բյուրոկրատիայի և «ինտելիգենցիայի» կատաղի ընդդիմադրությունը, սարտաժին և այլն, կարողացանք պետական իշխանության կենտրոնական ապարատի ողնությամբ աշխատավորական վոչպրոլետարական մասսաներին գործերով ապացուցել, թե պրոլետարիատը — նրանց միակ հուսալի դաշնակիցն ե, բարեկամը և դեկավարը:

Բայց նախ քան այդ ամենակարևոր խնդրին անցնելը — պրոլետարիատի վերաբերմունքի խնդիրը դեպի վոչպրոլետարական աշխատավորական մասսաները, — դեռ հարկավոր ե կանգ առնել ԲԱՃԱԿԻ վրա:

Բանակն իմպերիալիստական պատերազմի ժամանակ իր մեջ երծեղ ժողովրդական ուժերի վողջ ծաղիկը, և չեթե Լ Ինտերնացիոնալի ուղղորդողության առաջնորդները (վոչ միայն սոցիալ-շովինիստները, այսինքն ուղղակի «հայրենիքի պաշտպանություն» կողմն անցած Շայդեմաններն ու Ռենոդելները, այլև «կենտրոնականները») իրենց խոսքերով և իրենց գործերով ամբապնդել եին բանակի հպատակումն իմպերիալիստական ավազակների ղեկավարությունը ինչպես պերմանական, նույնպես և անգլո-ֆրանսիական խմբակցություններում, ապա իսկական պրոլետարական հեղափոխականները յերեք չեին մոռանում Մարքսի 1870 թվին առած խոսքը. «Բուրժուազիան կվարժեցնե պրոլետարիատին գենքին տիրելու»: «Հայրենիքի փրկություն» մասին իմպերիալիստական, այսինքն յերկուստեք կողմադաշնական պատերազմում կարող եյին խոսել միայն սոցիալիզմի ավստրոգերմանական և անգլո-ֆրանս-ուսական գավաճանները, իսկ պրոլետարական հեղափոխականները վողջ ուշադրություն ուղղում եին (սկած 1914 թվի ոգոստոսից) լանակի հեղափոխականացման վրա,

նրան ոգտագործելու ընդգեմ բուրժուազիայի իմպերիալիստական ավագակների, փոխելով իմպերիալիստական գիշատիչների յերկու իմակների միջև մղվող անարդար և կոդուպտիկական պատերազմը յուրաքանչյուր յերկրի պրոլետարների ու ճնշված աշխատավորական մասսաների արդարացի ու որինական պատերազմի ընդգեմ «իրենց» «ազգային» բուրժուազիայի:

Սոցիալիզմի դավաճանները 1914—1917 թվերին չեյիճ ցախապատկաները նրանց ոգտագործելու համար ընդգեմ յուրաքանչյուր ազգի իմպերիալիստական կառավարութուններին:

Բալլեիկները նախապատրաստել էյին այդ իրենց վողջ պրոպագանդով, ագիտացիայով, անխեղալ կազմակերպչական աշխատանքով 1914 թվի ոգոստոսից: Իհարկե, սոցիալիզմի դավաճանները, բոլոր ազգերի կառուցիկներն ու Շաչեմանները, այդ առիթով ոճիր էյին ազատում՝ բալլեիկյան ագիտացիայով բանակը Բալլեիկյան մասիճ ֆրազներով, բայց մենք պարծեցում եճեճ նրանով, վոր կատարել ենք մեր պարտքը, քալքայելով ամենահոգր դասակարգային թշնամուն, խլելով ճրաճից բանվորների և գյուղացիների զինված մասսաները՝ շահագործողների դեմ կովելու համար:

Մեր աշխատանքի հետևանքները յերևան յեկան, իմիջի ալլոց, չիմաղիր ժողովի ընտրութուններին 1917 թ. նոյեմբերի ձայնավության ժամանակ, վորին (ձայնավությանը) Ռուսաստանում մասնակցում էր և բանակը:

Ահա այդ ձայնավության գլխավոր արդյունքները, ինչպես նրանց առաջ և բերում ն. վ. Սվյատիցկին:

Հիմնադիր Ժողովի 1817 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԶԱՅՆԵՐԻ ԹԻՎԸ (ՀԱԶԱՐՆԵՐՈՎ)

Բանակի յեվ ցավա		Ազգային և			
		Ես-երներին. Բալլեիկին	Կողեա ալլ իմբակ-	Ընդամենը	
սորմի մասերը		Բին.	ներին.	ներ.	
Հյուսիսային ֆրոնտ .	240.0	480.0	?	90	780.0
Արևմտյան » .	180.5	653.4	16	125.2	976.0
Հարավ-Արևմտյան » .	402.9	350.1	13.7	290.9	1,007.4
Ռումինական » .	679.4	167.0	21.4	260.7	1,128.6
Կովկասյան » .	360.0	60.0	?	—	420.0
Բալթիկ Նավատ. » .	—	(120.0*)	—	—	(120.0*)
Սև-ծովյան » .	22.2	10.8	—	19.5*	52.5
Ընդամենը	1,885.1	1,671.3	51.8	756.0	4,864.5
		—(120.0*)	—?		—(120.0*)
		1,791.3			4,484.5

* Թիվը մոտավոր է. ընտրվել են 2 բալլեիկ: Ն. վ. Սվյատիցկին մի ընտրվածին 60,000 ձայն և հաշվում, ուստի և յես վերցնում եմ 120,000 թիվը:

(Ման. Ն. Լենինի):

* Այն մասին, թե վոր կուսակցությունն է Սև-ծովյան նավատորմից 19,5 հազ. ձայն ստացել, տեղեկութուններ չկան: Իսկ այդ սյուսյակի մնացյալ թվերը, յերևի, վերաբերում են գրեթե ամբողջութամբ ուկրաինական սոցիալիստներին, վորովհետև ընտրվել են 10 ուկրաինական սոցիալիստ և 1. ս. գ. (այսինքն մենշևիկ):

(Ման. Ն. Լենինի):

Գումարը տալիս է՝ ես-երներին 1,885,1 հազար ձայն, բալլեիկներին—1,671,3 հազ.: Իսկ յեթե վերջինիս ավելացնենք Բալթիկ նավատորմից 120,0 (մոտավորապես), ապա բալլեիկների համար ստանում ենք 1,791,3 հազ. ձայն:

Հետևապես, բալլեիկներն ստացել են մի՛թի պակաս, քան ես-երները:

Արդեն 1917 թ. հոկտեմբեր-նոյեմբերին բանակը յեղել է, հետևվապես, կիսով չափ բալլեիկյան:

Առաջնց դրան մենք չեյինք ել կարող հաղթել:

Բայց, բանակում ունենալով գրեթե ձայների կեսը, առհասարակ մենք ունեյինք ճնշող գերազանցություն այն ֆրոնտներում, վորոնք ավելի մոտ էյին մայրաքաղաքներին և առհասարակ բանակած էյին վոչ չափից դուրս հեռու: Յեթե համենք կովկասյան ֆրոնտը, ապա ընդհանուր առումով բալլեիկներն ստանում են գերակշռություն ես-երների նկատմամբ: Իսկ յեթե վերցնենք հյուսիսային և արևմտյան ֆրոնտները, ապա բալլեիկներն ստանում են մի միլիոն ձայնից ավելի ընդգեմ ես-երների 420 հազարի:

Հետևապես, արդեն 1917 թվի նոյեմբերին բալլեիկներն ունեցել են բանակում ևս Բաղաբական «հարվածային բուռնց», վոր նրանց համար ապահովում էր վճռական կետում վճռական վալրկանին ուժերի ճնշող գերակշռություն: Բանակի կողմից վոչ մի դիմադրության մասին խոսք անդամ չէր կարող լինել ընդգեմ պրոլետարիատի հոկտեմբերյան հեղափոխության, ընդգեմ պրոլետարիատի ձեռքով քաղաքական իշխանություն նվաճելուն, յերբ հյուսիսային և արևմտյան ֆրոնտներում բալլեիկներն ունեյին հոկալական գերակշռություն, իսկ կենտրոնից հեռու ընկած մնացյալ ֆրոնտներում բալլեիկները ժամանակ և հնարավորություն ունեյին կովով հեռ խլելու գյուղացիներին ես-երական կուսակցութունից, վորի մասին խոսք կլինի ներքևում:

* *

Հիմնադիր Ժողովի ընտրութունների տվյալների հիման վրա մենք ուսումնասիրեցինք բալլեիկմի հաղթանակի յերեք պայմանները. 1) պրոլետարիատի մեջ ճնշող մեծամասնություն. 2) գրեթե բանակի կեսը 3) ուժերի ճնշող գերակշռություն վճռական վալրկանին վճռական կետերում, այսինքն մայրաքաղաքներում և բանակների կենտրոնին մոտիկ ֆրոնտներում:

Բայց այդ պայմանները կարող կլինեյին միայն ամենակարճատև և անհաստատ հաղթանակ տալ, յեթե բալլեիկները չկարողանային

իրենց կողմը գրավել վոյ-պրոլետարական աշխատավոր մասսաների մեծամասնությունը, կռվով խլել նրանց ես-երաներից ու այլ մանր-բուրժուական կուսակցությունների ձեռքից:

Գլխավորը հենց դա չէ:

|| Ինտերնացիոնալի «սոցիալիստների» (կարգա՝ մանր-բուրժուական դեմոկրատների) կողմից պրոլետարիատի դիկտատուրան չհասկանալու գլխավոր աղբյուրը կազմում է այն, վոր նրանք չեն հասկանում, թե պետական իշխանության մի գասակարգի—պրոլետարիատի ձեռքում գտնվելը կարող է լինել պե՞տ է դառնա գործի՞ պրոլետարիատի կողմը գրավելու վոյ-պրոլետարական աշխատավոր մասսաներին, գործի՞ կռվով խլելու այդ մասսաներին բուրժուազիայից լինել մանր-բուրժուական կուսակցություններից:

Լի մանր-բուրժուական նախապաշարունակներով, մոռացած Մարքսի պետություն մասին ուսմունքին ամենից գլխավորը, || Ինտերնացիոնալի պարոնայք «սոցիալիստները» նայում են պետական իշխանությանը իբրև մի ինչ-վոր սրբություն, կուռքի կամ ձևական ձայնավությունների հավասարակշռողի վրա, «հետևողական դեմոկրատիայի» (չգիտեմ թե նման դատարկարանությունն էլ ինչպես են անվանում) արտոլլուտ: Նրանք չեն տեսնում պետական իշխանության մեջ ուղղակի մի գործի՞ վորով այլ չե՞վ այլ դասակարգեր կարող են և պետք է ոգտվին (և շնորհք ունենան ոգտվելու) իրենց դասակարգային նպատակների համար:

Բուրժուազիան ոգտվել է պետական իշխանությունից իբրև կապիտալիստների դասակարգի ձեռքին մի գործիք ընդդեմ պրոլետարիատի, ընդդեմ բոլոր աշխատավորների: Այդպես է յեղել ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետությունների որոք: Միայն մարքսիզմի գաղափարներն են «մոռացել» այդ:

Պրոլետարիատը պետք է (ժողովելով բավականաչափ ուժեղ քաղաքական ու ուղղական «հարվածային բուռնցքներ») տապալե բուրժուազիային, խլել նրանից պետական իշխանությունը, վորպեսզի սույ գործի՞ք բանեցնեն իր դասակարգային նպատակների համար:

Իսկ վորո՞նք են պրոլետարիատի նպատակները:

Բուրժուազիայի դիմադրության ճնշումը:

Գլուղացիության «չեզոքացումը», իսկ ըստ հնարավորին իր կողմը գրավել, համենայն դեպս, նրա աշխատավոր, չհանգործող հատվածի մեծամասնությունը:

Բուրժուազիայից խլված գործարաններում և առհասարակ արտադրության միջոցներում մեքենայական խոշոր արտադրության կազմակերպումը:

Կապիտալիզմի ավերակների վրա սոցիալիզմի կազմակերպումը:

Պարոնայք ուղարկությունները, նույն թվում և կաուցելիականները, իծաղը Մարքսի ուսմունքին, «ուսուցանում են» ժողովրդին. «պրոլետարիատը պետք է նախապես նվաճե ընդհանուր ընտրական իրավունքի միջոցով մեծամասնությունը, հետո ձեռք բերե՝ այդպիսի մեծամասնության ձայնավության հիման վրա՝ պետական իշխանությունը և այնուհետև «հետևողական դեմոկրատիայի» (վրմանք ասում են՝ «զուլում») այդ հիմունքով կազմակերպե սոցիալիզմը:

Իսկ մենք ասում ենք, Մարքսի ուսմունքի և ուսական հեղափոխության հիման վրա:

Պրոլետարիատը պետք է նախապես տապալե բուրժուազիային և իր համար նվաճե պետական իշխանությունը, և հետո այդ պետական իշխանությունը, այսինքն պրոլետարիատի դիկտատուրան, ոգտագործե իբրև իր դասակարգի գործի՞ք՝ աշխատավորության մեծամասնության համակրանքը ձեռք բերելու նպատակներով:

Վ. Ի. Լենին, «Կոմունիստական Ինտերնացիոնալ», Պետհրատ, Յերևան, 1927 թ. (133-140 էջ):

Ն. Ի. ԲՈՒՆԱՐԻՆ

ՆՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Ընկերներ!

Նոր հեղափոխությունը, վոր արդեն տապալել է կերենսկու, կապիտալիստների և կալվածատերերի գահը, իշխանությունը տվեց ժողովրդական կոմիսարների խորհրդին:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը Պետերբուրգում,— դա՛ բանվորների, գինվորների և դշուղական չքավորների կառավարությունն է: Դա՛ բոլոր ճնշվածների կառավարությունն է ընդդեմ բոլոր ճնշողների՝ մեր, սուս, թե գերմանացի, անգլիացի թե ամերիկացի ճնշողների, ընդդեմ բոլոր կալվածատերերի, գործարանատերերի, բորսայականների, չարաշահների: Դա՛ ժողովրդական, բանվորական հեղափոխության իսկական կառավարությունն է:

Փետրվար—ապրիլին վալբենի կալվածատերերի տեղը բռնեցին ջոջ—արդյունադործները,— Դուչկովներն ու Կոնովալովները:

Հոկտեմբերին Պետերում իշխանությունը դրամական ջոջերի ձեռքից անցավ բանվորների ու գինվորների ձեռքը:

Մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամն է, վոր տար-
վել է այդպիսի հաղթանակ:

Անհաշիվ են նրա հետևանքները:

Կապիտալի սարքած համաշխարհային սպանդանոցի վորոտի մեջ
դեպի հաղթանակ առաջացավ հեղափոխական պրոլետարիատը՝ գրա-
վումներէ, խմբերէ, լիգաներէ, կապիտալի ամենաանողորմ թշնամին:

Այդ նշանակումն է, վոր առաջին անգամ մի ամբողջ յերկիր
խզում է բոլոր համաձայնութիւնները միջազգային կապիտալի հետ:
Յեւ դուր չէ, վոր շտապում են Ռուսաստանից ձկկել կապիտալիս-
տական կառավարութիւններին ներկայացուցիչները:

Թող գնան նրանք! հեղափոխութեան ձեռքերն արձակված կլինեն:
Միջազգային կապիտալին հասցված հարվածի հետ միասին զորեղ զարկ
տրված կլինի միջազգային բանվորական հեղափոխութեան:

Ընկերներ!

Ամբողջ աշխարհը այժմ մեզ է նայում: Մեր հաղթանակներէց է
կախված նույնպէս լեզուպակա սոցիալիստի հաղթանակը:

Մեզ վիճակ է ընկել մեծ, վիթխարի խնդիր: Արժանի լինենք այդ
խնդրին!

Հառաջ գնանք միաբան շարքերով՝ բանվորների, գյուղացիների,
զինվորների գործի համար!

Մեր թշնամիները պաշտպանում են սուրկութեան խաչատառակ
կարգը!

Մենք պաշտպանում ենք համայն մարդկութեան լավագուշտ ա-
պագան, — սոցիալիզմը:

Կեցցէ մեր գրոհը՝ թուլացող թշնամու դեմ!

Կեցցէ հաղթանակը!

(«Սոցիալ — Դեմոկրատ», №196, 31 հոկտեմբերի 1917 թ., առաջ-
նորդող, անստորագիր):

Բանվորական յեւ զինվորական պաշտպանութեան Մոսկվայի խոր-
հուղճների Ռազմա — Հեղափոխական կոմիտէի

ՄԱՆԻՖԵՍՏ

Մոսկվայի բոլոր բաղաճայններին

Ընկերներ և քաղաքացիներ!

Հինգ որվա արյունալի կռիւից հետո գլխովին ջախջախվեցին
ժողովրդի թշնամիները, վոր զինված ձեռք կլին բարձրացրել հեղա-
փոխութեան դեմ: Արի մարտիկներին, — զինվորներին և բանվորներին, —

արյան գնով տարվեց հաղթութիւնը: Մոսկվայում այսուհետեւ հա-
տապում է ժողովրդական իշխանութիւնը, — բանվորական և զինվորա-
կան պատգամավորների խորհուրդների իշխանութիւնը:

Մոսկվայի հաղթութիւնը ամրապնդում է Պետերբուրգի պրոլե-
տարիատի և կապիտալի համաշխարհային պատմական հաղթութիւնը:
Համաշխարհային պատերազմի վորոտի տակ՝ Ռուսաստանի մաշվաքա-
ղաքում կենտրոնական իշխանութիւնն անցավ իր հուրդներին համա-
ռուսական համագումարի ձեռքը: Այդ իր, ժողովրդի, — բանվորների,
զինվորների, գյուղացիների, — իշխանութիւնն է: Այդ խաղաղութեան
և աղատութեան իշխանութիւնն է: Այդ մի իշխանութիւնն է, վորն
արդեն հաշտութիւնն է առաջարկել, վորը հողը տվել է գյուղացիներին,
վերացրել է հեղափոխութեան դավաճան Կերենսկու մտցրած մահա-
պատիժը: Այդ իշխանութիւնը ստեղծեց Ռուսաստանի ամբողջ դեմո-
կրատիայի Գերագուշտ լիազոր ուղղանք: Յեւ հեղափոխական ժողովուրդը
կշնջեւ ամեն մեկին, վոր զինված ձեռք կբարձրացնէ և այդ իշխանու-
թեան դեմ:

Մոսկվայի բուրժուազիան յունկերներին գնդացիներով և սպիտակ
գվարդիայի ատրճառակներով ապստամբութիւն հայտարարեց ժողո-
վրդական կառավարութեան դեմ: Նա ուզում էր նորից հողը վերա-
դարձնել կալվածատերերին, վերականգնել մահապատիժը, ձգձգել
հաշտութեան գործը:

Զինվորներին և բանվորական կարմիր գվարդիայի անձնակեր հե-
րոսութիւնը փրկեց հեղափոխութիւնը:

Խորտակելով թշնամու դիմադրութիւնը, Ռազմա — Հեղափոխա-
կան կոմիտեն հայտարարում է բանվորների և զինվորների անուսից.

Ձեռք կառնվեն բոլոր միջոցները՝ քաղաքի նորմալ կյանքը
վերականգնելու համար: Ֆարրիկաներն ու գործարանները բանի կզցվեն
կոմիտէի հրամանով: Բանկերը, գրասենյակները և խանութները
կբացվեն նրա կարգադրութեամբ: Ամեն ինչ կանվի՝ քաղաքը պարե-
նով ապահովելու համար: Հեղափոխական կարգը խանդարեցները, —
թալանչիները, ջարդարարները, մարդկորները, վոդկից խմիչքներ
վաճառողները, — կգտնվեն անխնա դատաստանով:

Ընկերներ և քաղաքացիներ!

Ամբողջ աշխարհը հսկայական ճգնաժամ է ապրում: Կապիտալի
հարուցած պատերազմը խորը ցնցում առաջացրեց: շարժելով, բանվո-
րական մասսաները բոլոր յերկրներում: Ամենուրեք աճում է պրոլե-
տարիատի հեղափոխութիւնը: Յեւ ուս բանվոր դասակարգին մեծ
պատիվ վիճակվեց նրանով, վոր նա առաջինը տապալեց բուրժուազի-
այի տիրապետութիւնը: Աշխատավոր դասակարգերը, իրենց ար-
յունով նվաճելով աղատութիւնը, առաջին անգամ մարդկային պատ-

մության մեջ իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: Այդ ազատությունը նրանք իրենց ձեռքից բաց չեն թողնի: Չինված ժողովուրդը կանգնած է վորպես հեղափոխության պահակ:

Փառք մեծ կովում ընկածներին!

Թող նրանց գործը լինի ապրողների գործը!

**Բանվորական լեզվ գիտնական պատգամավորների
խորհրդի Ռազմա—Հեղափոխական կոմիտե**

(«Սոցիալ—դեմոկրատ», № 200, 4 նոյեմբերի 1917 թ.)

Ն. Ի. ԲՈՒՆՆՈՒՄԻՆ

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Ե ՊԱՅԲԱՐԸ

Բռնկվել է քաղաղական կատաղի պաշար, վոր որեցոր ափելի ու ափելի յե բորբոքվելու: Բուրժուազիայի շահերը պաշտպանող քաղաքական կուսակցություններն ամբողջ ուժով ջանում են իրենց կողմը քաշելու զինվորների ու բանվորների գեթ մի մասը: Դրա վրա չեն նրանք կառուցում իրենց բոլոր հույսերը, վորովհետև բուրժուազիայի գործերն այժմ վատ են գնում: Նրա կառավարությունը տապալված է, նրա պաշտպաններին,— Սորհուրդներին Կ. Գ. Կոմիտեի հին կազմը (մենչեկներին ու եսերներին),— Համառուսական Համագումարը հեռացրել է դիրքերից, լակեյական՝ «Հանրապետության խորհուրդը» հեղափոխական նավաստիների և զինվորների «հրավերով» հարկադրված է տները ջրվելու: Ժողովրդական ապստամբության հաղթանակը կապեց բուրժուազիայի վտարն ու ձեռքը: Նա այժմ հուսահատական փորձեր է անում, վոր նորից իշխանությունը ձեռք գցի:

Ինչ կանոններով պետք է ղեկավարվեն զինվորական, բանվորական և գյուղացիական մասսաները՝ չընկնելու խաբեբայության այն թակարդների մեջ, վոր առատորեն դնում է նրանց համար բուրժուազիան, վոր յեռանդուն կերպով նրանց առաջ են դնում բուրժուազիայի կողմն անցած՝ սոցիալիստ—հեղափոխականների և մենչեկների կուսակցությունները?

Դիտավոր կանոնը պետք է լինի. վոչ մի ուժագրություն խոսքերին, վոչ մի վստահություն խոսքերին!

Վստահություն չեվ ուժագրություն միմիայն գործերին:

Յերբ կադետները, կիսա—կադետները և կիսա—կարնիլովյանները ասում են. «մենք ել հաշտության կողմն ենք, մենք ել հողը տալու կողմն ենք,» պատասխանում են նրանց. «ուխ ամիս դուք որենքներ

եյիք գրում և լերկիրը կառավարում: Ուխ ամիս դուք շարունակում եյիք պատերազմը և պաշտպանում կալվածատերերի իրավունքները: Ուխ ամիս լավ խոսքերով դուք խարում ու շահագործում եյիք մեր վստահությունը: Այժմ բավական է, վոր խարվեցինք: Մենք վոչ թե խոսք ու խոստում ենք ուղում, այլ հեղափոխական պահանջների անհապաղ իրագործում!!

Բուրժուական կառավարություններից միանգամայն տարբեր է վարվում պրոլետարիատի և բոլոր չքավորների կուսակցությունը:

Ընդամենը լերկու—լերեք որ է, վոր նա իր ձեռքն է վերցրել իշխանությունը և որենքներ մտցնելու իրավունքը, և նա ահապաղ, առանց լերկար ու բարակ խոսելու, սկսեց իրագործել այն ամենը, ինչ չեյին ուղում իրագործել բուրժուական և մանր բուրժուական կուսակցությունները,— հողի կալվածատերական սեփականությունը վոչնչացված է, մահապաշիծը՝ վերացված, հաշտության առաջարկը՝ արված: Ապա այժմ ինչի՞ համար է մղվում պաշարը: Պաշարը մղվում է այն պատճառով, վոր բուրժուազիան ու կալվածատերերը չեն կամենում թույլ տալ այդ որենքների իրագործումը, ուղում են այդ որենքները **սապալել**: Սորհուրդների Համառուսական Համագումարի կողմից հողի մասին ընդունված որենքի համաձայն՝ կալվածատիրական բոլոր նախկին հողերը այժմյանից պատկանում են գյուղացիներին: Բայց այս որենքն ուժ ունի միայն մինչև այն ժամանակ, քանի նրան պահակ է կանգնած և այն կենսագործում չի Համառուսական Համագումարի կողմից ընտրված ժողովրդական կոմիտեների Սորհուրդը:

Կալվածատերերը, բուրժուաները և նրաց սպասավորները կովում են ժողովրդական այս իշխանության դեմ հենց այն պատճառով, վոր նրանք կովում են նրա հրատարակած վորոշումների դեմ՝ **հողի և հաշտության առաջարկի վերաբերմամբ**:

Նրանք կովում են, վորովհետև լավ գիտեն մի բան, այն, վոր մեր կուսակցությունը կանգ չի առնե այն բանի դեմ, վոր շարունակի անխնա հարվածներ հասցնել ունեոր գասակարգերի շահերին, բոլոր չքավորների, տանջված բանակի, բոլոր քաղցածների և ճնշվածների շահերի համար:

Վերջացավ բուրժուազիայի թագավորությունը: Նոր կյանքն այժմ ժողորուրդը պետք է կառուցե, աստիճանաբար, բայց անշեղորեն ստեղծելով ազատագրված աշխատանքի թագավորություն:

Վերջ կալվածատերերի միահեծանություն, վերջ կապիտալիստների ինքնիշխանություն, վերջ բուրժուական գիշատիչների պատերազմներին!

Ահա ինչ է գրում իր գրողական լրա՝ բանվորների, զինվոր-

ների և գլուղացիների մեծ հեղափոխությունը! Ահա իճի գեւ Են պալքար մզում միւր հակառակորդները, ահա իճի համար Ենք մենք կովելու մինչև մահ կամ մինչև կատարյալ հաղթանակ!

(«Մոցիալ—դեմոկրատ», 30 սեպտեմբերի 1917 թ., անստորագիր):

ՄՈՍԿՎԱՅԻ ԱՆՅԲԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ընկ. Բուխարինի ճառը՝ բանվորական և զինվորական պատգամավորներին խորհուրդների 2-րդ գումարման Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեին նիստում):

Բուխարին.— Ըկերներ, իրենց արմատական, սոցիալիստական, նույնիսկ յերեք քառորդով բալլչեիկական համարողները, ինչպես „Новая Жизнь“-ը լրագիրն է, հաղորդեցին ձեզ Մոսկվայում կատարված անթիվ կողոպուտների, պատմական-գեղարվեստական արժեքների վոչնչացման մասին և այլն և այլն: Նույն այդ, մեղք չլինի ասել, մամուլը մեզ Մոսկվայում հաղորդեց Պետրոգրադի զինվորների մասսայական հարեցողության, ուղարկեցաներին բռնաբարելու, Պիտերի ապստամբության կատարյալ վոչնչացման մասին և այլն և այլն: Այդպիսի տեղեկությունները միակ նպատակը՝ պալքարող հեղափոխական բանակի ու պրոլետարիատի հոգու մեջ շփոթ գցելը և հակահեղափոխական բուրժուազիայի հաղթանակը հեշտացնելն է: Յեվ յես պեաք և խոստովանվեմ, վոր մեզ համար չափազանց ծանր եր լսել լուրեր հեղափոխական Պետրոգրադի պարտության մասին, թեև այդ լուրերը, — ինչպես և պետրոգրադցիների մասին տարածված զաղբիլի զրպարտությունը, վորին մենք վոչ մի վարկյան չենք հավատացել, մեր մեջ վոչ մի բոլի չեն խախտել մինչև վերջը մեր իդեալների համար կովելու մեր անընկճելի վրձնականությունը: Յեվ կոիվը Մոսկվայում ձգձգվեց վոչ թե այդ վրձնականության բացակայության կամ պակասության պատճառով, — այս բանը տեղի ունեցավ սոսկ այն պատճառով, վոր մենք, հեղափոխականներս չափազանց մեծահոգի չենք կովի համար, նույնպես այն պատճառով, վոր յունկերները չափազանց յերկար ժամանակ լիակատար աղատություն են վաչելել հակահեղափոխություն կազմակերպելու համար, վոր նրանք ամեն օր հնարավորություն են ունեցել մի քանի ժամ վարժվելու գնդացրային հրաձգության մեջ, վոր նրանք շատ ժամանակ են ունեցել Կալեդինի հեա բանակցություններ վարելու հա-

* Ճառը վերաբարողովում է ըստ 2-րդ գումարման ԿԳԿ նիստերի արձանագրությունների (արձանագրություն № 6). Ճառի արձանագրության բնագիրը վավերացված է Յա. Մ. Սվերդլովի կողմից:

մար, վոր նրանք ժամանակ ունեցան և կարողացան կազմակերպել իրենց ռազմական շտաբը այն պահին, յերբ մենք հարկադրված ելինք կազմակերպվելու, այսպես ասած, կովի կրակ ու բոցի մեջ: Այնուամենայնիվ, կովի բախտը կանխավճաված եր: Առաջին իսկ բուլչեից ամբողջ հեղափոխական Մոսկվան վոտքի յելավ խորհուրդների իշխանության համար կովելու, և մենք ամբողջ հասարակ զինվորական կայազորի հետ միասին ստացանք կովի բոյոր միջոցները. վորոնց թվում լուսարձակներ և տասնումիկ մատնաչափանի հրանոթներ: Մենք ունեցինք նույնպես սավառնակներ, վորոնցից ոգավելով, մենք առանց դժվարության կարող ելինք քանդել հակահեղափոխական շտաբների վորջերը: Սակայն՝ Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն այս դեպքում հարկավոր վճռականություն չունեցավ և նույնպես մասամբ այս պատճառով ձգձգվեց Մոսկվայի բուրժուազիայի դեմ յեղած կոիվը: Կովի այս ձգձգման պատճառ եր նույնպես մենչեիկները և եսերները դավաճանական տակտիկան: Չախ եսերներն իրենց ամբողջ ակտիվությամբ և անսովոր հերոսությամբ կողք-կողքի կովում ելին մեզ հետ, բայց աջ եսերները, քաղաքագլխուխ Ռուզնյովի գլխավորությամբ, անուժ ելին ամեն բան, ինչ կարող ելին անել, վոր մեր ապստամբությունը ճնշեն: Յես կրսկեմ բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդում նրանց ունեցած տակտիկայից:

Բանվորական սեկցիայում մենք կազմում ելինք ճնշող մեծամասնություն, բայց զինվորական սեկցիան կարծեք թե հարյուր տարի սրտից առաջ և ընտրված չեղել. նրա կազմի մեջ ընկել են առամարուլժներ, դեղագործներ և այլն, — այսինքն՝ մարդիկ, վոր այնքան են մոտ զինվորներին, ինչքան յես մոտ եմ չինական կայսրին: Նրանք, իհարկե, մեր թշնամիներն ելին, բայց նրանք կարողացան վերջնորությունների առաջ անթիվ խոչնդոտներ բարձրացնել, ուստի և՛ զինվորական սեկցիայում և սրա հետևանքով նույնպես Գործադիր Կոմիտեում մենք չունեցինք մեծամասնություն: Ի՞նչ յեղավ սրա հետևանքը: Յես արդեն չեմ խոսում զուտ լրտեսական գործողությունների մասին, ինչպես, որինակ, այն մասին, վոր, յերբ մենք գնդացիները դըրինք բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդի շենքի պատուհաններին, այս գնդացիների աեղավորման մասին հեռախոսով տեղեկություն ե տրվում Ռյարցեին: Յես կանգ չեմ առնի նույնպես այն բանի վրա, վոր, յերբ մեր գնդերից մեկը դարան և ընկնում, զինվորների այդ ներկայացուցիչները մասնակցում են հարցափորձերին և ցուցմունքներ են տալիս ապստամբների դեմ: Նրանք իսկական զինված դաշինք ելին կնքել հակահեղափոխության հետ: Նրանք կրակում ելին մեզ վրա, իսկ դրանից շատ առաջ, յերբ մենք խորհուրդն ելինք մտցնում կարմիր գվարդիան զինելու նախադեհը, նրանք ամեն կերպ

և ամեն ժամանակ տապալում էյին այդ նախադեմերն այն պատրվակով, թե, իբր, բանվորների զինումը գծաթուխ կապան մեր և զինվորների միջև:

Հնչեց կովի ժամը, և այժմ կարմիր գվարդիայի հերոսական կրոնիվը, մասսալական և անհատական հերոսության որինակները, այն անգնահատելի ծառայությունը, վոր կարմիր գվարդիականները ցույց տվին զինվորներին, վորոնք պարզ գիտակցում էին, թե վերջան գրծվարին կլինեն, յեթե չլինեն ընկերների մասնակցությունը կովին, — ցույց տվին պաշտպանողականների (որորոնեցիների) դատողությունների և վախերի ամբողջ ստությունն ու անիմաստությունը: Բայց կովի պատրաստման պրոցեսի ընթացքում նրանց տակտիկան խաղաց խորապես բացասական դեր, մեզ հնարավորություն չտալով ուժեղացնելու կարմիր գվարդիան և նրան ըստ հնարավորին լավ կազմակերպելու: Այս ամենի հետ միասին, հենց վոր սկսեց ապստամբությունը, քաղաքագլուխ Ռուզնյովը, աջ եսեր, շտապեց գինել սպիտակ գվարդիան, վորդեղներները անկույններից դավաճանորեն գնդակահարում եր բանվորակ սն պարեկներին (պատրուկներին):

Մոսկվայում ավելի վառ ու խորը, քան այլուրեք, արտահայտվեց Պորոչուրգների իշխանության համար մղած պայքարի դասակարգային նշանակությունը: Հենց այստեղ հակահեղափոխության կողմում չկար զինվորների վոչ մի դուռը, վոչ մի վաշտ և բանվորական վոչ մի ջոկատ: Հենց այստեղ, Մոսկվայում, մի կողմում կանգնած էին սպիտակ գվարդիան և բոլոր չունկերները, վոր հակահեղափոխական բուրժուազիայի հետ մի մարմին ու արյուն են կազմում, և մյուս կողմում՝ զինվորական ամբողջ մասսան և կարմիր գվարդիայի մեջ ներկայացված բոլոր բանվորները: Առաջինները միացան փրկության կոմիտեյի շուրջը, վոր ստեղծել եր դուսման աջ եսերների, Ռուզնյովի, ազդեցությունը (ձեր, պետրոգրադցիները, որինակով այդ դուսման մենք արդեն ցրել ենք): Իսկ յերկրորդները կովում էին՝ իշխանությունը Պորոչուրգներին հանձնելու համար: Մենք մեծահոգություն էինք անում, մինչդեռ նույն ժամանակ բուրժուազիան մեզ մոտ եր ուղարկում հոգևորականներին՝ անձնատուր լինելու և մեր Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն հանձնելու առաջարկով: Այն ժամանակ, յերբ չունկերներն արձակում էին պալթուցիկ գնդակներով, մենք հրաժարվեցինք սավառակներ գործածելուց և նույնիսկ զինադադարի համաձայնություն տվինք, սակայն՝ զինադադարը խզեցին 150 ուղարկիկները (հարվածային զորամասից), վորոնց գաղտնի և հակառակ դաշինքի՝ բերին Մոսկվա: Սրանք մի ծածուկ տեղում գտան, ականքն է, իրենց համար պատրաստված, 150 հրացան և սկսեցին գնդակահարել մեր պարեկներին: Բարեբախտաբար, ուղղմական անսահման բարձրու-

թյան վրա գտնվեցին մեր զինվորները և բանվորները, վորոնք իրենց ինքնագլուխ գործողություններով, իրենց անսահման քաջությունը, անորինակ անձնագոհության ակտերով կասեցրին զորական կենտրոնների անվճռականությունը և մեզ ազատություն բերին:

Ընկ. Բուխարինը բերում է՝ ապստամբությունից քիչ առաջ խորհուրդների պահանջով արձակված՝ Դվինսկ գնդի ընկերների որինակը, վորոնք 30 հոգով դուրս շարժեցին «Մետրոպոլ» հյուրանոցից 300 չունկերների: Բերում է անձնագոհության ակտերը յերկու կարմիր գվարդիականի, վորոնք հոգս ցնդեցրին թշնամու խրամատները և կործանվեցին պալթուցից, և այլն և այլն: Այնուհետև նա անցնում է այն հետևանքների նկարագրին, վոր ունեցավ Կրեմլի վրա բացված հրանոթային կրակոցը: Բոլորովին մոգոնովի լեն բուրժուական թերթերի տված տեղեկությունները «Վասիլի Բլաժեննու» տաճարի վոչ չլնչացման մասին, տաճարը փաստորեն վոչ մի քերձվածք չի ստացել: Միայն մի տաճարի անկյունը չնչին ֆլապել է: Ամենամեծ տվերում ստացել են Նիկիտսկիյ Վորոտայի մոտ գտնված յերկու տուն:

Պատմական և գեղարվեստական արժեքների վոչնչացման լուրը, — կրկնում է Բուխարինը, — սկզբից մինչև վերջը գիտակցական սուտ է: Ի հարկե մենք յերեք չենք կարծել, վոր կոնկրետ հնարավոր է առանց զոհերի և այն ել՝ հաճախ առանց մեծ զոհերի: Բայց սրանից չե, վոր մենք ամենից ավելի չենք վախենում: Մենք վախենում ենք նրանից, վոր պայքարից և հաղթանակից հետո յերևան կընկնեն զիվանագետներ և քաղաքագիտուկներ, վորոնք ի չիք կդարձնեն պրոլետարիատի և հեղափոխական բանակի հերոսական ճիգերի հետևանքները:

Այս տեսակետից՝ Բուխարինը չափազանց խիստ արտահայտություններով քննադատում և Կենտկոմից հեռացած բալչեիկներին և հրաժարական տված Կոմիսարներին, նրանց անվանում է հեղափոխության դատալիքներ և ապացուցում է, վոր «փսխքոտ» իշխանության ժամանակն անցավ:

— Թող մեզ չսարսափեցնի, ասում է նա, սադրանքը բուրժուական մամուլի և «Новая Жизнь»-ի, վորն այժմ ամոթ է կարդալ: Մասաները մեզ հետ կմնան, թեև կհեռանան գաղեփիները: Այնուհետև բուռն կերպով հարձակվելով մամուլի վրա, ընկ. Բուխարինն ասում է, վոր մամուլը կովի նույնպիսի գործիք է հանդիսանում, ինչպիսիքն են հրացանն ու բանտը, ուստի և հարկավոր չե ուղարկություն դարձնել «Новая Жизнь»-ի և ամեն տեսակ ինտրիգներիայի ճգճոցին, վոր նրանք բարձրացնում են բուրժուական մամուլի գեմ մղվող պայքարի առթիվ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵԸ

«Մենք հասցրինք բուրժուական դեմոկրատիկ հեղափոխությունն իր վերջավորությանն այնպես, ինչպես վոյ-վոյ չե՛ր կարող: Մենք միանգամայն գիտակցաբար, հաստատուն լե՛վ անձեղ ընթացքով շարժվում ենք առաջ դեպի սոցիալիստական հեղափոխություն, իմանալով, Վոր այդ հեղափոխությունը չի՞նչ կան պարսպով բաժանված չի բուրժուական-դեմոկրատիկ հեղափոխությունից,—իմանալով, Վոր միայն պայքարը կվորո՞ւթի, քե՛ի՞նչ չափով մեզ կհաջողվի (վերջին հաշվով) առաջ շարժվել,—անհունապես բարձր խնդրի Վոր մասը մենք կիրառորձենք, մեր հաղթանակների Վոր մասը կամրացնենք ու կպահենք մեր ձեռքին:

«Հոկտեմբերյան հեղափոխության չորսամյակի առթիվ» հոդվածից:

Լենին, Յերկ. ժող. հատ. XVIII, մաս I էջ 363, սուս. հրատ:

Իսկ Վորո՞նք են պրոլետարիատի նպատակները:

— ձեռք բուրժուազիայի գիմագրությունը:

«Զեզոնացներ» գյուղացիությունը լե՛վ հնարավորության դեպքում մեր կողմը գրավել նրան,—համենայն դեպս նրա աշխատավորական, չե՛հազորժող մասի մեծամասնությունը:

Կազմակերպել խուճուր մեքենայական օրգյունաբերություն բուրժուազիայից գրաված Քարիկաներում լե՛վ առհասարակ նրանից գրաված միջոցներով:

Սոցիալիզմ կազմակերպել կապիտալիզմի փլուզանքների Վրա:

Վ. Ի. Լենին, Յերկ. ժող., հատ. XV, էջ 448 սուս. հրատ.

ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

(Հասված 1918 թ. «Ծրագրի նախագծի սեվագիր ուղղագծից»)

«... 1917 թ. հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) հեղափոխությունն իրագործեց Ռուսաստանում պրոլետարիատի ղեկավարության, վորին (պրոլետարիատին) աջակցեց գյուղի ամենաչքավոր մասը կամ կիսապրոլետարիատը...»

Այս ղեկավարության կոմունիստական կուսակցության առջև Ռուսաստանում դնում է խնդիր՝ հասցնել մինչև վերջը, ավարտելը կալվածատերերի և բուրժուազիայի արդեն սկսված եքսպրոպրիացիան, հանձնել իրեն սեփականություն խորհրդային Հանրապետության՝ բոլոր ֆարքիկաներն ու գործարանները, լեռնաթուղիները, բանկերը, նավատորմը և արտագործության ու շրջանառության այլ միջոցները:

Աստիճանաբար, բայց անշեղորեն հողի ընդհանուր մշակման և խոշոր սոցիալիստական հողագործության անցնելու նպատակով՝ ոգտագործել քաղաքային բանվորների և ամենաչքավոր գյուղացիների դաշինքը, վորն արդեն վերացրել և հողի սեփականությունը և տվել որենք՝ մանր տնտեսությունից դեպի սոցիալիզմ տանող այն անցողիկ ձևի մասին, վորը պրոլետարիատի կողմն անցած գյուղացիության ժամանակակից իդեոլոգները անվանել են հողի սոցիալիզացիա:

Ամրացնել և շարունակել զարգացնել խորհուրդների ֆիդերատիվ-հանրապետությունը՝ վորպես դեմոկրատիայի անհամեմատ ավելի բարձր և ավելի առաջադեմ ձև, քան բուրժուական պարլամենտարիզմն է, և վորպես պետության միակ տիպը, վորը, հաշվի առած 1871 Փարիզի կոմունայի փորձը, ինչպես և ուսածական՝ 1905 և 1917 թ. թ. հեղափոխությունների փորձը, — համապատասխանում և կապիտալիզմից դեպի սոցիալիզմ տանող անցողիկ շրջանին, այսինքն՝ պրոլետարիատի ղեկավարության շրջանին:

Ամեն կողմից և ամեն կերպ ոգտագործել՝ Ռուսաստանում վաղված համաշխարային սոցիալիստական հեղափոխության ջանք նրա համար, վոր հեղափոխությունը տարածվի ավելի առաջագիմ յերկրներում և, առհասարակ, բոլոր յերկրներում, կասեցնելով իմպերիալիստական բուրժուական պետությունների փորձերը՝ Ռուսաստանի ներքին գործերին միջամտելու, կամ միանալու՝ անմիջականորեն սոցիալիստական խորհրդային հանրապետության դեմ պայքարելու և պատերազմելու նպատակով:

(Վ. Ի. Լենին, Յերկերի ժողովածու, XV հ, էջ 159, Ռուս. հրատ.)

ՀԱՆՏԵՄԱԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՏՄԵՐԵՏՈՐՁԻ ԱՌԹԻՎ

Գալիս և Հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) չորրորդ տարեդարձը:

Վորքան մեղանից հեռանում է այդ մեծ որը, այնքան ավելի պարզ և դառնում Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության նշանակությունը, այնքան ավելի խորն ենք թափանցում մեր աշխատանքի փորձի մեջ՝ վերցրած այդ փորձը իր ամբողջությամբ:

Ամենահակիրձ, — և, ի հարկե, վոչ այնքան լրիվ ու ձիշտ, — դեռում այդ նշանակությունը և այդ փորձը կարելի չե տալ հետևյալ կերպով:

Ռուսաստանի հեղափոխության անմիջական և մոտակա խնդիրը բուրժուական-դեմոկրատական մի խնդիր էր՝ տապալել միջնադարի մնացորդները, վերջնականապես սրբել-ջնջել նրանց, մաքրել Ռուսաստանն այդ բարբարոսությունից, այդ խալտառակությունից, մեղ չերկրի աժեն մի կուլտուրայի և ամեն մի առաջդիմության այդ մեծագույն արգելակից:

Յեվ մենք իրավունք ունենք պարծենալու, վոր, ժողովրդական մասսաների, ժողովրդի հոծ մասսաների վրա ներգործելու տեսակետից, այդ մաքրումը մենք անհամեմատ ավելի վճռական, արագ, համարձակ, հաջող լացն ու խորը կատարեցինք, քան ֆրանսիական մեծ հեղափոխությունը սրանից 125 տարուց ավելի առաջ:

Թե անարխիստները և թե մանր բանր բուրժուական դեմոկրատները (այսինքն մենշևիկներն ու եսերները՝ վորպես միջազգային սոցիալական այս տիպի ուսն ներկայացուցիչներ) անսահման շատ խառնաշփոթ բան են ասել և ասում են այն հարցի առթիվ, թե ինչ հա-

բարերություն ունի բուրժուական—գեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական (այսինքն՝ պրոլետարական) հեղափոխության հետ։ Այս չորս տարին կատարելապես հաստատեցին, վոր մենք ուղիղ ենք ըմբռնել մարքսիզմը այս կետում և ուղիղ ենք հաշվառել նախորդ հեղափոխությունների փորձը։ Մենք բուրժուական—գեմոկրատական հեղափոխությունը հասցրինք մինչև վերջը աշնպես, ինչպես վոչ վոր չի արել։ Մենք միանգամայն գիտակցաբար, հաստատական ու անշեղ շարժվում ենք առաջ, ղեկի սոցիալիստական հեղափոխություն, գիտե՜նալով, վոր նա չինական պատով չի բաժանված բուրժուական—գեմոկրատական հեղափոխությունից, գիտենալով, վոր միայն պայքարը կվճռե, թե վորքան մեղ կհաջողվի (վերջնական հաշվով) առաջ խաղալ, թե անսահման բարձր խնդրի վճռ մասը կկատարենք, մեր հաղթանակների վճռ մասը կամրապնդենք մեր ձեռքին։ Կապրենք, կտեսնենք։ Սակայն այժմ իսկ մենք արգեն տեսնում ենք՝ հսկա գործ և կատարված ավերված, տանջված հետաձուգ չերկրի համար՝ հասարակության սոցիալիստական փոխակերպության հարցում։

Իայց վերջացնենք մեր հեղափոխության բուրժուական—գեմոկրատական բովանդակության մասին խոսելը։ Մարքսիստների համար հասկանալի պետք է լինի, թե ինչ է նշանակում այս։

Պարզաբանման համար վերցնենք շոշափելի որինակներ։

Հեղափոխության բուրժուական—գեմոկրատական բովանդակություն՝ այդ նշանակում է սոցիալական հարաբերությունների (կարգերի, հիմնարկների) մաքրում միջնադարի մնացորդներից՝ ճորտությունից, ֆեոդալիզմից։

1917 թվին Ռուսաստանում վճռոնք ելին ճորտության ամենագլխավոր արտահայտությունները, մնացորդները, իրենց դարն անցկացրած հիմնարկները։ Միապիստությունը, դասայնությունը (СОСЛОВНОСТЬ), հողատիրությունը և հողգտագործումը, կանանց գրությունը, կրոնը, ազգությունների ճնշումը։ Վերցրեք այս «ավգյան ախոռներից» վորը կամենում եք, — խոսքը յեկավ՝ ասենք, վոր բոլոր առաջագեմ պետությունները թողել են թերմաքրված գրաթյան մեջ 125, 250 ու ավելի տարի (1649 թ. Անգլիայում) առաջ իրենց կատարած բուրժուական—գեմոկրատական հեղափոխությունների ժամանակ, — վորն ուզում եք վերցրեք այս «ավգյան ախոռներից» և դուք կտեսնեք, վոր մենք նրանց իստակ մաքրեցինք։ Մի տաս շարաթվա ընթացքում, սկսած 1917 թ. Հոկտեմբերի 25-ից (նոյեմբերի 7-ից) մինչև հիմնադիր ժողովի ցրումը (1918 թ. հունվարի 5-ը), մենք այս բնագավառում հազար անգամ ավելի բան արինք, քան իրենց իշխանության ուր ամսվա մեջ արին բուրժուական գեմոկրատներն ու լիբերալները (կադետ-

ները), մանր բուրժուական գեմոկրատները (մենչեիկներն ու եսերները)։

Այդ վախկոտները, պոռոտախոտները, ինքնասիրահար նարկիզները և համլետուկները ճոճում ելին կարտոնե սրեր, — և նույնիսկ միապետությունը չվոչնչացրին! Մենք գուրս նետեցինք ամբողջ միապետական աղան աշնպես, ինչպես վոչ վոր, ինչպես յերբեք չի արված։ Դասայնության դարավոր շենքում մենք քար քարի վրա չթողինք, ազցուս ազցուսի վրա (ամենաառաջագեմ չերկրները, ինչպես՝ Անգլիան, Փրանսիան, Գերմանիան, մինչև այժմ չեն ազատվել դասայնությունից)։ Դասայնության ամենախոր արմատները, այն է՝ ֆեոդալիզմի և ճորտության մնացորդները հողատիրության մեջ՝ մենք պոկեցինք մինչև վերջը։ «Կարելի չե վիճել» (արտասահմանում բավականաչափ գրականագիտներ, կադետներ, մենչեիկներ ու եսերներ կան այս վեճերով պարապելու համար) այն մասին, թե «վերջի վերջ» ինչ գուրս կգա Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հողաչին բարենորոգումներից։ Մենք հավաս չունենք այժմ ժամանակ վատնելու այդ վեճերի վրա, վորովհետև կովով է, վոր մենք լուծում ենք այդ վեճը և նրանից կախված վեճերի ամբողջ գումարը։ Սակայն՝ չի կարելի վիճել այն փաստի դեմ, վոր մանր բուրժուական գեմոկրատներն ու թ ամիս «համաձայնում ելին» ճորտության տրադիցաները պահող կալվածատերերի հետ, իսկ մենք մի քանի շաբթում ուսական չերկրի չերեսից վերջնականապես ջնջեցինք՝ թե այդ կալվածատերերին և թե նրանց բոլոր տրադիցիաները։

Վերցրեք կրոնը կամ կանանց իրավազրկությունը կամ վոչ ուս ազգությունների ճնշումն ու անիրավահավասարությունը։ Մրանք բոլոր բուրժուական—գեմոկրատական հեղափոխության հարցեր են։ Մանր բուրժուական գեմոկրատիսի գոհակարանները ու թ ամիս այս մասին դատարկաբանում ելին։ Աշխարհիս ամենաառաջագեմ չերկրներից չկա և վոչ մեկը, վորտեղ այդ հարցերը բուրժուական գեմոկրատական ուղղությամբ լուծված լինելին մի՞նչեմ վերջը։ Մեղանում նրանք լուծված են Հոկտեմբերյան հեղափոխության որենսզրկությամբ մինչև վերջը։ Մենք կրոնի դեմ իսկապես վոր պայքարել ենք և պայքարում ենք։ Բոլոր վոչ-ուս ազգություններին մենք տվինք սեփական հաճապետություններ կամ ավտոնում շրջաններ։

Մեղանում, Ռուսաստանում, չկա մի այնպիսի ստորություն, գարշելիություն և անարգություն, ինչպիսին կանանց իրավազրկությունը կամ անիրավահավասարությունն է, ճորտության և միջնադարի՝ այդ վրդովիչ մնացորդը, վորը նոր ձևով պահել են շահամոլ բուրժուազիան և բոլթ, ահաբեկված մանր բուրժուազիան՝ աշխարհի, առանց վոր և է բացառություն, բոլոր չերկրներում։

Այս ամենը՝ բուրժուական — դեմոկրատական հեղափոխությունն է:

Հարցուր հիսուն և յերկու հարցուր հիսուն տարի առաջ այդ հեղափոխության (այդ հեղափոխությունների, չեթե խոսենք մեծ ընդհանուր տիպի ազգային շուրաքանչյուր տեսակի մասին) առաջագիծը ղեկավարները ժողովուրդներին խոստացան մարդկությունն ազատել միջնադարյան արտոնություններից, կնոջ անիրավահավասարություններից, այս կամ այն կրոնի (կամ «կրոնի գաղափարի», ընդհանրապես «կրոնականություն») պետության կողմից վաշելած ատավելություններից, ազգությունների անիրավահավասարությունից: Խոստացան, — ու չկատարեցին: Չեն կարողացել կատարել, վորովհետև խանդարել և զեպի «սրբազան մասնավոր սեփականությունը չեղած հարգանքը»: Մեր պրոլետարական հեղափոխության մեջ չի յեղել այդ նպովյալ «հարգանքը» զեպի չեղիցս նպովյալ միջնադարի այդ մնացորդը և զեպի այդ «սրբազան մասնավոր սեփականությունը»:

Սակայն՝ վորպեսզի բուրժուական — դեմոկրատական հեղափոխության նվաճումները Ռուսաստանի ժողովուրդների հաստատուն սեփականություն դառնալին՝ մենք պետք է շարունակելինք առաջ շարժվել և մենք առաջ շարժվեցինք: Մենք բուրժուական — դեմոկրատական հեղափոխության հարցերը լուծեցինք վոտքի վրա, ի միջի այլոց, վորպես մեր գլխավոր և իսկական պրոլետարական — հեղափոխական, սոցիալիստական աշխատանքի «կողմնակի արդյունք»: Մենք միշտ ասում ելինք, վոր ռեֆորմները հեղափոխական դասակարգային կոմի կողմնակի արդյունքն են: Մենք ասում ելինք և գործով ապացուցեցինք, վոր բուրժուական — դեմոկրատական բարենորոգումները պրոլետարական, այսինքն սոցիալիստական հեղափոխության, կոմնակի արդյունքն են: Ի զեպս ասած, բոլոր կառույցիները, Հիլֆերդինգները, Մարտոֆները, Չերնոֆները, Հիլլվիտները, Լոնդենները, Մակդոնալդները, Տուրատները և «Չ» — ական մարքսիզմի այլ հերոսները չկարողացան ըմբռնել բուրժուական — դեմոկրատական և պրոլետարական — սոցիալիստական հեղափոխությունների միջև չեղած այսպիսի հարաբերությունը: Առաջինը վերաճում է յերկրորդի: Յերկրորդն, ի միջի այլոց լուծում է առաջին հարցերը: Յերկրորդն ամբողջում է առաջին գործը: Պայքարը և միմիայն պայքարն է վճռում, թե վորքան է հաջողվում յերկրորդին վերաճել առաջինից:

Հենց խորհրդային կարգը մի հեղափոխություն մի այլ հեղափոխության վերաճելու շոշափելի ապացույցներից և արտահայտություններից մեկն է: Խորհրդային կարգը բանվորների ու գյուղացիների համար դեմոկրատիզմի մաքսիմում է, և միաժամանակ նա նշանակում է խզումն բուրժուական դեմոկրատիզմի հետ և ծագումն դեմոկրատիա-

յի հոս, համաշխարհա-պատմական **սիպի**, այն է՝ պրոլետարական դեմոկրատիզմի կամ պրոլետարիատի դիկտատուրայի:

Թող մենադ բուրժուապիւլի և նրա հետեից քարշ չեկող մանր բուրժուական դեմոկրատիայի շներն ու խողերը մեր վրա թափեն անեծքներ, լուսանքի, ծաղրի հեղեղ՝ մեր խորհրդային կարգի կառուցման մեջ ունեցած **մեք** անհաջողությունների և սխալների համար: Մենք վոչ մի բուպե չենք մոռանում, այն, վոր, հիրավի մենք անհաջողություններ ու սխալներ շատ ենք ունեցել և շատ ենք անում: Ասես՝ հնարավոր բան է անհաջողություններ չունենալ և սխալներ չանել մի այնպիսի նոր, համաշխարհային ամբողջ պատմության համար նոր գործում, ինչպիսին և պետական կազմի դեռ չառնված **սիպ** ստեղծելը! Մենք անշեղ պետք է պայքարենք՝ մեր անհաջողություններն ու սխալներն ուղղելու համար և պետք է լավացենք խորհրդային սերգրունքների՝ կատարելությունից դեռ շատ ու շատ հեռու կիրառումը կյանքում: Սակայն՝ մենք իրավունք ունենք պարծենալու և մենք պարծենում ենք նրանով, վոր մենք բախտ ունենք խորհրդային պետության կառուցումը սկսելու, **սկսելու** սրանով համաշխարհային պատմության մի նոր դարաշրջան, մի **հոս** դասակարգի տիրապետության դարաշրջան, վոր ճնշված է կապիտալիստական բոլոր չեղկերներում և ամենուրեք գնում է զեպի նոր կյանք, զեպի բուրժուազիային հաղթելը, զեպի պրոլետարիատի դիկտատուրա, զեպի մարդկության փրկությունը՝ կապիտալի լծից, իմպերիալիստական պատերազմներից:

Սկսած 1914 թվից յերկրագնդի բոլոր յերկիրները ամբողջ քաղաքականության անկյունաքարը դարձել և իմպերիալիստական պատերազմների հարցը, այն հարցը, վոր ամբողջ յերկրագնդի վրա ներկայումս գերիշխում է ֆինանսական կապիտալի միջազգային քաղաքականությունը, վորն **աճխուսափելիորեն** ծնում է նոր իմպերիալիստական պատերազմներ, անխուսափելիորեն առաջացնում է՝ ազգային հալածանքի չլաված սաստկացում, — թալանը, տվազակությունը ու ժեղացնում է «առաջագիծ» պետությունների մի խմբակի կողմից՝ թույլ հետամնաց, մանր ազգությունների նկատմամբ չեղած ճնշումը: Սա առանշակ միլիոնավոր մարդկանց կյանքի և մահվան հարց է: Սա մի հարց է այն մասին, թե բուրժուազիայի կողմից մեր աչքի առջև պատրաստվող, մեր աչքի առջև կապիտալիզմից ծնունդ առնող իմպերիալիստական հաջորդ պատերազմում արդյոք չի՞ կոտորվելու 20 միլիոն մարդ (10 միլիոնի տեղ, վոր սպանվեցին 1914—18 թվականների պատերազմին, այդ պատերազմը լրացնող «մանր պատերազմներով», վոր մինչև որս ել չեն վերջացել), ապազա այդ անխուսափելի պատերազմում (յեթե մնա կապիտալիզմը) չի՞ հաշմանդամանալու 60 միլ. հոգի (1914-18

թվականներին հաշմանդամացած 30 միլ. տեղ)։ Այս հարցում ևս Հոկտեմբերյան հեղափոխությունը բաց արեց համաշխարհային պատմության նոր դարաշրջան։ Բուրժուազիայի սպասավորները և նրա փոխասացները հանձինս եսերների և մենշևիկների, հանձինս համայն աշխարհի՝ մանր բուրժուական, իբր «սոցիալիստական» վողջ դեմոկրատիայի՝ ծաղրում ելին «իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու» լոգոնգը։ Իսկ այս լոգոնգը դուրս չեկավ միակ հեմարտությունը, ճիշտ է՝ անախորժ, կոշտ, մերկացած, դաժան, բայց միակ ճշմարտությունը շովինիստական և պացիֆիստական անթիվ ամենանոր խարերայությունների մեջ։ Այդ խարերայությունները խորտակվում են։ Մերկացված է Բրեստի դաշնագիրը։ Յուրաքանչյուր որ մերկացվում են Բրեստի դաշնագրից ավելի վատ դաշնագրի, Վերսայի դաշնագրի, նշանակությունն ու հետևանքները։ Յեվ չերեկվա պատերազմի և վրա հասնող վաղվա պատերազմի պատճառների մասին խորհող միլիոնավոր և միլիոնավոր մարդկանց առաջ քանի գնում ավելի պարզ, ավելի ճշգրտորեն, ավելի անդամադրելի կերպով ծառայում է ահավոր ճշմարտությունը, — անկարելի չե դուրս պրծնել իմպերիալիստական պատերազմից, անխուսափելիորեն նրա առաջացող իմպերիալիստական հաշտությունից (չեթե մենք հին ուղղագրություն ունենալինք՝ լես այստեղ կգրելի «Мир», բառն չերկու անգամ իր չերկու նշանակությունը*), անկարելի չե այս դժոգքից դուրս պրծնել այլ կերպ, քան միայն բալցեվիկյան պայքարով չեվ բալցեվիկական հեղափոխությամբ։

Թող մոլեգնորեն այս հեղափոխությունը հայհոյեն բուրժուազիան ու պացիֆիստներն ու գեներալներն ու մեշանները, կապիտալիստներն ու ֆիլիստերները, բոլոր հավատացող քրիստոնյաները և 2 ու 2½ ինտերնացիոնալների բոլոր ասպետները։ Չարություն, զրպարտություն և ստություն վոյ մի ապացուցով նրանք չեն պղտորի այն համաշխարհապատմական փաստը, վոր հարյուրավոր և հազարավոր տարիների ընթացքում առաջին անգամ ստրուկները ստրկատերերի միջև չեղած պատերազմին պատասխանեցին՝ հայտարարելով լոգոնգ, — իրենց ավարը բաժանելու համար ստրկատերերի միջև չեղած այս պատերազմը դարձնենք բոլոր ազգերի ստրուկների պատերազմ՝ ընդդեմ բոլոր ազգերի ստրկատերերի։

Առաջին անգամ հարյուրավոր և հազարավոր տարիների ընթացքում այս լոգոնգն անորոշ և անգոր սպասելիքից դարձավ պարզ, վորոշակի քաղաքական ծրագիր, դարձավ պրոլետարիատի ղեկավարու-

թյամբ ներգործուն պայքար, դարձավ պրոլետարիատի առաջին հաղթանակը, առաջին հաղթանակը՝ պատերազմները վոյնչացնելու գործի, հղթանակ բոլոր չերկրների բանվորների դաշինքի գործի, բոլոր ազգերի բուրժուազիայի դաշինքի վրա, այն բուրժուազիայի, վորը թե հաշտվում է և թե կռվում՝ կապիտալի ստրուկների հաշվին, վարձու բանվորների հաշվին, գյուղացիների հաշվին, աշխատավորների հաշվին։

Այս առաջին հաղթությունը գեռ վերջնական հաղթությունը չե, այս հաղթությունը մեր Հոկտեմբերյան հեղափոխությունը տարել է՝ չտեսնված ծանրություններով ու դժվարություններով, անլուր տանջանքներով և մեր կողմից չեղած մի շարք անհաջին անհաջողություններից և սխալներից հետո։

Ասես՝ կարող եր մի հետաքննող ժողովուրդ հաղթել աշխարհի ամենահզոր և ամենաառաջագն չերկրների իմպերիալիստական պատերազմներին՝ և անհաջողություն ու սխալներ չունենալ։ Մենք չենք վախենում մեր սխալները խոստովանելուց և նրանց վրա զգաստ պետք է նայենք, վոր սովորենք նրանց ուղղել։ Սակայն՝ փաստը մնում է փաստ, — հարյուրավոր և հազարավոր տարիների ընթացքում առաջին անգամ միեկվ վերջ կառավեց և, հակառակ բոլոր դժվարությունների, կատարվում է խոստումը՝ ստրկատերերի միջև ծագած պատերազմին «պատասխանենք» ստրուկների հեղափոխությամբ ընդդեմ բոլոր և բոլոր տեսակի ստրկատերերի։

Մենք այս գործը սկսեցինք։ Իսկապես չերք, ինչ ժամանակամիջոցում, ինչ ազգի պրոլետարներն այս գործը կհասցեն իր վախճանին, — այս երկան հարց չե։ Ելկանն այն է, վոր սառույցը կոտրված է, վոր ճանապարհը բացված է, ուղին ցույց է տրված։

Շարունակեցեք ձեր կեղծավորությունը, բոլոր չերկրների կապիտալիստներ, «պաշտպանեցեք» ճապոնական «հայրենիքը» ամերիկյանից, ամերիկյանը՝ ճապոնականից, ֆրանսիականը՝ անգլիականից և այլն։ 2 և 2½ ինտերնացիոնալների պարոն — ասպետներ, ամբողջ աշխարհի բոլոր մեշանների և ֆիլիստերների հետ միասին շարունակեցեք քնացնել իմպերիալիստ կան պատերազմների դեմ կռվելու միջոցների հարցը՝ նոր «բաղելան» մանիֆեստներով (1912 թ.՝ Բագիլի մանիֆեստի տիպարով), բալցեվիկյան առաջին հեղափոխությունը չերկրազնդի վրա՝ իմպերիալիստական պատերազմներից, իմպերիալիստական հաշտությունից դուրս քաշեց առաջին հարյուր միլիոն մարդկանց։ Հետագա հեղափոխությունները դուրս կքաշեն այդպիսի պատերազմներից և այդպիսի հաշտություններից ամբողջ մարդկությունը։

Մեր վերջին, — թե ամենակարևոր, թե ամենադժվար և թե թե՛ րակատար գործը՝ տնտեսական շինարարությունը, ֆեոդալական

*) Հին ուղղագրությամբ ուստորեն «Мир» նշանակում էր աշխարհ, իսկ «Мир» հաշտություն, խաղաղություն։

քանդված և կապիտալիստական կիսաքանդ շենքերի տեղ բարձրացող՝ նոր, սոցիալիստական շենքը տնտեսական հիմքի վրա դնելն է։ Այս ամենակարևոր և ամենադժվար գործում մենք ունեցել ենք ամենից շատ անհաջողություններ, ամենից շատ սխալներ։ Ասես՝ կարելի չեր առանց անհաջողությունների և առանց սխալների սկսել այսպիսի, համաշխարհային մի նոր գործ։ Բայց մենք այդ գործը սկսեցինք։ Մենք աչք չարունակում ենք։ Հենց այժմ, մեր «տնտեսական նոր քաղաքականությունը» մենք ուղղում ենք մեր մի շարք սխալները, մենք սովորում ենք, թե ինչպես պետք է առանց այդ սխալների շարունակել կառուցել սոցիալիստական շենքը մանր-գլուղացիական չերկրում։

Դժվարություններն անսահման են։ Մենք սովորել ենք պալատ-րել անսահման դժվարությունների դեմ։ Մեր թշնամիները մեզ չերե-վի, դուր տեղ չեն կոչել «ժայռամուտներ» և «վոսկրաբեկ քաղաքակա-նություն» ներկայացուցիչներ։ Սակայն՝ մենք նույնպես սովորեցինք, — գոնե՝ սովորեցինք վորոշ աստիճանի, — նաև մի այլ, հեղափոխու-թյան մեջ անհրաժեշտ արվեստ, — ձկուն լինելու, մեր տակտիկան ա-րագ և կտրուկ փոխել կարողանալու արվեստը, սովորեցինք հաշվի առնել փոխված որչեղտիվ պայմանները՝ ընդունելով այլ ուղի մեր նպատակի համար, չեթե նախորդ ուղին տվյալ ժամանակաշրջանում չերևաց աննպատակահարմար, անկարելի։

Մենք, վոր գտնվում ելինք խանդավառության ալիքի վրա, վոր արթնացրինք ժողովրդական խանդավառություն նախ ընդհանուր քա-ղաքական, ապա և ռազմական ազդարիզում, մենք հույս ունեյինք անմիջապես այդ խանդավառությամբ կենսագործելու նույնքան մեծ տնտեսական խնդիրների իրագործումը (վորքան և մեծ ելին իրագործ-վում թե ընդհանուր քաղաքական ու թե ռազմական խնդիրները)։ Մենք հույս ունեյինք, — կամ թերևս ուղիղ կլինի ասել, — մենք լեն-ինստիտուտում ելինք՝ առանց բավականաչափ հաշվի առնելու՝ պրոլետա-րական պետության անմիջական հրամաններով մանր-գլուղացիական չերկրում կոմունիստներն կարգավորել պետական արտադրությու-նը և արդյունքների պետական բաշխումը։ Կյանքը ցույց տվեց, վոր մենք սխալվել ենք։ Կարիք չեղավ մի շարք անցողիկ աստիճանների, պետական կապիտալիզմի և սոցիալիզմի, վորպեսզի պարսպապահ, — չերկար տարիների աշխատանքով պատրաստենք, — կոմունիզմին անց-նելու գործը։ Վոչ թե անմիջապես խանդավառության վրա, այլ մեծ հեղափոխության ծնած խանդավառության ոգնությամբ, անձնական շահի, անձնական շահագործության, տնտեսական հաշվարկման վրա ներդրություն կրեցեք կառուցելու սկզբում հաստատուն կամրջիկներ, վոր մանր-գլուղացիական չերկրում պետական կապիտալիզմի միջոցով

տանում են դեպի սոցիալիզմ, ալլապես՝ դուք դեպի կոմունիզմ չեք գնա, ալլապես՝ տասնյակ ու տասնյակ միլիոնավոր մարդկանց դուք կոմունիզմին չեք մոտեցնի։ Այս ասաց մեզ կյանքը։ Այս ասաց մեզ հեղափոխության զարգացման որչեղտիվ ընթացքը։

Յեվ մենք, վոր յերեք-չորս տարում վարժվել ենք կտրուկ շրջա-պտույտներ անելու մեջ (յերբ պահանջվում է կտրուկ շրջապտույտ տ-նել), սկսել եւք յեռանդուն, ուշադիր, տոկուն (թեև վոչ բավականա-չափ յեռանդուն, ուշադիր, տոկուն) վարժվել նոր շրջապտույտ անե-լու մեջ, «տնտեսական նոր քաղաքականություն» մեջ։ Պրոլետարա-կան պետությունը պետք է դառնա՝ զգուշ, հոգածու, հմուտ «տնտե-սատեր», որինակելի մեծածախ առևտրական, ալլապես՝ նա անկա-րող կլինի մանր-գլուղացիական չերկրը տնտեսապես վորքի կանգ-նեցնելու, — ալ կերպ չենք կարող կոմունիզմի անցնել ներկայումս, տվյալ պայմաններում, կապիտալիստական (առաջիկա դեռ կապիտա-լիստական) արևմուտքի կողքին։ Մեծածախ առևտրականը, — դա կար-ծես թե մի տնտեսական տիպ է, վորը հեռու յե կոմունիզմից, ինչ-պես չերկրները չերկրից։ Սակայն՝ սա հենց այնպիսի հակասություն-ներից մեկն է, վորը կենդանի կյանքում պետական կապիտալիզմի միջոցով մանր գլուղացիական տնտեսությունից տանում է դեպի սո-ցիալիզմ, անձնական շահագրգռությունը բարձրացնում է արտադրու-թյունը։ Մենք պետք է, ինչ ել վոր լինի, ամենից առաջ բարձրա-ցնենք արտադրությունը։ Մեծածախ առևտուրը տնտեսապես միացը-նում է մանր տնտեսություն ունեցող միլիոնավոր գլուղացիներին, շահագրգռելով նրանց, շաղկապելով նրանց, մոտեցնելով նրանց հետե-լալ աստիճանին, զանազան ձևերով նրանց կապելով և միացնելով հենց արտադրության մեջ։ Մենք արդեն սկսել ենք մեր տնտեսական քաղաքականության անհրաժեշտ վերակառուցումը։

Այդ ընագավառում մենք ունենք մի քանի, ճիշտ է, վոչ մեծ, մասնակի, սակայն, աչնուամենայնիվ, տնկասկածելի հաջողությու-ններ։ Մենք նոր «գիտություն» այս ասպարիզում արդեն ավարտում ենք նախապատրաստական դասարանը։ Լավ և տոկուն սովորելով, գործնական փորձով ստուգելով մեր ամեն մի քայլը, չվախենալով քանիցս սկսած գործը նորից և նորից անելուց, ուշադրությամբ քըն-նելով մեր սխալների նշանակությունը և ուղղելով այդ սխալները՝ մենք կանցնենք նույնպես մյուս դասարանները։ Մենք կանցնենք ամբողջ «կուրսը», թեև համաշխարհային տնտեսության և համաշխար-հային քաղաքականության հանգամանքներն այս գործն ավելի չերկա-րացրին և ավելի դժվարացրին, քան այդ ցանկալի յեր մեզ համար։ Ինչ ել վոր լինի, վորքան և մեծ են անցողիկ շրջանի տանջանքները,

արհավիրքները, սովը, փրկումը, — մենք չենք վհատվի և մեր գործը կհասցնենք մինչև հաղթական փախճանին

(Գրված է 1921 թ հոկտեմբերի 14-ին: Տպված է «Պրավդա»-յում, № 234, 1921 թ. հոկտեմբերի 18-ին):

Ն. Խ. Բուխարին

ԲԱՆԱԳԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ — ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(Մի գրուի Ն. Խ. Բուխարինի՝ «Իմպերիալիզմի դիկտատուրայից դեպի պրոլետարիատի դիկտատուրան» բրյոշուրից):

«Ամբողջ իշխանությունը խորհուրդներին», «Յերկրորդ Համա-գումարի հրավիրումն» — այս լոգունգով եր ահա, վոր բոլորիկները գնում ելին գեմոկրատական խորհրդակցություն և նախապարլամենտ: Պրո-լետարիատի կուսակցությունը շատ լավ եր ըմբռնում, վոր քաղաքա-ցիական պատերազմն օրջեկտիվորեն առնուստիելի չե: Խոշոր բուր-ժուազիան այլևս վոչ մի յեկը չունեն, բացի բացահայտ հարձակումն այն ժողովրդի վրա, վորի դեմ նա պարտիզանական հարատե պատե-րազմ եր մղում: Ի պատասխան պրոլետարիատի լոգունգի՝ Կերենսկին ջախջախում եր Տաշկենտի խորհուրդը, ի պատասխան գլուղացիների ձայնի՝ «նրա» կառավարությունը շարունակում եր հողային կոմիտե-ների ձեռքակալությունները, ի պատասխան յերկաթուղային բանվոր-ների և Դոնի ածխատների վոգբի՝ նրանց «ճնշում» ելին, ի պատաս-խան Ֆինլանդիայի կոզմից իրավունքների պահանջի՝ պատժական եքսպեդիցիաներ ելին ուղարկում և հեռացնում հեղափոխական գորա-մասերը, ի պատասխան բանվորների պահանջի բոլշևիկներին աղատելու մասին՝ ազատում ելին բանդապետներին և ժանդարմներին, և վերջա-պես ի պատասխան բովանդակ ժողովրդի միհամուռ կոչի «կորչեն դա-վաճան — կադետները», Կերենսկին նշանակեց կադետական մինիստրու-թյուն՝ լիվրեյավոր լակեյներով նախկին սոցիալիստներից: Բոլոր այս մերկացումներից, կադետների կոզմից բանակը հալածելուց, կադետա-կան խռովարարության ու դավաճանության պարտությունից, Ռիգայի տակ դավաճանելուց, զարհուրելի պրովակացիոն խաղից հետո, վորի ամբողջ հույսն ու ապավինն եր մահվան պատիժը, — Կերենսկին մար-տահրավեր ե անում, նշանակելով մինիստրության մեջ խայտառակ դավաճաններին:

«Բաղաբացիական պատերազմի կառավարություն» — այս անու-նով է մտել պատմություն մեջ Ռուսական հանրապետության նոր կա-ռավարությունը: Կոնովալովը — Մոսկվայի խոշորագույն արդյունա-բերողը, համառուսական սարքագծի գաղափարախոսն և պրակտիկը — առևտրի և արդյունաբերության մինիստր ե և պրեյմերի տեղակալ: Արդյոք այժմ լոկաուսդիկներին վերջ չի տրվի: Տրեսյակովը, նույնպես արդյունաբերող և բիրժևիկ, տեքստիլ աշտոնի մենաշնորհյալներից մեկը — տնտեսական խորհրդի նախագահն ե գառնում: Արդյոք այժմ չի վերա-նալու ընդհանուր քաղաքական Պետական վերանախիչ և նշանակված Սմիրնովը, այն Սմիրնովը, վորն իր գործարանում վոչ միայն բանվոր-ներին եր պահում սովափարձով, զրկելով նրանց կրակից և ջրից, այլ և իր ձիաներին եր սովամահ անում, վորպեսզի հետագայում հնարա-վորություն ունենա քաղաքական նկատառումներով փակել իր ձեռ-նարկությունը: Արդյոք այժմ բավականաչափ վերահսկողություն չի լինի պետական ֆինանսների վրա: Միթե այդ մարդակերը կարգի չի բերի պետական քաղաքական տնտեսությունը: Արտաքին գործերի մի-նիստր ե միացել Տրեսյակովին: Բայց միթե նա իր ամենաբուռն ջանա-սիրությունն ի հայտ չեր բերել արդեն խաղաղության գործում: Յե-ճեմսովը նշանակված ե լիազոր մինիստր և Շվեյցարիայի արտակարգ պեսպան: Մակայն, միթե նա արդեն չի հանձնարարել իրեն վորպես անգլիական իմպերիալիզմի լավագույն բարեկամը: Յեմ արդյոք այս-րանն արդեն լավագույն յերաշխիքը չե խաղաղության և ազատու-թյան ապահովության համար: Կիսկիճը, վորի հետ Մոսկվայի խոր-հուրդները հրաժարվեցին վոր և ե գործ ունենալուց, հաստատված ե խնամակալության մինիստրի պաշտոնում: Ո՞վ կարող ե կասկածել, վոր նա կկատարի իր պարտքը հեղափոխության հանդեպ...

«Սոցիալիստական» մշուշությունը — «Ռուսկոյե Սլովո»-յի աշխա-տակից Բերնացկին, «բանվոր» Գվոզդյովը, փաստաբան Մատանտովիչը և այլք — *dii minores*, — վորոնք տեղավորվել ելին վառ իմպերիալիստա-կան կադետ-կարնյովյան կորիզի շուրջը, — նախապես արդեն դատա-պարտված եր կանգնելու «առևտրի և արդյունաբերության» հաղթա-կան կառքի հետեղմ: Ծիշտ ե, կարինետը ստացել եր պարոն Բյուլե-նենի հավանությունը և դեռ ավելին՝ անգլո-ֆրանսիական բարեկամ-ները ուղղակի անթույլատրելի քաղաքական կորզումով և շանտաժով ելին զբաղված, վորպեսզի իրենց այդ նոր կիսագաղութում կառավա-րության ցանկալի կազմ ունենան, և այդ կառավարությունը ծնվեց միայն ռուսական բռնապարտությունների և նորին մեծության Գեորգ թագավորի դեսպանի միջև խորհրդավոր բանակցություններից հետո: Մակայն, ռուս ժողովրդի վիճակը զբանից չեր թեթևանում. նոր կա-րինետի օրջեկտիվ դերը կարող եր միայն մեկը լինել. — այդ՝ Բաղաբա-

ցիական պատերազմի պրոփոկացիան եւ: ժամանակավոր կառավարութեան պարոնները հույս ունեին այդ պահին, թե նրանց ոժանդակ կը կանգնեն քաղքենիները և այն միջակները, վորոնք զեմոկրատական խորհրդակցութեան ժամանակ միավորվել էին կոոպերատորների քաղաքական հեղեմոնիայի ներքո:

«Յես պետք է պարզ ասեմ,—գրում էր բանկա—զեմոկրատական «Իեն» թերթի խորագրուն աշխատակիցներէջ մեկը,—վոր ըստ ամենայնի ընդունելով կոոպերացիայի քաղաքական պլատֆորմը, անկարելի չէ հասնել և չգալ, վոր այստեղից առաջ և շարժվելու մարտիկների ամբողջ մի մասսա, վոր ծարավի չէ սեփանշ տալու այն բոլոր խավար և շար գործերի համար, վորոնց հեղինակն է բալլընիզմը բառիս ամենալայն իմաստով: Յեվ յես համոզված եմ՝ այդ սոսկ լեզվամառս չի լինելու»: Իսկ կերենսկու, Սովինկովի և ընկ. կիսապաշտոնական «Վոլյա նարոդան» ահագանգ եր խփում և բալլընիզմի դեմ պայքարի չեղնելու գրոշակի տակ եր հրավիրում, պնդելով, թե «համաձայնողականութեանն այլևս տեղ չկա» և վոր «զեմոկրատիան պետք է միավորվի և յերկաթե ձեռքով հարկադրի բալլընիզմին յենթարկվել իր կամքին»:

Խանութպանի, փաստարանի և կոոպերատորի աճող կատաղութեան մեջ արտայայտվում էր սեփականատիրական սարսափը վերահաս կոմունիզմի հանդեպ: Այդ սարսափը գնչուական սառն քրտինք եր ըհրում նրանց վրա, ահաբեկված յերևակալութեան աչքին արդեն յերևում էին կոոպուտների, սպանութեանների, ընդհանուր «բաժանքի», շարքերի և «կոտորածների» սարսափները:

Միջակ բուրժուան, չնայած իր վորոքմելի և խանութպանի ճարպոտ սեպիլիզմին, ըստ էություն յերբեք սեպիլիստ չի լինում: Յեվ չընայած իր զգոն բանականութեան՝ նա միշտ յերկու զգացմունքի ազդեցութեան տակ է,—սարսափի, յերբ իր գործը վատ է և վրիժառութեան՝ յերբ «ինքը» հաղթել է: Նա շղթայում է իր բնակարանի դուռը և բարձի տակ և խոթում իր գրամաքսակը, յերբ այդ ընավ անհրաժեշտ էլ չի՝ անգամ իսկ իր շահերի տեսակետից և դառնում է լռակցաց, վորպես սքեմավոր, հեշտասիրութեամբ կարգալով իր գաղափարախոսների ճշացող հոգվածները, յերբ նրան դեռ ևս խոսքի լիակատար ազատութեան և տրված: Բայց նա իր ձեռնափայտով է հանում պարսպած թշնամիների աչքերը և պատրաստ է իր կնոջն, աղջկան և քրոջն ել բերել, վորպեսզի նրանք ևս տեսնեն իր քաղաքական հակառակորդների մահապառիժը: Նրա ստորութեանն ու վրիժաժարավութեանը ուղիղ հարաբերական են նրա վախկոտութեան վերաբերմամբ:

Ինչքան էլ վոր չափազանցում եր այդ բուրժուան գալիք «սարսափները», սակայն իր գրեթե գազանային բնազդով գուշակում եր մարտի անխուսափելիութեանը: Այդ պահին միանգամայն գիտակցորեն

դրա համար պատրաստութեաններ եր տեսնում Քիեմսական կապիսալն՝ իր բոլոր ոժանդակ ուժերով հանդերձ: Դասակարգային ճրնշման սուր կերպարանք ստանալն այդ կողմից ծավալվում եր մեկ անգամից բոլոր ուղղութեաններով: Տեսնական ասպարիզում՝ սիստեմատիկորեն և համառ կերպով կիրարկվում եր Բլարուշինսկու ծրագիրը «բռնիլ բանվորներին սովի վոսկրացած ձեռքով»: «Քողավորված» և «բացահայտ» լուսուտաները հաճախակի յերևույթ էին դառնում: Արգչունաբերութեան կատարյալ քայքայման և բովանդակ անտեսութեան կաղմալուծման պայմաններում «առևտրա-արդյունաբերական գոսակարգը» հմտորեն չուղ եր լցնում կրակի վրա իր գիտակցորեն հաշվառած սարսափի միջոցով, և այդ սարսափն աճում եր և աճում: Պարոնայք միևնույնները վորոշեցին, վերջապես, կենտրոնացնել այդ գործը և կազմակերպել կաղմալուծումը, վեր հանելով սարսափը մինչև պետական-ազգային կեռակառակի սկզբունքային բարձունքները: Հատկապես այդ, այսինքն առանց այդ ել վոշ նվազ գործադրկութեան և սովի արհեստական կերպով աճեցնելու նպատակով եր, վոր Սմիրնովներն ու կոնովալովները մեծագույն լեռանդով սկսեցին «ուսգրուկկայի» յենթարկել նախ Պետերբուրգի (այդ ամենակարմիր և հետևաբար՝ ամենավտանգավոր կետն եր), իսկ հետո հաև Մոսկվայի ուայոնները: Մինչդեռ առևտրականները և արդյունաբերողները գործում էին գործարաններում, ֆինանսական հաստատութեաններն էլ ուժեղացված չափով սկսեցին կիրառել նույն քաղաքականութեանը «նոր» դուժանների, մանավանդ բալլընիզական դուժանների վերաբերմամբ, մերժելով նրանց վորեւ վարկեր տալու մեջ: Յեվ իրոք, հնարավոր եր արդյոք հորինել մի ուրիշ ավելի «համազգային մի գործ», քան արդեն իսկ ստանած ողակի դանդաղորեն սեղմելը:

Քաղաքականությունն էլ գալիս եր եկոնոմիկան լրացնելու: Յեվ ամենից առաջ—«միջազգային» քաղաքականութեանը: Խանդավառ «հայրենասերներն» արդեն իսկ պատրաստ էին ինչ տեսակ էլ ուզում և հաշտութեան կնքել, փոխարենն ստանալով բանվորների և գյուղացիների խաղաղացումն: Արտասահանյան խորհրդավոր խորհրդակցութեանները, վորոնց մասին տեղեկութեաններ էին ծորում թերթերի էջերը, այդ հասունացած պահանջն էին արտահայտում: Պետերբուրգը հանձնելու ճախապատրաստությունը՝ միաժամանակ ուժակոծութեան յենթարկելով այդպիսին գերմանական թնդանոթներով, — գարձավ ուսական բուրժուաների գաղտնի ցանկութեանը:

Վերջապես, գինված հարվածներ էին պատրաստվում հաև ներսից: Ամենուրեք սկսեցին զորահավաքվել կարնիլովյան որերին ջախջախված և առավելապես ամուր Դոնի շրջանում խրամատված կաղմակերպութեանները: Ռուսական այս վանգեյալից է, վոր պետք է սկը-

ավեր խաչակրաց արշավանքը ուստի ժողովրդի հեղափոխություն չէր։

Բաճվոր դասակարգն իր հերթին լարում էր բոլոր ուժերը, պատրաստվելով պաշտպանությունից անցնել հարձակման։ Բանվորական լայն մասսաների համար հանուն իշխանության մղվելիք պայքարի անհրաժեշտությունը դառնում էր առավել շոշափելի, քան չեղբեն։ Տնտեսական այն հանրադրւները, վորոնց միջոցով պրոլետարիատը փորձում էր պատասխանել կապիտալի գրոհին, չեղին ողնում։ Այգ-պիսիները պարզապես պրովոկացիայի էին յենթարկվում կապիտալի կողմից, վորն այդ պայքարի գործիքը լոկալությունների չեղ վերածում է այն եւ կատարվող բանվորների ձեռքով։ Իշխանությունը թորհուրդներ էր բխանությունը թորհուրդների Համագումարին։ Կառավարությունը տապալումն,—այս լուսնուգներն այն աստիճան ժողովրդական էին դարձել, վոր այլևս վորեւ բացառություններ կարիք չկար։

Վյուզացիությունն ավելի և ավելի չեղ գործընթացում իր ակտիվությունը, զիմելով բացահայտ ապստամբությունների կալվածատերերի դեմ։ Նրան չեղին կարող այլևս հաջողվել վորեւ ճնշումներն ու ռեպրեսիաները, վոր այնպիսի առատությունը տեղում էին նրա զլխին։ Ազնվածամբ հասունանում էր շլացուցիչ արագությունը...

Նոր կառավարության հրապարակած ղեկավարացիան լիովին հաստատում էր ամենավատթար յերկուդները — պատերազմ մղել՝ «միաբանված դաշակիցների հետ», «կարգավորել» հողային հարաբերությունները՝ «առանց խախտելու ներկայիս գոյություն ունեցող հողատիրության իրավունքները», բարձրացնել անուղղակի հարկերը, վերջապես, «ամենավճռական, հետևողական, սխտեմատիկ պայքարը մղել հակահեղափոխության և անարխիայի բոլոր տեսակի արտահայտությունների դեմ,—այսպես էր ահա «ծրագիրը»։ Պարզ լեզվով թարգմանած այդ նշանակում էր.—միջազգային ավազակություն, կալվածատերերի պաշտպանություն, մասսաների կողոպուտ և հեղափոխությունը խեղդել։ Այդպես պետք է լիներ և հենց այդպես էլ յեղավ քաղաքացիական պատերազմի կառավարության ծրագիրը։ Ինչ վերաբերում է **Իսթանուլայան կառուցվածքի** խնդրին, ապա այդպիսին «լուծված» էր արդեն «Ռուսաստանի հանրապետության ժամանակավոր խորհրդի կանոնադրությամբ», վոր հրատարակված էր քաղաքացի Կոնովալովի ստորագրությամբ։ Հենց այս վերջինս էր վիճակված տնորինել նախապարլամենտի բախտը, վորն իր հերթին պիտի տնորիներ Կոնովալովի բախտը։ «Կանոնադրության» մեջ զարմանալի պարզությամբ դրսևորվեց սոցիալ-պատրիոտ դավաճանների դերը. ինչ վոր կամենում էին՝ նրանք ստացան։ Դեմոկրատիայի առանց այն եւ պոչատ իրավունքները փեռաճան էին արված ամեն կողմից։ «Հանրապետության խորհրդին» բարենաճորեն թույլատրված էր «քննության առնել այն որենսդրական

դեմագոգությունները, վորոնց վերաբերմամբ ժամանակավոր կառավարությունն անհրաժեշտ կհամարի ստանալու խորհրդի լեգիտիացությունը»։ — այսպես դուրս չեղավ վերջ ի վերջո կերենակու այդ պալատական զիմանի պատվելի ֆունկցիան։

Հանրապետության որինախորհրդակցական խորհուրդը, վոր պետք է միաժամանակ մի պատվար լիներ թե հիմնագիր ժողովի (Լվովը, Կարաբուլովը և այլն արդեն իսկ պաղպղում էին բնտրությունները մեկեւ հետաձգելու անհրաժեշտության մասին) և թե բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների դեմ,— ըստ էության ասած իսկույն և լեթ պայքեցվեց պրոլետարիատի կուսակցության կողմից։ Բալլետիկները հեռացան այդ «վերափոխված» նախապարլամենտից, և նա իսկույն և լեթ կորցրեց այն կենտրոնի նշանակությունը, վորի մեջ արտացոլվում էր դասակարգային պայքարի բովանդակ լարվածությունը։

Պրոլետարիատն առավել տոկունությունը գորահավաքի յենթարկեց խորհուրդների ուժերը։ Բանակի, նավատորմի և Ֆինլանդիայի բանվորների մարզային կոմիտեն մի սուր կողով հանդես չեկավ ընդդեմ կառավարության, վորը հակահեղափոխական զորքեր էր ուղարկում Ֆինլանդիա։ Սկսվեց մի շարք մարզային և գորական համագումարներ, նախապատրաստությունը։ Տենդային յեղումն սկսվեց Համառուսական Համագումար հրավիրելու աշխատանքի ասպարիզում։ Համագումարի, վորն իր ժամանակին-մասսաների ուժեղ ճնշման ներքո— ~~ձորագետե~~ վեր հաս կենտրոնական Կոմիտեի կողմից։ Քաղաքական կյանքի կեղակետն էր դառնում այսպիսով վե՛ր թե վտորմելի հանրապետության խորհուրդը, այլ ուստական հեղափոխության գայիք համագումարը։ Զորահավաքման այդ աշխատանքի կենտրոնում կանգնած էր Պետերբուրգի խորհուրդը, վորը գեմոնսարատիվ կերպով իր նախագահը բնտրեց Տրոցկուն—պրոլետարական ապստամբության ուղի ամենապիստեղծն արիւրունին։

Նույն այդ պահին հին խորհուրդների բյուրոկրատիայի վերնաշերտերը, նրանք, վոր դեռևս գեմոկրատական խորհրդակցության ժամանակ հետ էին քաշվում խորհուրդներից, զգալով, վոր այնտեղ վտարելի առկա հողն այլևս կորել է, այժմ վերջնականապես ամրապնդելին իրենց դավաճանությունը։ Խորհուրդների պաշտոնական որդանք սկսեց պայքար մղել այդ խորհուրդները վոչնպացնելու համար։ Խորհուրդների ժամանակավոր կազմակերպությունը,—գրում էր «Բզվետիան», — մենք (1) ուզում ենք փոխարինել կյանքի պետական և տեղաբնական կառուցվածքի մշտական, կատարյալ և բազմակողմանի կազմակերպությունը։ Յերբ վոր ինքնակալությունն ընկավ և նրա հետ միասին ամբողջ բյուրոկրատական հանրակարգը, մենք (1) կառուցի-

ցինք պատգամափորական խորհուրդները, վորպես ժամանակավոր բարաքներ, վորտեղ ապաստարան կարող եր գտնել զեմոկրատիան: Այժմ բարաքների փոխարեն կառուցանվում և նոր հանրակարգի բարաքներ շինութլունը և, բնական և, վոր մարդիկ աստիճանաբար հեռանում են բարաքներից առավել հարմարավոր շինութլունները՝ ինչ չափով վոր ալլալիսներն որ-ավուր կառուցանվում են հարկը հարկի հետեից»: Անապատան պաշտպանողականները վորոշեցին փոխադրվել «ավելի հարմարավոր շինութլունները» նոր բուլլզիւնյան դումայում, վորին իրավունք եր տրված «հարցեր տալ» անվերահսկելի կլիկալին... Այս-քան ցածր էլին ընկել «գեմոկրատներն» ու «սոցիալիստները»: Սակայն նրանք վոչ միայն ավետում էլին իրենց հրաժարականը, — նրանք և կատարի պաշար սկսեցին հոկտեմբերի 20-ին նշանակած համագումարը պալթեցնելու նպատակով: Քաղաքացի Դանը, — համապետական-նութլան, կեղծափորութլան և բեմի հետեում կատարվող գործարքների ալլ ձեր աղվեսը, — առաջինն եր, վոր ԿԳԿ-ումի բլուրնում հարց դրեց համագումարը չկայացնելու մասին: Այդ չհաջողվեց: Սակայն, ԿԳԿ-ումի բլուր գործակալները տեղերում, բլուր մենշևիկները և ալ ես-երները ձգտում էլին պալթեցնել համագումարի բացումը կամ, նվազագույն դեպքում, վարկաբեկել ալլալիսին: «Համագումարի միջոցով պալթեցնում են հիմնագիր ժողովը», «համագումարը հարկավոր չէ վորովհետեւ «առաջիմ» կա հանրապետութլան խորհուրդը», «համագումարը վոչ ալլ ինչ և, բաց չեթե բայլելիկական գեմադողիս, վորը նետում և գեմոկրատիային հակահեղափոխութլան գիրկը» և ալլն, և ալլն, — այսպես էլին ծղրտում ամենուրեք նրանք, ովքեր ալլալ վոչ մի տեղ չունեին սոցիալական պայքարների փոթորիկներում նոր կյանքի կոչված բանվորների և գյուղացիների դասակարգային մեծ կազմակերպութլունների մեջ: Պաշտպանողականների կամպանիան համագումարի գեմ, սակայն, սկզբից իսկ արդեն կատարյալ պարտութլան եր մատնված դասակարգային որավուր ծավալվող պայքարի բովանդակ բնթացքից: Կալվածատերերը, վաճառականները, արդյունաբերողները արդեն հեռագրներով էլին աղերսում կառավարութլանը հրետանայինն զինվորական մասեր ուղարկելու՝ գյուղացիներին ճնշելու նպատակով: Կառավարութլունը կատարում եր նրանց խնդիրները շրջաբերականներով ներշնչում եր իր կոմիսարներին գործել «որենքի ամբողջ խստութլամբ»: Պետերբուրգում նա ամեն կողմից «հարվածող գործառն եր» և յունկերներ եր հավաքել: Տաշկենտը և մանափանդ Տաշկենտի ձախ-եսերական խորհուրդը Կերենսկի-Կոնովալովի նվաճողական ձգտումների մշտական առարկան էլին դարձել, ֆինների գեմ նույն բռնութլան կամպանիան եր մղվում, և անգամ իսկ մինիստրներից «ամենադեմոկրատիկը», — Վերխովսկին, գաղտնի հրամաններ եր

արձակում մարզային կոմիտեի կոմիսարներին ձերբակալելու մասին՝ չեթե նրանք «հակառակութլուն» ցույց տալու լինեն: Պետական վերահսկիչ և սարտամանիկ Մանրնովը հանդես եր չեկել արդեն խորհուրդների գեմ ուղղված անքողարկ հարձակումով, մշակելով վերաստու գման մի նախագիծ, կարծես թե ալլ փոստիկանական մի քաղաքամաս եր հերքին գործերի մինիստրութլան ազնիթեր: Մինկում փակեցին ըստ ամենանի ժողովրդական «Մոլոտը», լատերների մոտ փակեցին «Վոլնը Սարելովը», վորպես խրատ բանվոր դասակարգին մինիստրական գիվանների գաղտնարաններում արդեն մշակում էլին պարտադիր արբիտրաժի, այսինքն գործադուլի գեմ ուղղված որենքը: Հակահեղափոխական բանվաները գրեթե բացահայտ հակահրեշական ջարդարար պրոպագանդ սկսեցին, վորի գեմ կառավարութլանը և վոչ մի միջոց չեր գտնում թաց միկնույն ժամանակ նա լոկլայն հավանութլուն տվեց ուղու-գինվորներին գնդակահարութլանը ֆրանսիայում, վորի մասին լուրերը հասան նաև հայերենի, իսկ հետո Տերեշենկույի միջոցով հրաժարական տվեց Սկոբելին, վորին ԿԳԿ-ումը վոլջույնի չեր ուղարկել գաշնակից զինվանագետների մոտ՝ ավելի քան չափավոր հրահանգով, — նույնիսկ նա արդեն անհամապատասխան եր թվում Տերեշենկո-Մակկակով-Ալեքսեևի տարուկ կոմպանիայի համար...

Իսկ զրան զուգընթաց յերկաթուղային բանվորները հաղթանակ են տանում, ընդհանուր գործադուլը Բազվում կոտրում և կապիտալի դիմադրութլունը, Մոսկվայի ռալոնական գումաների բնտրութլունները փալլուն հաղթանակ են բերում բայլելիկներին, բարձրացնելով նրանց ձայները առկուր 11-ից մինչև 50-ը: Բալթիկ նավատորմի համագումարը ամբողջապես ձայն և տալիս հոգուա բայլելիկների, ամբողջ Մոսկովյան շրջանը հուզվում և և լեռում, գործադուլ են հայտարարում կաշեգործները, պատրաստվում են նույնն անել քաղաքային ծառայողները, փայտադործները, մանածագործները, մետաղագործները, խորհուրդներում տեղի չե ունենում հնի արմատական ջախջախումն, վերջնորութլունները ամենուր բացասապես բայլելիկներ են տալիս, տեղտեղ բանվորներն արդեն փողոց են դուրս գալիս և ահա՛նշում են, վոր խորհուրդները խոսքից գործի անցնեն և վերջապես, Յիմմերվալդի կոնֆերանսը և գեմաճական ճավառսինների ապաստբուլայուր նոր հուլսեր են բերում նաև իրավատների ալն կողմում կատարվող շարժումների մասին:

Սեպտեմբերի 30-ին լուր և գալիս, վոր գերմանացիները գրավել են եգեղը: Անուհետև ստացվում են ծովային կալվների մանրամասնութլունները, — մանրամասնութլուններ, վորոնք մի նոր և հրեշավոր միջազգային պոպակացիա են մերկացնում ռազմաճակատում:

Պարզվում է, վար անգլիական նավատորմն անխռով և հանդիսա-
կերպով թողնում էր, վոր հերոսաբար կավի գնացող Բալթիկ Կարմիր
նավատորմը խորտակվի: Պարզվում է, վոր կառավարությունն ինքն
էր հրաման արձակել Պետերբուրգի ճանապարհը պաշտպանող թնդա-
նոթները տեղահան անելու մասին («Պրոլետարական գործի» № 6-րդը,
Կրոնշտադ): Պարզվում է, վոր Մոսկովյան գործիչներին փոքր խորհր-
դակցության պարագլուխ Ռոձյանկոն, վոր հենց նոր էր մերկացվել
յերկաթաձողերի խորդախորեն կատարված մատակարարությունների
մեջ, իր զեկուցմամբ զրեթե պահանջում էր հանձնել Պետերբուրգն ու
Կրոնշտադը և ցնծում էր գնդակահարություններից և այն «կարգ ու
կանոնից», վոր հաստատել էին Ռիպպոլով Վիլհելմի շուքմանները:
Բայց Ռիպպոլովն զեռ քիչ է: Թող վոչնչացնեն «անբարոյակա-
նայած նավատորմը»: Թող կործանվի Կրոնշտադը: Կորչի Պետեր-
բուրգը: Կառավարության լողունգը. — «Դեպի Մոսկվա» ամենքի հա-
մար էլ վարձավ պարզ և աներկբա. նրանք փախչում էին հեղափո-
խությունից՝ այդ դավաճանները: Նրանք այնպես էին փախուստի
գլխում, ինչպես մի ժամանակ Տլերն էր փախչում Փարիզից դեպի
Վերսալ: Յեվ վոր խնդիրը վերաբերում էր վոչ զերմանական վտան-
գին, այդ մասին հազորդեց վոչ այլ վոր, բայց լեթե ինքը՝ գեներալ
Ալեքսեևը:

Այժմ պարզվեց նոր դավադրության ամբողջ ծավալը: Պաշին-
սկին Պետերբուրգում պետք է հաշիվ տեսնի բանվորների հետ, սրե-
լով գործադրությունը և «գառարկելով» քաղաքը և այսպես վերա-
ծելով կազմակերպված պրոլետարիատը քրոնիկական լյուսպենների,
վորոնք անգոր են այլևս վորեւ գրոհ տալու Հեղափոխության կենտ-
րոնները — Ֆինլանդիան, Պիտերը, Կրոնշտադը, նավատորմը — թեղ
մատթարագույն դեպքում կործանվեն իրանց բոլոր անիծյալ խոր-
հուրդներով և կոմիտեներով, զոհ գնալով գերմանական թնդանոթնե-
րի կրակին՝ «գաշնակիցներին» բարեհաճ չեզոքություն պայմաններում:
Կառավարությունը կը կազմակերպվի Մոսկվայում, փոքր խորհրդակ-
ցության կողքին, Կոնստանտինոպոլի և Տրեպոլսկոյների հայրենիքում,
ի՞նչ վրա կը կազմակերպվի «հավատարիմ և նվիրված» զորքանա-
կը: — այս էր ահա ուստական կապիտալի վերջին և ճակատագրորեն
հուսահատական խոշոր բախտախաղը...

Հակահեղափոխության ուղղման ուժերն իրոք վոր քստ ամե-
նայնի գորահավաքվեցին: Կազակ գեներալները ընդհանուր գինվորական
ծառայություն սահմանեցին, ամրացրին ստանիցաները, զինվում էին
գնդացիներով և արգեն սկսում էին իրանց գործառններն ուղարկել
Կենտրոնական Ռուսաստանը, սպաները գաղտնի կերպով կազմակեր-
պել էին սպանների հավաքական գործառններ, լուսկերները նորից,
ինչպես կարնիլովյան որերին, կանգնում էին գեներալ Կալի: Պրոֆեսիո-
նալ-գինվորականները հպարտորեն առում էին, վոր այս անգամ վոչ
թե կարնիլովյան «գրչափորձ» է տեղի ունենալու, այլ շատ ավելի
նշանավոր մի բան:

Կառավարությունը դեպի ձախ մի ժեստ արեց, ցրելով Պետական
Դոման սոսկ նրա համար, վոր կարողանա շարունակել իր ընդհան-
րապես ոչ քաղաքականությունը: Ըստ կրթության նա վերածվեց կա-
դակ-կազմական հակահեղափոխության զեկավար կենտրոնի: Նա բա-

ցակալում էր — «որհնչալ է նա, ով դալիս է հանուն Կարնիլովի»:
քստ ամենայնի պրովակացիայի լենթարկելով «բալլիկներին բունտը»:

Պրոլետարիատի կուսակցությունը ըմբռնում էր կացությունը լըր-
ջությունը: Այժմ արգեն խոսքը ցուցների կամ կիսացուցների մասին
չէր: Մասսաները պատրաստություններ էին տեսնում իսկական և
վոչ թե կատակի կռիվ մղելու համար: Հասարակ ցուցի նրանք արգեն
չեցին ել դնալ: Բոլորն էլ շատ լավ հասկանում էին, վոր խոսքերի,
պիտանցիայի, պրոպագանդի և նախապատրաստությունների ժամա-
նակն արգեն անցել է. պետք էր դործել, հակառակ պարագային՝ մեկ
